Azg
Ազգ
26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008 ՈՒՐԲԱԹ 241 (4135)

Թուրքիայի, Ադրբեջանի եւ Հայաստանի արտգործնախարարները քննարկելու են դարաբաղյան հարցը

Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Խուլուսի Գըլըջը այսօր Բաքվում լրագրողներին հայտարարել է, որ Թուրքիայի, Ադրբեջանի եւ Հայաստանի արտգործնախարարների միջեւ եկող տարվա սկզբին կայանալիք բանակցությունների գլխավոր թեման կդառնա դարաբաղյան հակամարտությունը:

Ալի Բաբաջանը, Էլմար Մամեդյարովը եւ Էդվարդ Նալբանդյանը կհանդիպեն հունվար-փետրվարին, ասել է դեսպանը եւ հավելել, որ նախարարները կքննարկեն նաեւ «Կովկասյան պլատֆորմը», որն առաջարկել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, հաղորդում է «Արմենպրեսը»:

Նոր ատոմակայանի կառուցումը՝ հավանաբար 2011-ի սկզբին

Հայաստանում նոր ատոմակայանի կառուցմանն առնչվող երկու կարեւոր փաստաթղթեր երեկ ընդունվեցին կառավարությունում: Դրանց մանրամասները լրագրողներին ներկայացրեց էներգետիկայի փոխնախարար Արեգ Գալստյանը: Դրանցից առաջինը Հայաստանում նոր ատոմային բլոկի կառուցման մասին օրենքի նախագիծն էր, որն Ազգային Ժողովի կողմից ընդունվելուց հետո, հնարավորություն է տալիս օրենքով սկսել նոր ատոմակայանի կառուցումը: Ըստ փոխնախարարի, օրենքով սահմանվեց, որ կարող ենք սկսել կառուցման գործընթացը նույն հարթակում, որտեղ ունենք գործող ատոմային էներգաբլոկ: Արեգ Գալստյանը հիշեցրեց, որ նոր ատոմակայանի տեխնիկատնտեսական հիմնավորումն այս տարի մշակվել է, որին աջակցել են ՄԱԳԱՏԷ-ի եւ ամերիկյան հայտնի մասնագետներ: Այժմ էլ երկրաբանական եւ երկրաֆիզիկական լրացուցիչ ուսումնասիրություններ պետք է կատարվեն:



Տես էջ 2

Արտահերթում՝ օրենքներ

Երեկ ահա այսպիսի դատարկ դահլիճում էր քննարկվում այն կարեւորագույն օրենքը, որով խլագիտղակի (ավագանու ընտրված 65 անդամների կազմից առավելագույն ձայներ հավաքած կուսակցության առաջադրմամբ) ընտրություններով եկող տարի Երեւանի քաղաքապետ ենք ունենալու: Բայց դա կապ չունի, այդ օրենքը, վստահ ենք, նույնչափ արագ կընդունվի, ինչպես եւ մյուս «հրատապները»:

Երեկ առավոտյան Ազգային Ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց այն հարկային փաթեթը, որը դեռ նախորդ օրվանից էր քննարկվում: ԲՀԿ-ն դեմ քվեարկեց փաթեթի բաղադրիչ «Հաստատագրված վճարների մասին» օրենքում, ինչպես նաեւ «Արտոնավճարների մասին» եւ հարակից օրենքներում կատարվող փոփոխություններին: «Բարգավաճ Հայաստան» խմբակցության երկու տասնյակին մոտեցող «դեմերը» չխանգարեցին այն փոփոխությունների ընդունմանը, որոնք, ըստ Գ. Ծառուկյանի, փոքր բիզնեսին էին խփելու:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Արդարադատությունը փոքրամասնության համար չէ

Շիրինյանը հեռակա դատապարտվեց 17 տարվա ազատազրկման

Ձավախքում ընթացող որոշ դատավարություններ առանց որեւէ չափազանցության քաղաքական բնույթ են կրում, ու դրանց առնչությամբ անգամ դատարանի մակարդակով արտառ դեպքերը ուղղակի ցցուն ու ակնբախ են:

Երեկ Ախալքալաքում տեղի դատարանը «Միասնական Ձավախք» շարժման ակտիվիստներից Գուրգեն Շիրինյանի, նրա հոր եւ հորքրոջ գործի քննությունն իբր ավարտել ու արձակել դատավճիռը: Իսկ դատավճռով դատավարությունից բացակայած Գուրգեն Շիրինյանին հեռակա դատապարտել են 17 տարվա ազատազրկման, իսկ նրա հորն ու հորքրոջը՝ 2 տարի պայմանական, 2000-ական լարի (մոտ 1300 դոլար) գրավի դիմաց ազատ արձակվելու պայմանով:

«Ազգի» տեղեկություններով, դեկտեմբերի 24-25-ին դատական նիստի ընթացքում կրկին անգամ դատարանը հաշվի չի առել այն ակնհայտ ապացույցներն ու նյութերը, որոնք վկայում են Շիրինյանի անմեղության մասին: Հիշեցնենք, որ Գուրգեն Շիրինյանը մեղադրվում էր ոստիկանի սպանության եւ զենքի ապօրինի պահպանման մեջ, իսկ նրա հայրն ու հորքույրը՝ սուտ վկայություն տալու, զենք ու զինամթերք ձեռք բերելու եւ պահելու, նաեւ Գուրգենի կողմից հանցագործության դատաստման մասին իմանալու եւ չհայտնելու հոդվածներով:

Զավեշտական է, որ Գուրգեն Շիրինյանին վրացական դատարանը դատապարտել է միայն ոստիկանների ցուցմունքների հիման վրա, որոնք Շիրինյանի ներկայացրած նյութերով լի են հակասություններով, իսկ սպանության իրագործումը Շիրինյանենց դռան հետեւից կրակոցով անելու ամենացայտուն ապացույցի որեւէ հետք անգամ չկա նշված դռան վրա: Բացի այդ, դատարանում այդպես էլ քննության առարկա չի դարձել այն հանգամանքը, որ իբր Շիրինյանի կողմից սպանված ոստիկան Արթուր Բերուջանյանին իրենք ոստիկանները թողել են անխնամ, ու նա մահացել է արյունահոսությունից:

Դատարանը արհամարհել է ոչ միայն այդ ապացույցները, այլեւ զուտ Գուրգեն Շիրինյանի առնչությամբ սպանության մեղադրանքը ապացուցված համարելու պատճառով կեղծ վկայություն տալու մեջ մեղադրանքով էլ դատապարտել է Շիրինյանի հորն ու հորքրոջը:

Ի հավելումն այս ամենի, Շիրինյանի պաշտպանը չի կարող բողոքարկել հենց Գուրգենի առնչությամբ դատարանի մեղադրական որոշումը, քանի որ Վրաստանի օրենսդրության համաձայն, միայն Գուրգեն Շիրինյանը ինքը կարող է բողոքարկել իր նկատմամբ մեղադրական դատավճիռը: Իսկ, քանի որ Շիրինյանը գտնվում է փախուստի մեջ, ուրեմն չի լինի բողոքարկում:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մոնիտորինգ Ձավախքում

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը նամակ է հղել վրաց գործընկերոջը, մտահոգություն հայտնելով, որ «Միասնական Ձավախքի» անդամներ Վ. Ջախալյանի, Գ. Շիրինյանի եւ նրանց ընտանիքների անդամների դատավարությունն անցնում է օրենքի խախտումներով: Սոզար Սուբարիին հղած նամակում Արմեն Հարությունյանը խնդրել է անցկացնել այդ դատավարության մոնիտորինգ եւ պարզել՝ արդյոք ջավախահայերի հանդեպ պահպանվում են մարդու իրավունքները:

Ադրբեջանը իր վերահսկողության տակ կվերցնի Վրաստանի գազի սեկտորը

Վրաստանում գործող SOCAR Energy Georgia ընկերությունը պայմանագիր կստորագրի պաշտոնական Թբիլիսիի հետ, վերջինիս գազի սպասարկման սեկտորի կառավարումը ստանձնելու մասին: Նշված ընկերությունը Ադրբեջանի պետական նավթային ընկերության (SOCAR) վրացական մասնաճյուղն է:

Մոսկովյան հռչակագիրը որպես խթան՝ ըստ Սեմնեբիի

Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների կողմից ստորագրված մոսկովյան հռչակագիրը խթան հանդիսացավ ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացի համար: Ինչպես հաղորդում է «Նոյյան տապանը», այս մասին Բաքվում հայտարարել է Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբին: Որպես դրական գործոն՝ նա նշել է այն փաստը, որ 15 տարի անց Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները իրենց ստորագրություններն են դրել ղարաբաղյան հակամարտությանը վերաբերող մեկ փաստաթղթի տակ: «Հույս ունենք, որ երկու երկրների նախագահները կհանդիպեն, որպեսզի շարունակեն արդյունավետ բանակցությունները», ասել է Պ. Սեմնեբին:

Մեղադրանք է ներկայացրել ընդդեմ «Ներողություն եմ խնդրում» նախաձեռնության

Կեսարիայի փաստաբաններից Օրհան Փեկմեզջին դիմել է դատախազություն՝ ընդդեմ «Ներողություն եմ խնդրում» նախաձեռնության կազմակերպիչների եւ համանուն կայքէջի պատասխանատուների մեղադրանք ներկայացնելու համար: Թուրք փաստաբանի հայցադիմումում նախաձեռնության հեղինակներին ներկայացվում են «անհիմն մեղադրանքներով պատմությունը խայտառակելու, հասարակությանը վիրավորելու եւ զրպարտելու ու կեղծիքների միջոցով արշավի համար ստորագրություններ հավաքելու» մեղադրանքներ: «Ներողություն եմ խնդրում» խորագրով արշավին աջակցում է արդեն ավելի քան 22 հազար մարդ:

Անանցանելի է դարձել Մեղրի-Երեւան միջպետական ճանապարհը

Տեղումների պատճառով անանցանելի է դարձել Մեղրի-Երեւան միջպետական ճանապարհի՝ Մեղրու հատվածը: Մեղրու լեռնանցքում ուժեղ քամու հետեւանքով բուք է սկսվել, մերկասառույցի պատճառով անանցանելի է դարձել մայրուղին: Փակ է Քաջարանից դեպի Մեղրի տանող 2 կմ հատվածը, եւ երեք տասնյակ մեքենա, այդ թվում՝ Իրանի Իսլամական Հանրապետության բեռնատարներ, կանգնած են ճանապարհին: Կան նաեւ վթարված մեքենաներ: Ճանապարհը ձյունից մաքրվել է, սակայն տեղացող ձյունը մերկասառույցի վրա դժվարանցանելի է դարձնում երթեւեկությունը, հաղորդում է «Արմենպրեսը»:

Տարբեր գերատեսչություններում խախտումները շարունակվում են, իսկ «բռնվողների» շարքում խոշոր պաշտոնյաներն անանուն են ...

ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2008-ի 2-րդ կիսամյակում նախագահի աշխատակազմի վերահսկողության ծառայությունը ուսումնասիրություններ է անցկացրել մի շարք նախարարություններում եւ գերատեսչություններում:

Բնապահպանության նախարարության մասով ուսումնասիրվել են Երեւանի եւ նրա մերձակա տարածքի օգտագործվող 19 ոչ մետաղական հանքեր: Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ 19 հանքերից 15-ում հայտնաբերվել են մոտ 242 միլիոն դրամի խախտումներ: Հանքերը, որոնք պետության սեփականությունն են, մասնավոր սուբյեկտների է տրվել առանց հանձնման-ընդունման:

Նախագահի հանձնարարականով միջգերատեսչական հանձնաժողովը 36 սուբյեկտ է ուսումնասիրել, որտեղ 626 միլիոն դրամի խախտումներ են հայտնաբերվել:

Իսկ Սեւան ազգային պարկում 983 քաղաքացիների եւ իրավաբանական անձերի հետ կնքած վարձակալության պայմանագրերից 472-ը պետական գանձարան չեն մուտքագրել: Չվճարած վարձավճարները կազմել են մոտ 30 միլիոն դրամ:



Տես էջ 2

1,5 մլրդ դրամն ամբողջությամբ տեղաբաշխվեց շուկայում

«Արդշինինվեստբանկը» մտադիր է 2009-ին նույնպես պարտատոմսեր թողարկել

Այս տարվա նոյեմբերի 10-ին «Արդշինինվեստբանկը» թողարկեց արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք մի շարք առումներով աննախադեպ էին: Նախ այդ թողարկումն առաջինն էր իր ծավալով՝ ոչ մի կազմակերպություն 1,5 մլրդ դրամի պարտատոմսեր չի թողարկել: Այնուհետեւ, ի տարբերություն այլ թողարկողների, «Արդշինինվեստբանկի» պարտատոմսերում ֆիզիկական անձանց ներդրումները համարվում են բանկային ավանդ եւ երաշխավորվում են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից, բնականաբար՝ օրենքով նախատեսված չափով:

Ի տարբերություն բանկային ավանդների, պարտատոմսերը բանկը կարող է հետգնել բանկի կողմից սահմանված գներով: «Այսինքն, դրանք կարող են դիտվել ինչպես եկամտի աղբյուր, այնպես էլ իրացվելիության աղբյուր: Մենք առաջինն ենք շուկայում, որ այս պայմաններն ենք առաջարկել», խոսելով պարտատոմսերի թողարկման եւ դրանց տեղաբաշխման մասին, նշեց «Արդշինինվեստբանկի» բանկային գործառնությունների եւ դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի տնօրեն, վարչության անդամ **Կարեն Ջանինյանը**:

Մեր զրուցակիցը հիշեցրեց, որ «Արդշինինվեստբանկի» թողարկած 1,5 մլրդ դրամով արժեկտրոնային պարտատոմսերի շրջանառության ժամկետը 12 ամիս է, թողարկման ընդհանուր ֆանակը՝ 150 հազար հատ, տարեկան եկամտաբերությունը՝ 10 տոկոս, 1 պարտատոմսի անվանական արժեքը՝ 10 հազար դրամ: «Արդշինինվեստբանկի» բանկային գործառնությունների եւ դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի տնօրենը տեղեկացրեց, որ թողարկված ողջ ծավալը հաջողությամբ տեղաբաշխվեց ընդամենը 25 օրում՝ բաժանորդագրությունը սկսվեց նոյեմբերի 10-ին եւ ավարտվեց դեկտեմբերի 5-ին: Պարտատոմսերը ձեռք բերեցին եւ ֆիզիկական, եւ իրավաբանական անձինք: Ձեռք բերողներն ընդհանուր առմամբ 152-ն էին: 121-ը ֆիզիկական անձինք էին, 31-ը՝ իրավաբանական: Պարտատոմսերը տեղաբաշխվեցին ինչպես Երեւանում, այնպես էլ մարզերում:

Ինչպես հայտնեց Կարեն Ջանինյանը, «Արդշինինվեստբանկի» արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ստացված 1,5 մլրդ դրամին բանկն ավելացնելու է եւս 1,5 մլրդ դրամ եւ այդ 3 մլրդ դրամն ուղղելու է փոքր եւ միջին բիզնեսի վարկավորմանը: «Պլանավորում ենք այդ վարկերը տրամադրել սկսած 13 տոկոսից, որը շուկայում բավականին ցածր տոկոս է», նշեց բանկի վարչության անդամը:

Մեր հարցին, թե ինչպիսի՞ փոփոխություններ է կրել «Արդշինինվեստբանկի» վարկավորման պայմանները, նկատի ունենալով միջազգային ֆինանսական ճգնաժամի հետեւանքով առաջացող ռիսկերը, Կարեն Ջանինյանը պատասխանեց, որ ինչպես եւ մյուս բոլոր հայկական բանկերը, «Արդշինինվեստբանկն» էլ է վերանայել վարկավորման պայմանները, որպեսզի վարկերն ավելի ապահովված եւ փոքր ռիսկային լինեն: Նրա հավաստմամբ, բանկի վարկային պորտֆելը տատանվում է 75-78 մլրդ դրամի սահմաններում: Շարունակվում են վարկավորել տնտեսության բոլոր հատվածները, տրամադրվում են սպառողական վարկերը:

Կարեն Ջանինյանը հայտնեց նաեւ, որ «Արդշինինվեստբանկը» դարձել է Հայաստանի ֆոնդային բորսայի անդամ եւ դեկտեմբերի 19-ից բանկի պարտատոմսերը կարող են ազատ շրջանառվել բորսայի համապատասխան հարթակում: Բորսայում բանկն իրականացնում է նաեւ այլ գործարքներ՝ արժեթղթերի, արտարժույթի առուվաճառք, որոնց ծավալներով «Արդշինինվեստբանկն» առաջին եռյակում է:

«Մտադիր ենք 2009-ին, առաջին եռամսյակն ամփոփելուց հետո, նոր թողարկում անել՝ նոր պայմաններով: Ժամկետայնությունը, տոկոսադրույքը եւ ծավալը կախված կլինի շուկայի ուսումնասիրության արդյունքներից», ապագայի համար բանկի ծրագրերի մասին մանրամասնեց մեր զրուցակիցը: Հնարավոր է, որ 2009 թվականին բանկի կողմից թողարկվեն ավանդային սերտիֆիկատներ եւ ֆոնդային շուկայի այլ գործիքներ: Ջանինյանի խոսքերով, «Արդշինինվեստբանկն» իր մասնակցությամբ կաշխատի նպաստել Հայաստանում արժեթղթերի երկրորդային շուկայի զարգացմանը:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տարբեր գերատեսչություններում խախտումները շարունակվում են, իսկ «բռնվողների» շարքում խոշոր պաշտոնյաներն անանուն են

1-ին էջից

Հովհաննես Հովսեփյանը Սեւան ազգային պարկի խախտումներից մատնանշեց «Մայամի», «Լավանդա Սիթի» կենտրոնների անունները:

Երեւանի քաղաքապետարանի ուսումնասիրություններից նախագահի վերահսկողական ծառայությունը պարզել է աղտոտիչի շինարարության կանխման դեպքեր, ինչպես նաեւ ուղեւորատարների գործունեության մեջ խախտումներ: Հովհաննես Հովսեփյանը բերեց մի օրինակ, որ վերաբերում էր երթուղայինների գծատերերին: Այսպես, հայտնաբերվել է, որ 20 երթուղային տախտակ փոխարեն երթուղի են դուրս եկել 30 մեքենա:

Հանրապետությունում գրանցված մոտ 65 մասնավոր բուհերից 30-ում ստուգումներ են իրականացվել ու հայտնաբերվել են խայտառակ խախտումներ: Պարզվել է, որ մասնավոր բուհերը հարկային դաշտում չեն աշխատում, խախտվում են տարական նորմերը՝ սկսած կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ տարածք ունենալու հանգամանքից: Ըստ Հովսեփյանի, օրինակ՝ մասնավոր բուհեր կան, որ ուսուցում են իրականացնում երկու սենյակներում:

Նախագահի վերահսկողության ծառայության պետը հայտարարեց, որ ստուգումների արդյունքում բազմաթիվ մասնավոր բուհեր կզրկվեն արտոնագրից, իսկ շատերին էլ դեռին խրս ցույց կտրվի, որպեսզի շտկեն խախտումները:

Այսպիսով, նախագահի վերահսկողության ծառայությունը, ըստ դեկավարի, խախտումներ է հայտնաբերել շահումով խաղերի ու խաղատների գործունեության մեջ:

Հովհաննես Հովսեփյանը տեղեկացրեց, որ վերահսկողական ծառայությունը 306 մլն. դրամի ակտ է գրել «Էտոս» խաղատան վրա:

«250 տոկոսով աճել են հանրապետության նախագահին ուղղված նամակները: Վերջին 7 ամսում նախագահին 10 հազար դիմում է ուղղվել», հայտարարեց հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի աշխատակազմի վերահսկողության ծառայության ղեկավարը: Քաղաքացիների բողոքների հիմնական մասն ուղղված է քաղաքապետարանին (դիմումների 24 տոկոսը) եւ դատական համակարգին (17 տոկոս):

Այն հարցին, թե լինո՞ւմ են դեպքեր, երբ փորձում են ճնշում գործադրել իրենց վրա, Հ. Հովսեփյանը հումորով պատասխանեց. «Ինչ ճնշում կարող են գործադրել նախագահի վերահսկողական ծառայության վրա: Ցանկացած դիմողի փորձում ենք օգնել», ասաց նա ու հավելեց, որ շարքային քաղաքացուն ավելի հեշտ են օգնում, քան ծանոթներին՝ վստահեցնելով, որ իրենց ուղղված բոլոր դիմում-բողոքների հետեւից իրենք գնում են:

Խախտումների հետ կապված մեկ այլ հարցի, թե որքա՞ն գերատեսչության ղեկավար, վարչության պետ կամ ամենախոշոր պաշտոնյան ո՞վ է եղել, որ ուսումնասիրությունների արդյունքում հեռացվել է աշխատանքից, Հովսեփյանը փորձեց այսպես պատասխանել. «Կարող եմ ասել, որ կադրերից են հեռացվել պետեր, քաղաքապետարանից առաջին դեմքեր՝ երթուղային տրանսպորտի վարչության պետը, կրթության գիտության համակարգից, դպրոցների տնօրեններ: Դրանց թիվը շատ է»:

Ի դեպ, Հովսեփյանը այդպես էլ չնշեց «շատերից» որքա՞ն մեկի անունը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

Պաշտպանության նախարարության եւ գլխավոր շտաբի գործառույթները կտարանջատվեն

Երեկ տեղի ունեցած կառավարության նիստի առաջին մասը վարեց Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը:** Նա նշեց, որ Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն, ՀՀ նախագահը կարող է արտաքին քաղաքականության, պաշտպանության եւ ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ հրավիրել եւ վարել եւ, որ ինքն ընթացիկ տարում առաջին անգամ է օգտվում այդ իրավունքից:

Նիստում հաստատվեցին պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանի** ներկայացրած «ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ զինված ուժերի Գլխավոր շտաբի, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի եւ ՀՀ ՊՆ ճնշական ծառայություն ստեղծելու մասին» որոշումները: Անդրադառնալով այդ որոշումներին, Սերժ Սարգսյանն ընդգծեց, որ այսպիսով, փաստորեն, բարեփոխումները պաշտպանության բնագավառում մոտենում են ավարտին եւ տարանջատվում են պաշտպանության նախարարության եւ գլխավոր շտաբի գործառույթները: «Այս ճանապարհը մենք անցնում ենք արդեն երեք ու կես տարի: Այդ տարիների ընթացքում հաջողվել է որոշակի նախապատրաստական աշխատանք կատարել, եւ կարծում եմ, որ այս որոշումներով մեր պետության պաշտպանողականությունն ավելի կամրապնդվի», համոզմունք հայտնեց Սերժ Սարգսյանը:

Ա. Մ.

Նոր ատոմակայանի կառուցումը...

1-ին էջից

Երկրորդ փաստաթղթով կառավարությունը հավանություն տվեց նոր ատոմակայանի կառուցման ծրագրի իրականացման համար կառավարող ընկերության մրցութային փաթեթին: Դա այն ընկերությունն է, որը կօգնի Հայաստանին նախագիծը կազմելու, ներդրումների ներգրավման պայմանների սահմանման գործընթացներում, կպատվիրի սարքավորումները, կկառավարի շինարարության ընթացքը մինչ ատոմակայանի գործարկումը: Կառավարության որոշմամբ, 15-օրյա ժամկետում պաշտոնական հայտարարություն կարվի միջազգային մրցույթի անցկացման մասին:

Ե՞րբ կսկսվի նոր ԱԷԿ-ի կառուցումը հարցին Արեգ Գալստյանը պատասխանեց, որ, մոտավոր գնահատականներով, դա տեղի կունենա 2011-ի սկզբին: Մինչ այդ եկող տարվա ընթացքում կունենանք կառավարող ընկերությունը, իսկ 2010-ի կեսերին պայմանագրեր կկնքվեն ներդնողների հետ: Նոր ատոմակայանի կառուցման համար անհրաժեշտ կլինի մոտ 5 մլրդ դոլար, որի մեջ ներառված են նաեւ ներգրավվող միջոցների հետ վերադարձման տոկոսները:

Ա. Մ.

Միջուկային բժշկության կենտրոն Հայաստանում

Հայաստանում միջուկային բժշկության կենտրոնի ստեղծումը քննարկման փուլում է: Ըստ նախարար Ներսես Երիցյանի, Երեւանի Ա. Ալիխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտը (ԵրՖԻ) եւ Ռուսաստանի Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը համատեղ մշակել են «Ռադիոնուկլիդների արտադրության արագացուցչային տեխնոլոգիաներ ՀՀ-ի եւ տարածաշրջանի երկրների բժշկության համար» նախագիծը, որի շրջանակներում նախատեսվում է ԵրՖԻ-ի բազայի վրա ստեղծել ցիկլոտրոնային միջուկային կենտրոն: Արագացուցիչների կիրառմամբ նոր տեխնոլոգիաների ներդրումը բժշկության մեջ եւ հարակից բնագավառներում հնարավորություն կտա Հայաստանին տիրապետել բժշկական ախտորոշման արդիական մեթոդներին, արմատապես բարելավել բնակչության բժշկական սպասարկման որակը, Հայաստանը դարձնել Միջուկային բժշկության կենտրոն, որը կլինի միակը տարածաշրջանում ռադիոնուկլիդների արտադրության, արտահանման եւ դրանց հիման վրա բժշկական ախտորոշման ու բուժման բնագավառում:

Ա. Մ.

Մտահոգություն Արցախի խնդրի շուրջ

Դեկտեմբերի 23-ին Արցախի հիմնահարցի կարգավորման ներկա փուլի վերաբերյալ հայտարարություն էր տարածել «Ի պաշտպանություն ԼՂՀ» կազմկոմիտեն, որի նախագահը Արամ Գ. Սարգսյանն է:

Կազմկոմիտեի անդամ կազմակերպություններին մտահոգել է, որ ԼՂՀ ղեկավարությունը բանակցությունների ընթացքում սկզբունքների մեկնաբանն անմիջական մասնակցություն ցուցաբերելու հնարավորություն չունի: Նրանք նկատել են, որ առաջարկվող փոխզիջումները անորոշ ժամանակով հետաձգում են հիմնահարցի գլխավոր խնդիրը հանդիսացող օրինական ճանապարհով ձեռք բերված ԼՂՀ-ի կարգավիճակի ճանաչման հարցը:

«ՀՀ իշխանությունները պարտավոր են բանակցությունների շարունակման պարտադիր եւ առաջնային պայման համարել միջազգային իրավունքի տեսակետից անքերի կայացած ԼՂՀ անկախության անվերապահ ճանաչումն Ադրբեջանի կողմից: Այս հարցում համաձայնության գալու դեպքում բանակցությունները կշարունակվեն մյուս հիմնարար սկզբունքների՝ տարածքների, փախստականների, տեղահանվածների, կոմունիկացիաների, անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման եւ այլնի վերաբերյալ», նշված է հայտարարության մեջ:

Վերոնշյալ պահանջի չիրագործման դեպքում, ԼՂՀ կազմկոմիտեի անդամ կազմակերպությունները նշում են, որ «կողմերի գործողությունները, հաշվի առնելով նաեւ այլ տերությունների շահերի հնարավոր բախումը, անուղղակիորեն կարող են սադրել նոր, անհամեմատ ավելի կործանարար պատերազմի վերսկսում»:

Դիմելով ՀՀ իշխանություններին, հայտարարության հեղինակները նկատում են, որ «հակամարտության հետեւանքները հաղթահարելու եւ հարեւան ժողովրդի հետ բնականոն հարաբերություններ հաստատելու նրանց ցանկությունը չպետք է գերակայի Արցախի հիմնահարցի, թող որ հետաձգվող, բայց միմիայն արդար, միջազգային իրավունքի նորմերից բխող կարգավորման գործընթացի նկատմամբ»:

Ա. Բ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժէ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լուսագրների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Տուրքերայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Շիրակ. գյուղական ուրվագծեր

Տարեմուտին լույսեր կվառվեն դժվար ապրող Հովտուն գյուղում

Ամասիայից 9 կիլոմետր հյուսիս-արեւելք, զովասուն սարերի մեջ ընկած բարձրադիր տափարակում տեղավորված այս գյուղը նախկին Բայթարն է: Երիտասարդ գյուղապետ **Արարատ Առաքելյանի** տվյալներով՝ բնակավայրը հիմնադրվել է 1870 թվականին եւ սկզբնական շրջանում ունեցել է հիմնականում հույն բնակչություն: Գյուղի մոտ կա «ջարդի ձոր» կոչվող մի վայր՝ տխուր հիշատակ թուրական վայրագ նախճիրի, որից ընդամենը 3 հույն բնակիչ է փրկվել: Նրանց հետնորդներից մի քանի մարդ այսօր էլ ապրում է գյուղում: 1918-20 թվականներին այստեղ բնակություն են հաստատել հիմնականում Կարսի Գյուլհերյան գյուղից գաղթած հայերը:

Հետխորհրդային անկախության տարիներին բնակավայրը վերանվանվել է նախ՝ Զովասար, ապա Հովտուն, որը թերեւս կարելի է համարել կատարված գեղեցիկ վերանվանումներից մեկը: Հովտուն երեւի մեկնաբանվում է հովերի տուն կամ հենց հով տուն, բնակավայր: Գուցե նաեւ՝ ամառանոցավա՞յր: Այս գյուղի բնակիչներն ավանդաբար համարվում են կաթոլիկներ, թեեւ ներկայումս այստեղ մուտք ունեն ենթաբաջանի ինչպես կաթոլիկ հոգեւորականը, այնպես էլ Հայ առաքելական եկեղեցու քահանան: Իսկ անցած կիրակի գյուղի դպրոցի բենֆում (հունական ծագմամբ եկեղեցին երկրաշարժից խոնարհված է) հոգեւոր պատարագ մատուցեց Շիրակի թեմի առաջնորդ Տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանը:

Հովտունը մարզի բարձրլեռնային եւ փոքր բնակավայրերից է, ունի 45 տնտեսություն: Բնակչությունը հաշվվում է 203 մարդ, բայց առկա բնակվում է 155-ը: Տարածաշրջանի բազմաթիվ այլ գյուղերի նման այստեղ էլ փակ դռները զգալի տոկոս են կազմում՝ մոտ 15 տուն: Պատճառը եւս ընդհանուր է. ներկա պայմաններում գյուղացին մեծամասամբ չի կարողանում իր հողը մշակել, արդյունք ստանալ եւ ընտանիքը պահել, թողնում է, գնում... Հովտունը 287 հեկտար սեփականաշնորհված (ընդհանուր 483 հեկտարից) վարելահող ունի, ու չնայած այս տարի պետությունն էլ ցանքս անող գյուղացուն հեկտարի հաշվով 35 հազար դրամ սուբսիդիա է տվել, բայց համայնքի ղեկավարի վկայությամբ՝ գյուղում ընդամենը 6 հեկտար աշնանացան հացահատիկ է ցանվել: Ճիշտ է՝ հովտունցիների հիմնական զբաղմունքն անասնապահությունն է, բայց այստեղ էլ անասուններին տրվող միայն բնական խոտով, առանց որակյալ կերային մշակաբույսերի աճեցման ու օգտագործման բավարար արդյունք չես կարող ստանալ: Վարուցանքի ծախսերը շատ են, իսկ թեթուրությունների վրա գտնվող հողերի հատույցը՝ փիչ, ցանքերը մշատես տուժում են նաեւ գարնանային ցրտահարություններից: Գյուղատնտեսական տեխնիկան էլ շարից դուրս է եկել:

Գյուղի տարածքը, ինչպես փաստեց նաեւ համայնքապետ Արարատ Առաքելյանը, ընդամենը մի փողոց է: Երկրաշարժից տուժած բնակավայրը ժամանակին հիմնովին վերակառուցել, բոլորին բնակարաններով ապահովել է Ուկրաինայի Սումի քաղաքի շինկազմակերպությունը՝ հաղթի շինկազմակերպությունը՝ համալրված ջավախքցի շինարարներով: Կառուցել են նաեւ տարական դպրոցի շենքը, կոշտ վառելիքով աշխատող կաթսայատուն, որը նաեւ որոշ ժամանակ աշխատեցրել են: Իսկ գյուղապետարանը, բուժկետը մնում են վագոն-տնակներում, երեւի կառուցել չեն հաստատել: Գյուղացիներից մեկը, որի հետ զրուցեցինք, ասաց, թե եկած շինարարները նաեւ 8 անասնաշենքեր էին կառուցել իենց ամեն ինչով, նույնիսկ ավտոմատ գոմաղբահեռացման մեխանիզմներով, անասուններ էին բերել... Անասունները հետագայում, կարծեմ, բաժանվել են գյուղացիներին, իսկ անասնագոմերը, զուգակցիս պատելով, իրենց ողջ կարգուսարքով (ընդհուպ կովերի վզին գցելու շղթաները) մի քանի տարի առաջ դեռ տեղում էին: Հետո հայտնվել են քաղաքային ինչ-որ պատահաբար զոռբաներ, այդ շենքերի մինչեւ վերջին քարը կրել-տարել են, դեռ դիմադրող գյուղացիների վրա էլ մատ թափ տվել, ահաբեկել...

Գյուղը մշակույթի ոչ մի օջախ չունի: 5000 կտոր գրականություն պահվում է գրադարանավարուհու տանը: Դպրոցը միշտ տարական է եղել: Այժմ այստեղ սովորում է 12-13 աշակերտ, բայց տարականից բարձր դասարանների մի 30 աշակերտ էլ ամեն օր ոտքով գնում է հարեւան Բանդիվանի դպրոցը, ինչը հատկապես լեռնային ձմռան ամիսներին դժվարությունների, նաեւ վտանգների հետ է կապված: Թեկուզ այսքան աշակերտի առկայության պայմաններում չարժե՞ մտածել տարական դպրոցը հիմնական դպրոց դարձնելու մասին:

Հովտունցին ծանր, դժվար կյանքով է ապրում: Բայց, փառք Աստծո, այս մի գյուղում թեկուզ ոչ մեծ՝ ուրախացնող բաներ էլ լսեցինք: Համայնքի ղեկավարի տեղեկացմամբ՝ 2003 թվականին գյուղի ճանապարհը պետբյուջեի միջոցներով հիմնանորոգվել է: 2-3 տարի առաջ ԱԺ պատգամավոր Աշոտ Աղաբաբյանի անձնական ֆինանսավորմամբ 2-ով ավելացվել է գյուղում հեռարձակվող հեռուստաալիքների թիվը, հասել 5-ի, եւ այսօր այստեղ կարելի է դիտել նաեւ մարզային գոնե մեկ ալիք, «Արարատ» մշակութային ալիքը եւս: «Հայկական Կարիտասի» կողմից անցյալ տարի գյուղում խաղահրապարակ է կառուցվել, իսկ այս տարի 2,5 կիլոմետր հեռավորությունից նոր ջրագիծ է բերվել, խմելու ջրի հարցը 90-100 տոկոսով լուծվել է: Վերջին երկու պարագաներում համայնքն ինքը 10 տոկոս ֆինանսական ներդրում է ունեցել: Խոսք կա նաեւ նոր եկեղեցու կառուցման մասին: Քաղաքի հետ ավտոբուսային կապ կա, գոհ են, ֆիքսված հեռախոսակապ էլ ունեն:

Իսկ համայնքային բյուջեի միջոցներով այս օրերին գյուղում փողոցային լուսավորություն անցկացնելու ծրագիր է իրագործվելու: Գյուղապետի հավաստմամբ՝ ամենաուշը տարեմուտի գիշերը գյուղի տարածքի 13 կետերում լույսեր կվառվեն...

Լուսավոր տարեմուտ եւ բարի Ամանոր ձեզ, հովտունցիներ: Հայրենի հողում բարգավաճելու ավելի մեծ եռանդ ու հաջողում:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Գյումրի-Հովտուն-Գյումրի

«Էս մեծ աշխարհում մեկը չի՞ լինի, որ օգնի»

81-ամյա Սիրանուշ Մանթաշյանի փոքրիկ անկյունում տարեկից հարեւանները հաճախ են հավաքվում: Փորձում են ելք գտնել անելանելի վիճակից: Ինչպե՞ս պատրաստվել տոներին, երբ ամսական եկամուտն ընդամենը 15.900 դրամ է, ինչպե՞ս ուրախ ձեւանալ, երբ թոռներն ապրելու տեղ չունեն: Լուծումը գտել են, տոները ուրիշների համար են, ոչ՝ իրենց:

Սիրանուշ Մանթաշյանը Արցախի 23 նախկին հանրակացարանային շենքում է ապրում արդեն 16 տարի: 13 տարի է աղքատությանը գումարվել է նաեւ որդու կորստի ցավն ու մտահոգությունը թոռների ճակատագրի շուրջ: Իր մասին Սիրանուշ Մանթաշյանը չի պատմում, նրա խոսակցությունների մշտական թեման թոռներն են: «Երեք որք թոռ ունեմ, ապրելու տեղ չունեն: Ամսական պետությունը նրանց 18.000 դրամ նպաստ է տալիս: Ապրել չի լինում: Երբ տղաս մահացավ, թոռներս ինձ հետ էին ապրում, բայց հիմա մեծացել են ու այստեղ ապրելն այլեւս անհնարին է դարձել», պատմում է Սիրանուշ տատը:

Ս. Մանթաշյանի թոռներից մեկն արդեն ամուսնացել է, մյուսը նոր է ավարտել դպրոցը, իսկ ամենափոքրը՝ տղան, 15 տարեկան է: «Երբ նրանց մայրը կարողանում է ինչ-որ տեղ աշխատանք գտնել, տուն են վարձում, իսկ երբ էլ գումար չեն ունենում, կրկին ինձ մոտ են գալիս»,

պատմում է Սիրանուշ տատը: Նրա բնակարանը, որն ընդամենը մեկ փոքրիկ սենյակ է՝ առանց խոհանոցի եւ անգամ զուգարանի, բավարար չէ անգամ մեկ մարդու համար, մինչդեռ տարվա մեծ մասն այստեղ նաեւ նրա թոռներն են ապրում մոր հետ: «Շատ անգամ եղել է գիշերը երեխան արթնացել է, բայց նստել կամ կանգնել չի կարողացել, որովհետեւ անկողիններն իրար կողի կողի են գցում եւ շարժվելու տեղ չի մնում», պատմում է նա:

Սիրանուշ տատը բնակարանը տաքացնելու համար սալօջախ հազվադեպ է վառում: «Հետո վարձը չեմ կարող տալ, ասում է, երբ երեխեխս շատ են մրսում, մի քանի ոտքե միացնում եմ, ծանկոց գցում, որ տաքությունը երկար պահպանվի»: Ծայրը ծայրին մի կերպ հասցնելու համար Սիրանուշ տատը գնում է միայն առաջին անհրաժեշտության մթերքները: «Էսօր ճաշս մի փիչ թանձր էր սացվել, ջուր եմ ավելացրել, որ վաղն էլ ուտեմ», պատմում է նա:

Սիրանուշ տատի փոքրիկ բնակարանը, սակայն փայլում է մաքրությունից: Խնամքով է վերաբերվում յուրաքանչյուր իրի, որոնք արդեն տասնյակ տարիների պատմություն ունեն: Առողջությունից աշխատում է չդժգոհել, թեպետ տարիքն արդեն զգացնել է տալիս: Շենքում ջուր առաջին հարկում է լինում, եւ եթե չլինեին հարեւանները, ապա հաճախ առանց ջրի կմնար: «Դժվար է մի քանի հարկ իջնել եւ բարձրանալ», ասում է նա:

«Էլ ոչ մի հույս չունեմ: Միշտ տներից առաջ ավելի շատ եմ զգում, որ էսպես էլ հնարավոր չէ ապրել: Ես իմ մասին էլ վաղուց չեմ մտածում, ջրի մեջ աղ կգցեմ կպրեմ, բայց թոռներս... ոչ օգնող ունեմ, ոչ էլ թիկունք: Մտածում եմ, էս մեծ աշխարհում մեկը չի՞ լինի, որ նրանց օգնի», ասում է:

Այն, որ ընդամենը հաշված օրեր անց տներ են, Սիրանուշ Մանթաշյանին հիշեցնում է միայն հեռուստատեսությամբ հնչող գովազդը: Հիշեցնում է, բայց չի պարտադրում: Տներն արդեն երկար տարիներ շարունակ զգուշորեն շրջանցում են այս շենքում ապրող բնակիչներին:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՐՅԱԳԱՆՔ

Զգուշացեք բարեւարին փնովելուց

Զգուշացեք, քանի որ կգտնվի մի լրատվամիջոց եւ մի Գ. Գալստյան անունով պոռոտախոս, որը կփորձի լուսանկներ թափել եւ մրոտել բարեւարի անունը:

Այո՛, այս համատարած անտարբերության մեջ բոլոր սրբերին ու մեծերին մոռացած, մարդկային բոլոր արժանիքները կորցրած մարդկանց մի փոքր խմբի աչքի փուշ է դարձել «Վիվասել-ՄՏՍ» ընկերության տնօրեն, հայտնի բարեւար Ռալֆ Յիրիկյանը (շուտ մոռացանք, թե մեր գլխին ինչեր էր բերում հունական «Արմենտելը»): Բայց ինչպես ազնիվ եւ երախտապարտ մարդիկ են ասում՝ նրան չի կարելի բնորոշել սոսկ բարեւար բառով: Նա ավելին է, քան բարեւարը: Նա շրջում է ամբողջ հանրապետությունով, փնտրում գտնում է ամենակարիքավորներին՝ պետության ու գործարարների կողմից մոռացվածներին եւ քաղցածին հաց է տալիս, ծարավին՝ ջուր, անտունին՝ բնակարան, երեխաներին՝ մանկապարտեզ եւ դպրոց, դպրոցին՝ գույք, հիվանդներին՝ հիվանդանոց, հիվանդանոցին՝ թանկարժեք սարքավորում, մրսողներին եւ եկեղեցուն՝ տաքություն եւ այլն եւ այլն: Շատ են նրա կատարած գործերը, լայն է աշխարհագրությունը, բոլորը հնարավոր չէ մեկ առ մեկ թվարկել լրագրային մի հոդվածում:

Այդ «հոդվածագիրը» նրան մեղադրում է նաեւ հեռուստաէկրաններին հաճախակի երեւալու մեջ: Բայց ինչո՞ւմն է նրա մեղքը: Մի՞թե վատ է, երբ գորշ հեռուստատեսությունը գոնեհիկ եւ անճաշակ հաղորդումների, իսկապես մարդկանց «ջեբը» մտնողների («ջեբը» հոդվածագրի բառն է) փոխարեն մեկ-մեկ էլ ցուցադրի գեղեցիկ մարդու գեղեցիկ արարքը: Մարդ, որ անմնացորդ նվիրվել է իր հայրենիքին եւ հայրենակիցներին: Մի՞թե լավ չէ, որ հեռուստադիտողը մի քանի րոպե շփվում է լավի ու գեղեցիկի հետ, թե՞ այնքան ենք վատը տեսել, որ այլեւս չենք կարողանում ընկալել լավն ու մարդկայինը, հետ ենք վարժվել եւ կորցրել հավատը բարու նկատմամբ:

Եվ վերջում ամենանողկալին. «Ուզում է, որ մարդիկ սորանան եւ խոնարհվեն իր առաջ», հեգնում է հոդվածագիրը:

Պատասխանեմ.- Ես Յիրիկյանի կրկնակի տարիքն ունեմ, բայց եթե նրան տեսնեմ, թեկուզ միայն գյուղերի խիստ կարիքավորներին բնակարաններ նվիրելու համար կխոնարհվեմ եւ ձեռքը կհամբուրեմ:

ԿԱՐԼԵՆ ԲԱԼԱՍՅԱՆ

Հայտարարություն՝ նամակի փոխարեն

ՀԳՄ-ից գրողների հեռացման առիթով

Մեր խորին մտահոգությունն ենք հայտնում ՀԳՄ ղեկավարության 2008 թվականի նոյեմբերին կայացած անօրինական ու անտրամաբանական որոշման առիթով, երբ միությունից հեռացվել են ՀԳՄ անդամներ՝ գրականագետ Աբգար Ափինյանը եւ բանաստեղծ Ալեքսանդր Ղումաշյանը:

Չանդրադառնալով որոշման մեջ տեղ գտած ՀԳՄ կանոնադրության բոլոր խախտումներին, առանձնացնենք հետեւյալը՝ խիստ անբարոյական ենք համարում գրողին գաղտագողի հեռացնել իր ստեղծագործական միությունից, հարկ չհամարելով նույնիսկ նրան տեղյակ պահել այդ մասին:

Այս գործելաոճը հատատ անարդար է եւ դատապարտելի:

Սա հիշեցնում է չարաբաստիկ 37 թվականը, երբ Գրողների միությունը հալածանքներ սկսեց Չարենցի, Բակունցի դեմ, ինչպես եւ բռնաճնշումների ժամանակաշրջանին, սակայն միանգամայն անհասկանալի է այսօր:

ՀԳՄ ղեկավարության որոշումը առնվազն տարօրինակ եւ աննախադեպ է այն իմաստով, որ նման գործելաոճը ժողովրդավարության ոտին բռնած մեր հասարակության համար անդառնալի անցյալ է այլեւս: Մեր օրերում գրական կյանքի կառավարման սալինյան մեթոդների վերակենդանացումը բարոյական չէ եւ չի կարող ունենալ որեւէ արդարացում:

ՀՐԱՉՅԱ ՍԱՐՈՒԽԱՆ,

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆11.00-Բնապահպանության նախարարությունում տեղի կունենա նախարարի ամփոփիչ մամուլի ասուլիսը:

◆11.00-Սփյուռքի նախարարությունում («Երեբունի պլազա», 9-րդ հարկ) նախարար Հրանուշ Հակոբյանը հանդես կգա տարին ամփոփող մամուլի ասուլիսով:

◆11.00-«Կոնվերս բանկում» տեղի կունենա բանկի գործադիր տնօրեն Արարատ Ղուկասյանի տարեվերջյան մամլո ասուլիսը:

◆12.00-Մշակույթի նախարարությունում տեղի կունենա բեմադրիչ, ռեժիսոր Ժիրայր Փափազյանի մամուլի ասուլիսը:

◆12.30-ԿԳՆ-ում նախարար Սպարտակ Սեյրանյանը կստորագրի համագործակցության հուշագիր «Այբ» կրթական հիմնադրամի հետ:

◆13.00-«Գոլդեն Փելես» հյուրանոցում տեղի կունենա «Հայկական ջազ-70» կազմկոմիտեի եւ Մշակույթի նախարարի ամփոփիչ ասուլիսը՝ նվիրված «Հայկական ջազ-70»-ի շրջանակում անցկացվող միջոցառումների ավարտին:

◆13.00-«Երեւան» հյուրանոցի «Ռոսսինի» սրահում կներկայացվի «Սիվիլիթաս» հիմնադրամի «Հայաստան 2008. ճգնաժամ եւ հնարավորություններ» զեկույցը:

◆13.00-«Տեսակետ» ակումբի հյուրերն են Ալ. Սոլժենիցյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Կամո Հովհաննիսյանը, փոխտնօրեն Հ. Գրիգորյանը, վաստակավոր արտիստ Կարեն Սարգսյանը:

◆13.00-«Հայացք» մամուլի ակումբում քաղաքական տարին կամփոփի ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը:

◆14.00-Գրականության եւ արվեստի թանգարանում տեղի կունենա հանդիպում սփյուռքահայ ռեժիսոր Ժիրայր Փափազյանի հետ:

◆14.00-«Տեսակետ» ակումբի հյուրերն են կառավարությանն առընթեր ազգային փոքրամասնությունների հարցերով վարչության պետ Վարդան Ասատրյանը, ասորական եւ ուկրաինական ֆեդերացիաների նախագահները:

◆15.00-«Ուրբաթ» ակումբի հյուրերն են մամուլի ակումբների ղեկավարները: Թեման՝ «Ակումբները՝ ակումբների մասին»:

◆16.00-Նկարիչների միությունում տեղի կունենա «Հայկական բնաբխարհ» պեյզաժի հանրապետական ցուցահանդես:

Պատկերներ առօրյա մեր կյանքից

Ամեն Նոր տարվա շեմին մի նոր հույս ծնվում է մեջներս, կամ մեռնում, կամ ապրելու իր իրավունքն է պահանջում: Հեռո՛ւ, ինչ-որ համաստեղություններից աստղերը բաներ են հուշում՝ կես լուրջ, կես կատակ տրվում ենք աստղագուշակներին, մեկ հուսահատվում, մեկ մեզ խաբում, բայց «որոնածներս բնավ չենք գտնում», ու դառնում ենք զգուշավոր, ընկերոջը չենք հավատում, հարազատին չենք հավատում, օտարանում, պարփակվում ենք մեր մեջ: Բայց վստահելի հենարան գտնելու հույսը, մեկ է, շարունակում ենք փայփայել: «Վաղվա օրը ինը չէ», ասում է բանաստեղծը, ու մենք հասկանում ենք, որ այդ վաղվա օրը, որ մերը չէ, այդ անորոշը մեր տագնապներն ավելի է տագնապալի դարձնում: Փիլիսոփայական ու բանաստեղծական մեր մտածումները շաս արագ կորցնում են իրենց արժեքը կամ հմայքը, երբ կյանքը մեր առաջ ցցում է իր դառը մերկությունը:

«Արհեստն էլ ոսկի չէ՞»

Ցուրտն ու տնտեսական ճգնաժամը ճանկերը սրած մարդ են որոնում. մութը թանձրացել է, փողոցներում մարդ-մարդասան չի երևում: Երեկոյան ինչից հետո ձմռանը Երևանում կյանքն ասես կանգնած լինի: Փողոցի մեկ-երկու լապտեր թույլ առկայծում են. օրն ավարտվում է, կեսգիշերին մոտ է, որտեղից որտեղ մի տղա ցցվում է դիմացս՝ 500 դրամ է, առեք էլի-սվարաթղթին ջրաներկով կամ գուաշով արած ինչ-որ նկար է: Այս զբաղմունքի տղաներին սրճարանների շուրջը կամ մարդաշատ վայրերում, այգիներում տաք եղանակին հաճախ էինք հանդիպում, բայց ցուրտ-ձմեռ օրով, կեսգիշերին այս երեխան, մեն-մենակ ի՞նչ գործ ունի այստեղ:

«Բարեկամության» փողոցին մի կրպակ կար, այդ փոքրիկ կրպակի պատուհանը 5 քառ. անգամ դադար չէր ունենում. այս հասվածի լավագույն արհեստավորն էր կրպակում աշխատողը. արհեստագործական այդ կրպակի փոխարեն հիմա ավելի ընդարձակ մի բան է՝ սննդի սպասարկմանը ծառայող: Միջին տարիքի արհեստավոր էր կրպակի նախկին աշխատողը՝ երբ երեխայի հայր, կրպակը սիրված է վաճառել, մեկնում է արտասահման, արտագնա աշխատանքի: Ժողովրդական ասացվածքն ասում է, թե լավ արհեստավորը մինչեւ կեսօր քաղցած կմնա, բայց փոխվել են կյանքի պայմանները՝ լավ ու վատ չեն հարցնում: Արհեստավորներից շատերը մտահոգ են. «Եթե հաշվիչ դրամարկղեր դնեն, մենք անելիք չենք ունենա»:

«Մեռելը կնանիք են վերցնում ...»

Կյանքի սոցիալական ասպեկտները ճիշտ է, հարաբերական են, բայց միեւնույն է՝ տնտեսական որեւէ համակարգում միշտ էլ բնակչության սվար զանգվածները գտնվում են սոցիալական, իսկ մեր տիպի երկրներում՝ ընդգծված անհավասար պայմաններում:

Այսօր մայրաքաղաքի բնակչության թերեւ մեծ մասի աշխատանքային զբաղմունքն առեւտուրն է, հատկապես, ինչպես ընդունված է ասել, մանր ու միջին բիզնեսը: Երեւանից դուրս աղքատ մեկ միլիոնից ավելի հայեր մեր ընդհանուր տեսադաշտից հանիրավի դուրս մնացած են. որոշ ծրագրեր փորձում են կյանքի կոչվել գյուղական շրջաններում, բայց միեւնույն է՝ մեր անդրադարձները այնքան են հարեւանցի, ասես այդ մարդկանց կյանքը մեզ բոլորովին չի վերաբերում: Իրենք իրենց յոլի մեջ տարակված ապրում են՝ «օրեր են, կմթնեն, անց կկենան» ճարահատի հոգեբանությամբ:

Քաղաքային կյանքի ամենատխուր պատկերներից մեկը երեւանյան բացօթյա շուկաներն են: Առեւտուր անողների մեծ մասը կանայք են, գրչից կաղտած մատներով, մի մասը նախկին գյուղաբնակներ, մի մասը տուն-տեղ թողել, տեղափոխվել են Երեւան՝ վարձով են ապրում: Մասնագիտություն ու արհեստ չունեցող այս մարդկանց ապրուստի միջոցն առեւտուրն է ապահովում: Հացառատի այս կնոջը ամեն օր տեսնում եմ: Ամուսինը մահացել է, ինքը տեղափոխվել է Երեւան, ամսական 30.000 դրամ տան վարձ է տալիս: Տղան արտագնա աշխատանքի է մեկնել, տանը մնացել են ինքը, աղջիկն ու ծեր սկեսուրը: Տան միակ կերակրողն ինքն է, «Առավոտվա 8-ից մինչեւ երեկոյան 8-ը ոտքի վրա եմ՝ վաստակածս օրվա հացի փող է ընդամենը»: Կողքի երիտասարդ կինը՝ Գեղարքունիքից Երեւան հարս է եկել, նույն մարզից են. «Հողը չի կերակրում գյուղացուն: Կարտոֆան ցանում ենք, կամ ջուր չի լինում, կամ կարկուտն է խփում, պարարտանյութը, սերմացուն էլ սանում, իրար մեջ են բաժանում, ո՞վ է ժողովրդի մասին մտածողը» (բարեկամս կասեր՝ իրենց իրավունքները չգիտեն, դրա համար էլ այսպես խեղճ են): «Բոլորի դռները փակ են, տղամարդիկ թողել արտագնա աշխատանքի են գնացել, գյուղում մնացել են ծերերը, երեխաներն ու կանայք: Իսկ մի մարդ Գեղարքունիքից այնպիսի բան է ասում, որ երկար ժամանակ մտիցս դուրս չէր գալիս. «Քույրիկ ջան, տղամարդ չի մնացել մեր գյուղում, մեռելը կնանիք են վերցնում»:

Շուկայի կանանց մի մասը օրվա ապրուստը հայթայթում է ապրանքի մի տեսակով՝ ասենք միայն կիտրոն, կանաչի, համեմունքներ, կամ մատս վաճառելով: «Ամբողջ օրն էս բետոնի վրա ենք, առողջություն չի մնացել, մենք մեզանով ենք ապրում չէ՞, իրենցից աշխատանք ուզում ենք, չէ: Օրվա էս գլխից տեղից լարում, էն գլխից լարում են: Մենք էլ մարդ ենք, ուզում ենք ապրել: Առաս ինչ է, առավոտից 1000 դրամի առեւտուր չեմ արել, ինչ տամ»,- (նկատի ունի հարկահավաքին), ձայնի ավելի համարձակ տոնով ասում է մանրավաճառ կինը:

Որոշ կրպակներում առեւտուրն ավելի աշխույժ է, հաճախորդին միշտ պատրաստակամորեն վերաբերվող երիտասարդը հարկային դաշտի անհավասար մոտեցումներից է դժգոհում: «Մանր առեւտուրը շաս են ճնշում, 8 քմ տարածքի վրա աշխատողը ի վիճակի չէ 3,5 % հարկ մուծելու: Տարբերություն չի դրվում վարձակալած կրպակի ու սեփականաշնորհածի միջեւ: Կրպակի տարածքի, կենսաթոշակի, դրսի հասվածի համար վճարումները շաս-շաս են», ասում է զրուցակիցս, եւ վստահաբար հավատացնում, որ մուծումները պետբյուջե չեն մտնում: Հարցնում եմ՝ ի՞նչ գիտես: «Գիտեմ, որ ասում եմ»: «Հիմա շաս լարված ենք աշխատում, առաջխաղացում չկա: Ճիշտ չի փոքր կրպակներում ՀՊՄ-ների տեղադրումը (պահանջում են իրենց տեղափոխել հաստատագրված հարկային դաշտ), դա մեծ խանութների, սուպերմարկետների համար արդարացված է, բայց մեր պարագայում՝ ոչ: Եթե ընդունված հարկային դաշտով աշխատես, պիտի գործդ թողնես, փախչես, մանր բիզնեսի մարդկանց ուրիշ դաշտ պիտի հրավիրել: Պետական հիմնարկներից, ասենք սննդի վերահսկողության ներկայացուցիչը գալիս է թե՝ «ախպեր, քեզ ընկերական պիտի տուգանեմ»: Ասում եմ՝ ինչո՞ւ, ինչը դուրդ չի գալիս: Գեյզե՞ր չունեմ, դրա համար 100.000 տուգանք ես գրում: Բայց կարելի՞ է չէ, կտրուկ միջոցների փոխարեն մի քանի օր ժամանակ տալ». պետական աջակցություն են ակնկալում այս մարդիկ, ավելի մեղմ հարկային քաղաքականություն ու սպասում հունվարից հետո օրենքում կատարվող փոփոխություններին. «Թող թույլ տան մեր փոքր բիզնեսն աշխատացնել: Առավոտվա 8-ից մինչեւ երեկոյան 9-ը աշխատում եմ, առանց հանգստի օրերի, ընտանիքի միակ աշխատողն եմ, հայր, մայր, կին, երկու փոքր երեխա, ուսանող քույր ունեմ: Վերջին շրջանում ավելի է դժվարացել, մտածում ենք՝ ինչ ճանապարհով դուրս գանք երկրից, գնանք ուրիշ տեղ ապրենք»:

Ավտոբուսի դռնից կախվածները

Մեր այս նյութը մարդկանց հոգս ու ցավի, կյանքի դժվարությունների մասին է, իսկ այդ դժվարություններն ավելի է սրում քաղաքային տրանսպորտը: Արդեն 21 տարի Քանաքեռում ապրող կինը ասում է, որ տրանսպորտի նման վիճակ 92-93-ի ծանր տարիներին է եղել: Աշխատում է «Բարեկամություն» մետրոյի մերձակա խանութներից մեկում, գործից գոհ է, բայց ամեն օր աշխատանքից տունդարձը մեծ գլխացավանք է: Երեկոյան ուշ ժամերին Քանաքեռ բարձրացող երթուղային տաքսի չկա, կամ շաս հազվադեպ է պատահում, իսկ նույն ժամերին, Զեյթուն գնացողներ կան: Կարծում է՝ գծի տերերի անփութությունն է պատճառը, չվերահսկելը: Քանաքեռի մեկ այլ բնակիչ դժգոհում է «Երիտասարդական» մետրո գնացող երթուղային գծի սակավությունից: Ուշ ժամերին Քանաքեռի ուղեւորները ճարահատ «ավանդույթ» են ձեւավորել, կանգառում հավաքվածները միասին գումար են հավաքում, տաքսի վերցնում, վարողներն էլ, օգտվելով այդ հանգամանքից, գներն ավելի են բարձրացնում: Բայց «ամեն օր տաքսիով աշխատանքից տուն գնա՞լ կլինի, ի՞նչ ենք սանում որ»:

Թե ի՞նչ մոտեցումով են երթուղագծերը բաշխվում եւ ինչպե՞ս է քաղաքային կյանքի կարեւորագույն խնդիրներից մեկի՝ տրանսպորտային վիճակը համակարգվում, ամեն շաբաթային քաղաքացի լավ գիտի: Երթուղագծերը տերեր ունեն, բնակիչներն էլ կախված են նրանց քմահաճույքից: Բայց անխղճություն է սվար բնակեցված մի շրջան սպասարկել ընդամենը մեկ երթուղագծով: Դրա տխուր հետեւանքների կրողներից են Խարբերդի բնակիչները: «Ռոսիա» կինոթատրոնից 105 համարի երթուղային տաքսին հասնում էր մինչեւ Խարբերդի խիտ բնակեցված ամառանոցները, օրվա բոլոր ժամերին խիստ ծանրաբեռնված: Հետդարձին Խարբերդ գյուղի բնակիչները ոչ նստելու, ոչ կանգնելու տեղ չէին ունենում: Թիվ 33 ավտոբուսի երթուղագիծ մտնելը Խարբերդցիների համար ոնց որ անպատաստ՝ օազիս: Սակայն նրանց ուրախությունը երկար չտեւեց՝ թիվ 105-ը այս տարի սեպտեմբերին հանվեց ու երթուղագիծը մեքենաշնորհվեց 33-ին, որին մոտենալն արդեն բախտավորություն է, եւ մարդկանց մի մասը ավտոբուսի դռներից կախված գնալուց խուսափելով, տրանսպորտի երկու միջոց էր փոխում, նույնը՝ վերադարձին, փաստորեն կրկնապատիկ վճարելով: Երթուղագծի տիրոջ համար՝ շահաբեր, բնակիչների համար՝ հուսահատական, որովհետեւ նրանց օրը շարունակվելու է բացվել այդպես՝ ավտոբուսի դռներից կախված մոռալ հոգեբանությամբ:

Ու այդպես ամեն օր:

ՄԵԼՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆ

Ամեն մի հայ ընտանիքի ընտանեկան ծառ նվիրելու երազանքով ապրողը

Ընտանեկան ծառ ստեղծելու միտքը երկար ժամանակ հանգիստ չի տվել մասնագիտությամբ քիմիկոս, ինժեներ Գրիգորի Պետրոսյանին, որոշումները նրան թվացել են անվերջանալի, սակայն միանգամայն անսպասելի մի գիշեր երեւակայության մեջ գծագրվել է ճիշտ այն պատկերը, որ փափագում էր ստանալ ամբողջ սրտով: Այնպես է ներշնչվում իր ստեղծած ընտանեկան ծառով, որ ամբողջ ժամանակ մտածում է միայն որեւէ բարեգործի օգնությամբ այն մասսայական դարձնելու եւ ամեն մի հայ ընտանիքի նվիրելու մասին: Պետրոսյանն ընտանեկան ծառը համարում է սիրո եւ հավատարմության խորհրդանիշ, համոզված է, որ այն երջանկաբեր է, ամուր է պահում օջախն ու նոր ճյուղեր պարգեւում: Ահա թե ինչու այժմ մտածում է միջոց գտնել ընտանեկան ծառը նորապսակ զույգերին հենց ամուսնության օրը նվիրելու: Փնտրում է իր պես ռոմանտիկ մի բարեգործի, որի համար երազն իրականություն դարձնելուց ավելի գրավիչ բան չկա այս աշխարհում:

«Երազանքս է, որ ամեն մի հայ ընտանեկան ծառը ցանկանա իր տանն ունենալ: Սկզբում



ծառն ուներ 6 ոտնակ, այսինքն՝ կարելի էր տեղադրել միայն 6 լուսանկար, ինչը սահմանափակ թվաց ինձ: Պոնակները դարձրեցի երկկողմ, որպեսզի բազմանդամ ընտանիքների բոլոր անդամները՝ տաս ու պապից մինչեւ թոռներ, ունենան իրենց լուսանկարները», ասում է Պետրոսյանը:

Ընտանեկան ծառի հեղինակային իրավունքն իրենն է, վկայականները ստացել է 2004 թվականին: Հենց այդ ժամանակ էլ մտածել է ստեղծել ընտանեկան այնպիսի ծառ, որն ընդհանուր լինի բոլոր ազգերի համար, չճանաչի պետություն եւ սահման: «Ծնվեց մտահղացում բոլոր ժողովուրդներին մի ընդհանուր արմատով ներկայացնելու եւ ցույց տալու, որ բոլորս նույն արմատից ենք՝ Արարատ, Նոյ, տապան, ընտանիք, երեխաներ, կենդանիներ: Դրանից զատ ստեղծել եմ տարբեր արմատներ՝ ռուսական եւ հայկական եկեղեցիների պատկերներով, մեկ այլ արմատի վրա պատկերել եմ Մայր աթոռ Սբ Էջմիածինը, Արարատը, Մատենադարանը, Խոր Վիրապը, Վարդան Մամիկոնյանին: Պոնակների թիվը նույնպես տարբեր է՝ 3, 5, 7, երկկողմ լուսանկարների համար»:

Ընտանեկան ծառի վրա գրություններ չկան, բայց հեղինակն ու նրա համախոհները չեն մոռացել ասույթներ ստեղծելու մասին: Տուփի վրա գրված է՝ «Հիշի՛ր քո արմատները, եւ սերունդները քեզ չեն մոռանա»: «Զարդարեք ձեր օջախն ընտանիքի ծառով եւ ձեր առջեւ կլինեն ձեզ հարազատ եւ հաճելի մարդկանց պատկերները»: «Ճանաչեք ձեր ծագումը եւ փոխանցեք ձեր սերունդներին»:

Գրիգորի Պետրոսյանը հիմա վհատված է, կորցրել է լավատեսությունը, որովհետեւ ընտանիքը սրբություն համարող հայաստանցիներն անտարբեր են իր ստեղծած ընտանեկան ծառի հանդեպ: «Հոգնել եմ դռներ ծեծելուց, ում ասես չեմ դիմել, սակայն ոչ մի արձագանք չեմ ստացել: Երեւի կզարմանաք, եթե ասեմ, որ ընտանեկան ծառը Ռուսաստանում ցուցադրելու ժամանակ ինչքան ջերմ վերաբերմունք եմ զգացել, չնայած մեզ համարում ենք ռուսներից ավելի ընտանեասեր», ասում է Պետրոսյանը, որի հուսահատության դռները դեռեւս ամուր չեն փակվել: Ո՞վ գիտի, գուցե հենց այսօր կգտնվի ընտանեկան ծառը թանկագին նվեր դարձնելու երազանքով ապրող մեկը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008 ԷՋ Ա

ՎԱՂԱՀԱՎԵԼԿԱՆ

unicef

N6(12)

Համակրանքի

Ողջույն, մեզ արդեն հարազաս դարձած աչքեր: Ճիշտ է, մենք ձեզ չենք տեսնում, սակայն զգում ենք, որ միշտ սիրով եք ընթերցում մեզ: Միանալով մեր շնորհակալանքներին եւ բողոքներին, ընդունելով մեր առաջարկները կամ չհամաձայնելով մեր կարծիքների հետ, միեւնույն է, դուք դառնում եք մեր ընկերը: Եվ այսօր մենք ուզում ենք ձեզ հետ դիմավորել Նոր տարին: Մեր ամենամեծ ցանկությունն է, որ 2009 թվականը լինի երեխաների միասնության եւ բարեփոխումների տարի: Երբ մենք լինենք միասին՝ կհաղթահարենք բոլոր փորձությունները, որոնց, ցավոք, հաճախ ենք հանդիպում: Թող այս տարի կատարվեն ձեր բոլոր բարի երազանքները: Ժպիտն ու վառ գույները թող միշտ ուղեկցեն ձեզ, իսկ եթե արցունքներ, ապա միայն՝ երջանկության: Թող մանկությունը մեր լինի անհոգ եւ հեքիաթային:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ

Ժակլին Նիազեանցան, 15 տ.

Սուրբ Ծննդյան տոնածառ

Սուրբ Ծննդյան տոնածառը պետք է յուրահատուկ զարդարել, քանի որ նրա խաղալիքները ունեն հատուկ խորհրդանիշներ: Այս սովորությունը տարածված է հատկապես Եվրոպայում: Օրինակ, խնձորները խորհրդանշում են դրախտային իմաստնությունը: Գեղեցիկ են հրեշտակների արձանիկները, աղավնիները, զանգակները, որոնք խորհրդանշում են Սուրբ հոգին եւ Աստծո գալուստը, ձուկը՝ Հիսուս Քրիստոսի փրկությունը, թեւավոր առյուծը՝ Մարկոս առաքյալին եւ այլն: Տոնածառի գագաթը զարդարում է աստղը, որ խորհրդանշում է բեթղեհեմյան աստղը կամ Քրիստոսի արձանիկը: Կրակներն ու լուսատուները, մոմերը մեծ տեղ են գրավում զարդարանքների մեջ, քանի որ խորհրդանշում են Աստծո լույսը, որը Հիսուս բերեց աշխարհին:

Շնորհավոր Սուրբ Ծնունդ:

Մի Մարտիրոսյան, 16 տ.

Ամանոր-Նավասարդ-Նոր տարի

Նոր տարվա տոնը հին Հայաստանում կոչվել է Ամանոր: Դա հայկական ազգային օրացույցի առաջին օրն էր: Այդ օրը կոչվել է նաեւ կաղանդ, տարեմուտ, տարեգլուխ, լոլե: Սկզբնական շրջանում Ամանորը կապված էր գարնան գարթոնքը նշանավորող Բարեկենդան տոնի հետ, որի ժամանակ իմաստավորվում էր առաջին օրը, առաջին պտուղը, առաջին հանդիպումը եւ ընդհանրապես ամեն ինչի առաջինը: Կատարվում էին ծիսական երգեր, պարեր, խաղեր, թատերական ներկայացումներ, որոնց ժամանակ ցուցադրվում էր այն ամենը, ինչ սպասում էին նոր տարվանից:

Հետագայում Ամանորը տեղափոխվեց Նավասարդի առաջին օր: Այդ օրը համընկնում է օգոստոսի 11-ին: Նավասարդը մինչ այդ եղել է որպես աշնանային բերքահավաքի տոն: Այդ տոնի առաջին օրերին կատարվել են ամենաբազմամարդ տոնահանդեսները: Ուխտավորները հանդիսավոր երթերով խմբվել են Տարոն եւ Բագրեւանդ գավառների սահմանագլխին, սրբազան Արածանի գետի եւ Նպատ լեռան շուրջ, Բագարանի տաճարում տոնելու Նոյ նախահոր եւ ջրհեղեղի, Արամազդ աստվածահոր, Անահիտ դիցամոր հիշատակները: Տոնահանդեսներն ուղեկցվել են զոհաբերումներով, փոխադարձ նվիրատվություններով, խրախճանքներով, երաժշտությամբ, երգ ու պարով, ռազմախաղերով:

Քրիստոնեության մուտքից հետո Ամանորը հարմարեցվել է Քրիստոսի Ծննդյան տոնին: 18-րդ դարում Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի տոմարով հայերը նույնպես հունվարի մեկն ընդունեցին որպես տարվա սկիզբ եւ Ամանորի տոն, որը հիմնականում կրկնում էր ազգային ամանորյա տոների ծեսերը: Պահպանվում էին Ամանորի առթիվ իրար եւ կենդանիներին շնորհավորելու, ծիսական հացեր թխելու եւ հանդիսավորությամբ ուտելու, գուշակություններ անելու ծեսերը: Տատիկիս մտեցի տատը թխել է «տիկնիկ» քաղցր հաց, մեջը դրել ոսկեձյա դրամ: Ում որ բաժին էր ընկնում մետաղադրամը, նա համարվում էր եկող տարվա ամենահաջողակը իսկ մայրիկիս տատիկը թխել է ոչխարի նմանությամբ կեխ ու հինգ կոպեկանոց դրել մեջը: Տատիկս պատմում է, թե ինչ անհամբերությամբ էին ուտում կեխը եւ, թե ինչ երջանիկ էր կոպեկի տերը: Կեխը կերել են դեկտեմբերի 31-ին, ժամը 12-ից հետո, իսկ պահի պահողները միայն Սուրբ Ծննդյան տոնի օրը, այսինքն, հունվարի 6-ին:

Այսօր էլ նոր տարին ամբողջ աշխարհում ամենասպասված եւ ամենաճոխ տոներից մեկն է, որին նախապատրաստվում են մի ամբողջ ամիս: Ամենահաճելի պահերից են տոնածառ զարդարելը, փոխադարձ նվիրատվությունները: Բոլորը ձգտում են սեղանները հնարավորինս ճոխ սարքել: Ինչքան հարուստ լինի սեղանը, այնքան հարուստ կլինի եկող տարին: Իսկ ինչքա՜ն երջանկություն ու բերկրանք են բերում Ձմեռ պապին ու Ձյունանուշը: Ինչ անհամբերությամբ են սպասում փոքրիկները նոր տարվա գալուն: Գիտեն, որ բարձի կամ տոնածառի տակ եւ կամ դռան հետեւում կգտնեն հաճելի, շատ հաճելի նվերներ:

Հաճախ սանում ենք այնպիսի նվերներ, որ երազել ենք ու խնդրել Ձմեռ պապիկից: Թող շուտ գա Նոր տարին:

Այնպե՞ս ենք սպասում որ գալուն, Նոր տարի:

Թենգիզ Մարտիրոսյան, 12 տ.

Նոր հույսեր

Վերջանում է եւս մեկ տարի՝ շատ հիշողություններ պարգեւելով մեզ: Ոմանց համար դրանք բարի են, ոմանց համար՝ ոչ: Նոր տարին բերում է նոր հույսեր եւ ակնկալիքներ: Ամանորի գիշերը մենք տեղափոխվում ենք կյանքի նոր փուլ: Եվ եթե յուրաքանչյուր ոք գիշերն իր համար ամփոփի նախորդ տարին իր թերություններով եւ առավելություններով հանդերձ, ապա հաջորդ տարի միշտ բացթողումներ կլինեն: Այս տարին նշանավոր էր հայերիս համար: Մեր մարզիկները Պեկինի օլիմպիական խաղերից հինգ բրոնզե մեդալներ վաստակեցին, իսկ շախմատիստները դարձան օլիմպիական կրկնակի մեդալակիրներ: Թող որ հաջորդ տարում ավելի շատ հաղթանակներ լինեն:

Լաուրա Եղիազարյան, 14 տ.

Ձեռ պպպը բռնվեյ

Ձմեռ պապը ֆուրը հագին,
Մի մեծ պարկ էլ ուսին,
Շտապում էր շուտ հասնել,
Մանուկներին նվեր բերել:
Հեռու՞-երկա՞ր էր ճամփան
Լապլանդիայից Հայաստան,
Եղնիկներին շուտ հեծնեց
Նվերները հասցրեց:
Երբ նա շուտով տեղ հասավ,
Քնած մանուկ չգտավ,
Երկար սպասեց 12-ին
Եվ մոտեցավ ծխնելույզին:
Քնած էին մանուկները
Փակված էին աչուկները,
Մոտեցավ նա լուռ բարձին,
Դրեց նվերն անկյունին:
Ու համբուրեց նա փոքրին,
Քիթը սառն էր Ձմեռ պապի,
Ցրտից փոքրը շուտ զարթնեց
Ձմեռ պապին տինդ գրկեց:

Ռուզաննա Մովսիսյան, 15 տ.

Սուրբ Նիկողայոս՝ Սանտա Կլաուս

Բոլորն էլ գիտեն, որ աշխարհի տարբեր ժողովուրդներն ունեն Նոր տարվա հովանավոր՝ Ձմեռ պապ, Սանտա Կլաուս եւ այլն: Շատ երեխաների համար դրանք հեքիաթային կերպարներ են: Ես էլ երկար ժամանակ այդպես էի կարծում: Սակայն, վերջերս հայտնաբերեցի, որ Սանտա Կլաուսը՝ Սուրբ Նիկողայոսն իրական մարդ է եղել: Նա ապրել է ժամանակակից Թուրքիայի Դեմրե (Կալե) գյուղի շրջանում (նախկինում՝ Միրա): Նիկողայոսը ծննդով պատարեցի էր, Միրա քաղաքի եպիսկոպոսն էր, քարոզել է մինչեւ իր կյանքի վերջին օրերը: Սուրբ Նիկողայոսը հայտնի էր իր անսահման բարությամբ: Նա համարվում էր նաեւ լիկիացիների ծովագնացության ու առեւտրի հովանավորը: Մինչեւ մեր օրերը պահպանվել է եկեղեցին, որը կրում է Սուրբ Նիկողայոսի անունը: Գիտե՞ք, ես այս ամառ եղել եմ այնտեղ: Նրա անունով արձան կա, որը 2005 թ. փոխարինվել է պլաստիկե Սանտա Կլաուսով:

Դիանա Բաբախանյան, 10 տ.

Ամանոր-Նավասարդ-Նոր տարի

Նոր տարվա տոնը հին Հայաստանում կոչվել է Ամանոր: Դա հայկական ազգային օրացույցի առաջին օրն էր: Այդ օրը կոչվել է նաեւ կաղանդ, տարեմուտ, տարեգլուխ, լոլե: Սկզբնական շրջանում Ամանորը կապված էր գարնան գարթոնքը նշանավորող Բարեկենդան տոնի հետ, որի ժամանակ իմաստավորվում էր առաջին օրը, առաջին պտուղը, առաջին հանդիպումը եւ ընդհանրապես ամեն ինչի առաջինը: Կատարվում էին ծիսական երգեր, պարեր, խաղեր, թատերական ներկայացումներ, որոնց ժամանակ ցուցադրվում էր այն ամենը, ինչ սպասում էին նոր տարվանից:

Հետագայում Ամանորը տեղափոխվեց Նավասարդի առաջին օր: Այդ օրը համընկնում է օգոստոսի 11-ին: Նավասարդը մինչ այդ եղել է որպես աշնանային բերքահավաքի տոն: Այդ տոնի առաջին օրերին կատարվել են ամենաբազմամարդ տոնահանդեսները: Ուխտավորները հանդիսավոր երթերով խմբվել են Տարոն եւ Բագրեւանդ գավառների սահմանագլխին, սրբազան Արածանի գետի եւ Նպատ լեռան շուրջ, Բագարանի տաճարում տոնելու Նոյ նախահոր եւ ջրհեղեղի, Արամազդ աստվածահոր, Անահիտ դիցամոր հիշատակները: Տոնահանդեսներն ուղեկցվել են զոհաբերումներով, փոխադարձ նվիրատվություններով, խրախճանքներով, երաժշտությամբ, երգ ու պարով, ռազմախաղերով:

Քրիստոնեության մուտքից հետո Ամանորը համարեցվել է Քրիստոսի Ծննդյան տոնին: 18-րդ դարում Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի տոմարով հայերը նույնպես հունվարի մեկն ընդունեցին որպես տարվա սկիզբ եւ Ամանորի տոն, որը հիմնականում կրկնում էր ազգային ամանորյա տոների ծեսերը: Պահպանվում էին Ամանորի առթիվ իրար եւ կենդանիներին շնորհավորելու, ծիսական հացեր թխելու եւ հանդիսավորությամբ ուտելու, գուշակություններ անելու ծեսերը: Տատիկիս մտեցի տատը թխել է «տիկնիկ» քաղցր հաց, մեջը դրել ոսկեձյա դրամ: Ում որ բաժին էր ընկնում մետաղադրամը, նա համարվում էր եկող տարվա ամենահաջողակը իսկ մայրիկիս տատիկը թխել է ոչխարի նմանությամբ կեխ ու հինգ կոպեկանոց դրել մեջը: Տատիկս պատմում է, թե ինչ անհամբերությամբ էին ուտում կեխը եւ, թե ինչ երջանիկ էր կոպեկի տերը: Կեխը կերել են դեկտեմբերի 31-ին, ժամը 12-ից հետո, իսկ պահի պահողները միայն Սուրբ Ծննդյան տոնի օրը, այսինքն, հունվարի 6-ին:

Այսօր էլ նոր տարին ամբողջ աշխարհում ամենասպասված եւ ամենաճոխ տոներից մեկն է, որին նախապատրաստվում են մի ամբողջ ամիս: Ամենահաճելի պահերից են տոնածառ զարդարելը, փոխադարձ նվիրատվությունները: Բոլորը ձգտում են սեղանները հնարավորինս ճոխ սարքել: Ինչքան հարուստ լինի սեղանը, այնքան հարուստ կլինի եկող տարին: Իսկ ինչքա՜ն երջանկություն ու բերկրանք են բերում Ձմեռ պապին ու Ձյունանուշը: Ինչ անհամբերությամբ են սպասում փոքրիկները նոր տարվա գալուն: Գիտեն, որ բարձի կամ տոնածառի տակ եւ կամ դռան հետեւում կգտնեն հաճելի, շատ հաճելի նվերներ:

Հաճախ սանում ենք այնպիսի նվերներ, որ երազել ենք ու խնդրել Ձմեռ պապիկից: Թող շուտ գա Նոր տարին:

Այնպե՞ս ենք սպասում որ գալուն, Նոր տարի:

Թենգիզ Մարտիրոսյան, 12 տ.

Ցտեսություն

Վերջանում է մեկ տարի՝ շատ հիշողություններ պարգեւելով մեզ: Ոմանց համար դրանք բարի են, ոմանց համար՝ ոչ: Նոր տարին բերում է նոր հույսեր եւ ակնկալիքներ: Ամանորի գիշերը մենք տեղափոխվում ենք կյանքի նոր փուլ: Եվ եթե յուրաքանչյուր ոք գիշերն իր համար ամփոփի նախորդ տարին իր թերություններով եւ առավելություններով հանդերձ, ապա հաջորդ տարի միշտ բացթողումներ կլինեն: Այս տարին նշանավոր էր հայերիս համար: Մեր մարզիկները Պեկինի օլիմպիական խաղերից հինգ բրոնզե մեդալներ վաստակեցին, իսկ շախմատիստները դարձան օլիմպիական կրկնակի մեդալակիրներ: Թող որ հաջորդ տարում ավելի շատ հաղթանակներ լինեն:

Լաուրա Եղիազարյան, 14 տ.

Հեռախոսազրույց Ձմեռ պապիկի հետ...

3 տարեկան Հրաչիկը, ինչպես շատ բալիկներ, մեծ դժվարությամբ է հաղթահարում ճաշիկները: Ամեն օր ճաշիկի ժամին, ամբողջ ընտանիքը ընկնում է խառնաշփոթի մեջ. ամեն մեկը մի առաջարկ է անում, միայն թե Հրաչիկը ուտի ճաշիկը: Ճաշիկը ուտելու համար նա սանում է բոլոր խոսացած նվերները, ամենաշատը՝ մեքենաներ:

Մի անգամ, երբ ճաշիկի ժամին Հրաչիկը կրկին սկսեց հրաժարվել ուտելուց, նրա հնարամիտ քույրիկը, դիմելով Նոր տարվա տոների մոտակա գալուստից, որոշեց օգնության դիմել Ձմեռ պապիկին: Հեռախոսով ձայնագրեց Ձմեռ պապիկի ձայնը, որը խոսանում էր բազմաթիվ նվերներ բերել եւ անպայման հյուր գալ Հրաչիկին, եթե նա լսի մեծերին եւ ուտի համեղ ճաշիկները: Այնուհետեւ հեռախոսը տվեցին Հրաչիկին, եւ նա ուշադրությամբ լսելով Ձմեռ պապիկին՝ անմիջապես անցավ «գործի» եւ վերջացրեց ճաշիկը ... Բայց նա չի մոռացել Ձմեռ պապիկի խոսքերը եւ անհամբեր սպասում է:

Շուշան Մելիքյան, 15 տ.

Պայքար տնային տնտեսուհու տիտղոսի համար

Շատ հաճախ տանը մենակ մնացած աղջիկները կապում են իրենց մայրիկների գոգնոցները եւ սկսում տունը մաքրել ու ճաշ եփել: Բայց առաջին հայացքից այդքան հեշտ թվացող աշխատանքը գնալով բարդանում է: Իմ ընկերուհիներից մեկը պատմում է. «Երբ տանը մենակ մնացի, որոշեցի կարճ ժամանակով տնային տնտեսուհի դառնալ: Որոշ չափով հաջողվեց փոշիները վերցնել եւ փոշեկուլով մաքրել հատակը: Հետո անցա խոհանոցին, որոշեցի ձվածեղ պատրաստել, բայց ձուն ոչ մի կերպ չէր կոտրվում: Վերջիվերջո կոտրվեց, այն էլ գետնի վրա: Հետո մի կերպ պատրաստեցի: Բայց ուտելուց պարզվեց, որ վառված է»: Մի քանի այլ աղջիկներ էլ ինձ պատմեցին տնային տնտեսուհի դառնալու իրենց արկածների մասին: Գրեթե նույն հաջողություններն էին ունեցել: Կարծում եմ, որ բոլորիս հետ էլ պատահել են զվարճալի դեպքեր: Բայց երբեք ոչ մի երեխա չի հանձնվել եւ շարունակել է պայքարել «Տնային տնտեսուհի» տիտղոսի համար:

Մարիամ Մկրտչյան, 12 տ.

Մանկապատանեկան

unicef

Ով ով է

Սիրելի երեխաներ: Քանի որ մենք շատ հետաքրքրասեր ենք, որոշեցինք մեր եւ ձեր համար պարզել, թե ովքե՞ր եւ ինչպիսի՞ն են Ձմեռ պապը, Ձյունանուշը եւ ամանորյա մյուս հերոսները, որոնք այդքան խորհրդավոր ու բարի են դարձնում Ամանորը: Պարզվեց, որ նրանցից ոմանք իրականում եղել են, իսկ ոմանց էլ բարի մարդիկ են հորինել: Մենք շարունակեցինք նրանց գործը եւ հորինեցինք մեր ամանորյա հեքիաթները՝ նրանց մասին եղած լեգենդները հարստացնելու եւ բարու հաղթանակին անպայման հավատալու համար: Գրեցինք նաեւ իրական պատմություններ, որոնք պատահել են մեզ հետ: Ճիշտ է, այդ պատմությունները մի փոքր ծիծաղելի են, բայց չէ՞ որ Նոր տարի է, եւ բոլորս պետք է ուրախանանք:

Ձյունանուշիկը

Երբեւիցե մտածե՞լ եք, թե որտեղից է հայտնվում Ձմեռ պապի անկրկնելի ուղեկցորդուհին՝ Ձյունանուշը: Բանահավաքները, եւ մասնավորապես, հեքիաթներ հավաքագրող Աֆանասյեւը կարծում է, որ Ձյունանուշը անհայտ տատիկի եւ պապիկի թոռնիկն է եղել: Նրանք շատ էին ուզում երեխա ունենալ եւ ձյունից ստեղծեցին նրան: Ձյունանուշը մի հիասքանչ օրիորդ է՝ գանգուր, խարտյաշ մազերով, որը սպիտակերկնագույն մորթե մուշտակ է հագնում: Գլխին կրում է ութ գագաթ ունեցող թագ՝ արծաթաթել ասեղնագործությամբ եւ մարգարիտներով: Մինչ օրս Ձյունանուշը համարվում է ամանորի ամենագեղեցիկ հերոսներից մեկը:

Մարթա Միսկարյան, 11 տ.

«Ձյուռնգանուշ» Թագուհ տոտգ

Ամանորի երեկոյին երեխաները սպասում էին իրենց երազանքների Ձմեռ պապին ու Ձյունանուշին, ծնողներն էլ՝ հարգարժան հարեւաններին: Վերջապես եկավ սպասված պահը, նրանք ներս մտան եւ հանձնեցին նվերները: Ուրախ մթնոլորտ էր տիրում այնքան ժամանակ, մինչեւ չարածի հնգամյա Նարեկը քաշեց Ձյունանուշի կեղծամը ու փչացրեց տոնական տրամադրությունը: Երեխաները վախեցած հետ-հետ քաշվեցին, տեսնելով Թագուհ տոտային, որից այդքան սարսափում էին: Իսկ փոքրիկ Նարեկը մի կերպ վախը զսպելով ասաց. «Թագուհ տոտա, էդ կեղծամը քեզ հետ չէր սազում, համ էլ բոբոն բոբո ա մնում ...»:

Միրանոյշ Կեսգյան, 16 տ.

Ամանորի գրքեր նվեր

Ձմեռ պապը իր զբաղվածության պատճառով մարդկանց նվերները տալիս է իր օգնականների օգնությամբ: Իր օգնականները՝ էլֆերը, թզուկները մարդկանց ներկայանում են ձնեմարդու, ձյան փաթիլների տեսքով:

Ձյունանուշը նույնպես Ձմեռ պապի նվերներից է:

Անտառում ապրում էին տատիկ եւ պապիկ: Նրանք երեխաներ չունեին: Ամանորին նրանք նստել էին սեղանի շուրջը եւ սպասում էին ժամը 12-ի գալուն: Երբ եկավ 12-ը, պապիկը նկատեց, որ ինչ-որ մեկը թակում է իրենց պատուհանը: Թակողը էլֆ էր, որը նման էր ձյան փաթիլի: Պապիկը մոտեցավ պատուհանին եւ տեսավ, որ այնտեղ ոչ ոք չկա, միայն ձյան փաթիլներ են: Նա նկատեց, որ իրենց բակում աճող եղեւնու տակ սպիտակ, ձյունե բլրակ կա: Դուրս եկավ տնից, մոտեցավ բլրակին, ձեռք տվեց նրան եւ տեսավ, որ նրա տակ փոքրիկ աղջնակ կա: Չնայած դրսի սառնամանիքին, աղջիկը չէր մրսել, քանի որ նա մնացել էր ձյան տակ: Պապիկը հասկացավ, որ Ձմեռ պապը չի մոռացել իրենց եւ որոշել է նվեր անել: Նա վերցրեց աղջկան եւ տարավ տուն: Տատիկին պատմեց, թե որտեղից է գտել աղջկան, եւ նրանք աղջկա անունը դրեցին Ձյունանուշ:

Տաթեւիկ Մելիքյան, 11 տ.

Հրաշքով ճակատագիր Ձմեռ Պապը

Երեխաները շատ են սիրում միասին խաղալ: Շատերն էլ սիրում են ստեղծագործել՝ նոր բաներ ստեղծել: Մի օր ընկերներով որոշեցին կավից մարդուկ պատրաստել: Միասին անցան գործի, կավով ծեփեցին մի մեծ տիկնիկ՝ ձեռք ու ոտքով, մեծ բթով ու բարի աչքերով: Նրանք շատ ուրախացան իրենց ստեղծածով, շատ ափսեցին ու հոգնած, բայց գոհ արածից, գնացին տուն՝ թողնելով մարդուկին խաղահրապարակում: Ձմեռ էր, Ամանորի նախօրեն, ամբողջ գիշեր ձյուն եկավ: Առավոտյան երեխաները հիշեցին իրենց տիկնիկի մասին, վազելով եկան խաղահրապարակ ու ի՞նչ տեսնեն՝ իրենց սիրելի տիկնիկը ամբողջովին պատված էր ձյունով ու մրսում էր: Բոլորն անհանգստացած, տանից բերեցին տաք շորեր, գլխարկ, բուրդ ու կարմիր կոշիկներ, հագցրին նրան, որ չմրսի: Այդ հագ ու կապից հետո տիկնիկը նմանվեց պապիկի, եւ քանի-որ ձմեռ էր, երեխաները նրան անվանեցին Ձմեռ պապ:

Ամանորի գիշերը հանկարծ մի հրաշք կատարվեց. ինչ-որ կախարդանքի շնորհիվ Ձմեռ պապը շունչ առավ: Գուցե հրաշքի պատճառը Ամանորի գիշերն էր, կամ գուցե երեխաների հոգատարությունն ու ջերմ վերաբերմունքը՝ չգիտեմ: Սակայն այդ օրվանից մինչ այսօր, ամեն Ամանոր Ձմեռ պապը շրջում է աշխարհում, այցելում շատ ու շատ երեխաների եւ իր գոյության համար շնորհակալություն է հայտնում նրանց՝ նվերներ բաժանելով: Հրաշքից ծնված Ձմեռ պապը հիմա ինքն է հրաշքներ գործում՝ կատարելով երեխաների երազանքները:

Միհր Ղազարյան, 10 տ.

Լաց կան «Պապիկը»

Նոր տարվա գիշերը 2 տարեկան Վրեժի տուն էր եկել Ձմեռ պապը, բայց հետո լացելով հետ էր վերադարձել: Պատճառն այն էր, որ Ձմեռ պապը Վրեժին նստեցնելով իր ծնկներին փորձում էր ուրախացնել փոքրիկին, սակայն սացվեց հակառակը: Վրեժը պոկելով նրա մորուքը բացահայտեց, որ իրական չէ եւ մատները մտցրեց աչքը: Ձմեռ պապը լացելով տուն վազեց: Եվ այդ ժամանակից Վրեժը Ձմեռ պապիկներին չի հավատում:

Արմեն Գնունի, 13 տ.

Հավատանք հրաշքին

Կար ժամանակ, երբ հավատում էի Ձմեռ պապիկի հրաշք հեքիաթին, տեսնում էի «կապույտ երազներ» եւ սպասում, սպասում...

Բայց մի օր ես նկատեցի, թե ինչպես է մեր տուն հրավիրված Ձմեռ պապիկը արհեստական բեղերի տակից մեծ հաճույքով ծիծաղ խմում: Եվ կոտրվեցին իմ Նոր տարվա կախարդական երազները: Իսկ դրանք այնքա՜ն բարի էին, մանկական ու ազնիվ:

Ու ես հասկացա, Ձմեռ պապիկը ամենազոր չէ, եւ սկսեցի հետագայում հանդիպած «վճարովի» Ձմեռ պապիկներին այլ աչքերով նայել: Իսկ իմ երազներն ու խնդրանքներն այնքան մարդկային էին ...

Ես ցանկանում եմ, որ աշխարհում պատերազմներ չլինեն, մարդիկ բարիանան ու սիրեն իրար, եւ մանուկները հավատան Սանտա Կլաուսի անկրկնելի երազին: Միշտ լինեն մանուկ, որ հրաշքներով, անհոգ խինդով ու ծիծաղով շրջապատվեն, որ կյանքի չար կողմերն անհետանան Ձմեռ պապիկի կախարդական մի հարվածով:

Թող գա Նոր տարին, թող գա...

Մարո Կարապետյան, 13 տ.

Դաժան Ձմեռ Պապը

4-ամյա Արմենը Նոր տարվա գիշերը շատ երջանիկ էր, որովհետեւ սպասում էր հերթական նվերներին: Ահա ժամը 12-ն է, եւ լսվեց դռան զանգը: Արմենը վազեց դեպի դուռը եւ տեսավ մի տոպրակ խաղալիքներ: Այնուհետեւ լսվեցին վախենալու ձայներ: Փոքրիկ Արմենը վազեց դեպի հարազատները եւ լացելով բողոքեց, թե ինչպիսի դաժան Ձմեռ պապ առաջինը այցելեց իրեն: Միայն հետո, երբ նա արդեն մեծ տղա էր, իմացավ, որ դաժան Ձմեռ պապն իրենց հարեւանն է եղել:

Արմեն Գնունի, 13 տ.

Ձմեռ պապիկի քարտուղարուհին

Մի անգամ Լիպարիտը մայրիկի դարակում հայտնաբերեց իր նամակները՝ ուղղված Ձմեռ պապիկին: Նա արագ վազեց քույրիկի մոտ, որպեսզի նրան էլ ապացուցի, որ Ձմեռ պապիկ գոյություն չունի: Տխուր Լիպարիտն ասաց. «Տեսա՞ր, մայրիկը մեր նամակները Ձմեռ պապիկին չի տվել, ինքն է կարդացել ու ինքն է մեզ նվերները տվել»:

Լիպարիտը եւս մեկ անգամ համոզվելու համար հարցրեց մայրիկին.

- Մա՞մ, ճիշտ է չէ՞, որ Ձմեռ պապիկ չկա: Միեւնույն է, ես արդեն տեսել եմ նամակներս:

Մայրիկը բացատրեց.

- Ձմեռ պապ գոյություն ունի, եւ նա կարդացել է քո նամակները, պարզապես նա այդքան տեղ չունի, որ բոլորի նամակները պահի, չէ՞ որ նվերները այնքա՜ն շատ են:

Լիպարիտ Բարսեղյան, 13 տ.

Ձնեմարդ

Ով է Ձնեմարդը: Շատ հեշտ բացատրություն՝ նա ձնե մարդ է: Նա Ձմեռ պապիկի ամենամոտիկ ընկերն է, անձնական «ձնե»-վարորդը:

Ձնեմարդը կախարդական ուժ ունի: Նա այդ ուժն այսպես է օգտագործում: Նախ՝ համոզում է Ձյունանուշիկին այսինչ բակում շատ ձյուն «դնել»: Այնուհետեւ, երբ ձյունով հրապուրված երեխաները բակ են իջնում, կանգնում է բակի մեջտեղում: Երեխաներն ուրախանում են, մոտենում Ձնեմարդուկին եւ հաճախ պատմում Ձմեռ պապից ուզած իրենց նվերների մասին: Իսկ Ձնեմարդը հաջորդ օրը ելնում է եւ հորդորում Ձմեռ պապին իր լսած նվերները պատրաստել:

Ձնեմարդը նաեւ հաշտարարի դեր է տանում, երբ Ձյունանուշը նկատում է, որ ցրված Ձմեռ պապիկը նորից պատռել է թոռնուհու այդքան դժվարությամբ գործած պարկը: Լսելով Ձնեմարդուկին, Ձյունանուշը հանգստանում է եւ շտապ կարկատում պարկը:

Ժանետ Պողոսյան, 13 տ.

Փայտոյի օրագիրը

Այս պատմության հերոսները երկու տարբեր մարդիկ էին: Նրանցից մեկի անունը Փայտիկ էր, իսկ մյուսինը՝ Կախարդանք: Փայտոն, այդպես կոչում էր նրան մայրը, միշտ դժգոհում էր ամեն ինչից, իրեն դժբախտ էր համարում, մեկուսանում էր: Նրան ոչ ոք չէր հասկանում: Նրա միակ հավատարիմ ընկերը իր օրագիրն էր, որի հետ նա կիսում էր իր մտքերը: Փայտոն միշտ օրագրին բողոքում էր, թե ինչու է ինքը մարդ արարած, այլ ոչ թե մի կախարդական փայտիկ, որը միայն երջանկություն, ազնվություն կբերեր մարդկությանը: Մի օր էլ Փայտիկը վիճում է ծնողների հետ ու հեռանում տանից՝ օրագրի հետ: Ճանապարհին հանդիպում է մի տղայի, որը նստել էր գետնին ու անընդհատ ասում էր. «Ես լավն եմ, լավը»: Ծանոթանում են, պարզվում է տղայի անունը Կախարդանք է: Նա ասում է, որ ինքը կարողանում է կախարդություններ անել, այդ պատճառով էլ բոլորը խուսափում են իրենից՝ անգամ ծնողները: Փայտոն ու Կախարդանքը լավ ընկերներ են դառնում: Փայտիկը պատմում է ընկերոջը, որ ցանկանում է կախարդական փայտիկ դառնալ եւ խնդրում է նրա օգնությունը: Կախարդանքը սկզբում մերժում է, բայց հետո համաձայնում է ու ասում կախարդական խոսքերը: Վայրկյաններ անց Փայտոն ոչ թե մարդ էր, այլ առարկա՝ մի փայտիկ, որը օժտված էր հրաշքներ գործելու շնորհով:

Այդ օրվանից բոլոր մարդկանց տներում միայն ուրախության ձայներ էին լսվում: Մարդիկ իրենց ցանկությունները գրում էին Փայտոյի օրագրում, իսկ Կախարդանքը ընթերցելով այն, ընտրում էր բարիները եւ կախարդական փայտիկի հետ միասին կատարում դրանք:

Դիանա Խաչատրյան, 15 տ.

Ամանորի գրքի նվեր

Անտառի ամենամեծ, ամենաբարեղ, ամենակարեւոր բնակիչներից մեկը եղեւնին էր: Երբ մոտեցավ Ամանորը, անտառում բազմաթիվ եղեւնիներ հատեցին: Սակայն գլխավոր եղեւնին վստահ էր, որ իրեն չեն դիպչի: Չէ՞ որ ինքն է անտառի թագուհին: Նա, իհարկե, սխալվեց: Հայտնվեց մի ծառահատ եւ սկսեց սղոցել եղեւնու ոտքը: Թագուհին սաստիկ ցավ զգաց եւ որոշեց օգնել ծառահատին՝ կոտրելով ոտքը ցավից ձերբազատվելու համար: Նրան կտրեցին եւ դրին մեքենայի մեջ մնացած հատված եղեւնիների հետ: Նրանք սկսեցին ձեռք առնել իրեն: Եղեւնին տխրեց, լացեց, զայրացավ: Բայց անիմաստ էր: Նրան շարունակ ծաղրում եւ անպատվում էին: Վերջապես մեքենան կանգ առավ: Բոլոր եղեւնիներին հանեցին, դրեցին ինչ-որ տարօրինակ խաչաձեւ ոտնամանների մեջ եւ կանգնեցրին փողոցում: Մրսում էր եղեւնին, հոգնած էր եւ քաղցած: Հողից սացվող նյութերի զգալի պակաս էր զգում:

Շուտով վաճառողին մոտեցավ մի մարդ, մատնացույց արեց դժբախտ եղեւնուն, գնմամբ վճարեց եւ տարավ իր տուն: Եղեւնին ընկավ անորոշության մեջ: Արդյոք ի՞նչ էր իրեն սպասվում:

Մարդիկ, որոնց տանը պետք է ապրեր եղեւնին, շատ բարի էին: Նրանք տեղադրեցին իրեն տան ամենատեսանելի, ամենահարմար անկյունում, վերանվանեցին «տոնածառ», գույնզգույն հանդերձներ հագցրին, տեսակ-տեսակ խաղալիքներ կախեցին: Եղեւնին շատ արագ ընտելացավ այս ամենին: Ճիշտ է, իր հարազատ անտառում, իր սիրած միջավայրում չէր, բայց իրեն շատ լավ ու երջանիկ էր զգում: Ընտանիքի երեխաները իրեն շատ էին սիրում: Անվերջ պտտվում էին նրա շուրջը, երգում, պարում, թռչկոտում: Եղեւնին սկսեց կարծել, որ իր ամբողջ կյանքն անցկացնելու է այդ ջերմ ու բարի մարդկանց կողքին: Նա նորից սխալվեց: Ամանորից 13 օր հետո՝ Հին Նոր տարվա օրը, նրան դուրս նետեցին: Շուտով նա նորից հայտնվեց մեքենայի մեջ, բայց այս անգամ աղբատարի՝ աղբի տիպ կույտերի մեջ: Եղեւնու սիրտը չդիմացավ: Նա հիվանդացավ եւ իր մահկանացուն կնքեց աղբանոցում:

Մերինե Միսիսյան, 16 տ.

ԼՈՒՅՍ
26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008 ԷՋ 1
ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՌՆՈ
ՈՍԿԵ ԾԻՐԱՆ
GOLDEN APRICOT

Գերլարումով լի արգասաբեր տարի

Այն գունագեղ տրամադրությունը, որ անցնող տարում մեր կինոսերին պարգեւեց «Ոսկե ծիրան» կինոփառատոնը, սփիռում է մտովի ետ բերել գրավիչ եւ անկրկնելի պահերի պատկերաշարը, որ սկիզբ է առնում զարնան վերջին ամսին՝ Կաննի միջազգային կինոփառատոնում առաջին անգամ ներկայացված լինելուց, Փարիզում Ելիսեյան դաշտեր 34 հասցեում ներկայացուցչություն բացելուց, հին ու նոր բարեկամների հետ համարձակ գաղափարներ հղանալուց ու միասին արարման բերկրանք ապրելուց:

Կաննի կինոփառատոնում

Հոբելյանական 5-րդ կինոփառատոնը յուրատիպ էր բազում առումներով, անգնահատելի՝ մարդկային ջերմ ու սրտամոտ փոխհարաբերություններով, միջազգային հայտնի կինոդեմքերի հետ անմիջական շփումներով: Մեր երկրում նրանց դեմառդեմ հանդիպելը շատերի համար իրականությունից անդին մի բան էր թվում: Ոտիպ մեկ շաբաթ կինոհանդիսատեսի ամեն մի նոր բացվող օրը դարձել էր իսկական կինոարվեստի հետ շփվելու մեծագույն հրճվանք:

Փառատոնին առանձնակի փայլ տվեց իտալական կինոյի մեծանուն վարպետ Միքելանջելո Անտոնիոնիի ֆիլմերի հետահայաց ցուցադրությունն ու գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը, որոնց առիթով առաջին անգամ Հայաստան եկավ կինոբեմադրիչի չքնաղ տիկինը՝ Էնրիկա Անտոնիոնին, որի բոկոտն, անբռնազբոս պարը՝ հայկական պարեղանակի ներքո, անմոռանալի պատկեր մնաց բոլոր նրանց աչքերում, ովքեր փառատոնի բացման օրը ներկա էին «Երեւանյան գիշերներ» ռեստորանում հյուրերի պատվին տրված ճաշկերույթին: Էնրիկա Անտոնիոնի, Վիմ եւ Դոնաթա Վենդերսներ, Դարյուշ Մեհրջուի, Գորան Պասկալեւիչ, Կատրին Բրեյա, Ռոման Բալայան, Ատոմ Էգոյան, կարելի է երկար թվարկել փառատոնի պատվավոր հյուրերի անունները, որոնցից ամեն մեկը Հայաստանին նվիրաբերեց իր հոգու լույսն ու ներշությունը:

Փառատոնը բացվեց ու փակվեց հայ ռեժիսորների նոր ֆիլմերով՝ Ռոման Բալայանի «Դրախտի թռչուններով» եւ Ատոմ Էգոյանի «Երկրպագությամբ»: Վերջինն արդեն մրցանակակիր էր՝ Կաննի կինոփառատոնում արժանացել էր էկումենիկ ժյուրի հեղինակավոր մրցանակին: Էգոյանի ներկայությունը ոգեշնչել էր հայաստանցի եւ հարեւան երկրների երիտասարդ այն կինոբեմադրիչներին, որոնք բացառիկ առիթ ունեին մասնակցելու նրա վարպետության գործնական դասերին:

Առաջին անգամ կյանք մտած մտահղացումներն այնքան շատ էին, որ իսկապես դժվար է «առաջին անգամ» բառերը հաճախակի կրկնելուց խուսափելը: Համահայկական կինոնախագիծ՝ տարբեր երկրներում ստեղծագործող հայ կինոգործիչների մասնակցությամբ, ըստ նախագծի, մասնակիցներից յուրաքանչյուրը կնկարահանի «Տուն» (խաղարկային) եւ «Հող» (վավերագրական) խորագրերով 10 րոպե տեւողությամբ ֆիլմեր, որոնք 2 տարի անց կմիավորվեն ու կցուցադրվեն կինոփառատոնում:

Կինոլրագրության դասընթաց, որի առաջին փուլն անցկացվեց մայիսին՝ Ծաղկաձորում, անվանի կինոգետ Կիրիլ Ռոզլոգովի դասախոսությամբ, իսկ երկրորդը՝ փառատոնի բացումից 2 շաբաթ առաջ՝ հոլանդացի կինոքննադատ Փիթեր վան Բուերենի եւ կինոխմբագիր Անդրե Վաարդենբուրգի գործնական դասերով: Մասնակիցների մեջ կային թե փորձառու, թե սկսնակ լրագրողներ Հայաստանից, Մոլդովայից, Թուրքիայից, Բուլղարիայից:

«Ոսկե ծիրան» փառատոնային օրաթերթ՝ հայերեն եւ անգլերեն էջերով, գործնական դասընթացին մասնակցած լրագրողների նյութերով: Թերթի ծնունդը ոգեւորիչ էր շատերի համար. Ատոմ Էգոյանն այն համարեց հրաշալի երեւույթ փառատոնի կյանքում: Այդպիսի երեւույթներն, իրոք, շատ էին:

Փառատոնի փառահեղ փակումը «Լաթար» համալիրում բնավ ավարտ չէր ազդարարում, այլ նոր գործերի սկզբնավորում՝ «Ոսկե ծիրանը անիվների վրա» Շուշի, Գյումրի, Ջավախք, Կապան հասցնելուց հետո կովկասյան տարածաշրջանային կինոդպրոցի պաշտոնական բացումն ամենայն ուրախությամբ տոնելու: Վարպետության գործնական դասեր անցկացնելու համար Հայաստան եկավ իրանցի հանրահայտ կինոբեմադրիչ Աբբաս Քյառոստամին՝ իր 10 սաների հետ: Նրա անունը լսելով մեր երկիր շտապեցին վրացի եւ թուրք կինոբեմադրիչներ, մյուսների հետ շրջապատվեցին Քյառոստամիի հոգատարությամբ ու սիրալիրությամբ, ճանաչեցին մեկմեկու, նորովի գնահատեցին իրենց ուժերն ու միասին ստեղծեցին մոտ 15 կարճամետրաժ ֆիլմեր, որ յուրաքանչյուրի կյանքում պիտի հիշվեն որպես սահման ու տեղողություն չունեցող անմոռաց դրվագներ: Երեւանյան ջերմառաս աշունը նախանձելի ավյուն էր տվել նրանց. «Երանի եղանակն այսպես արետս լինի եւս մի քանի օր: Եղանակի տեսությունն ի՞նչ է ասում: Հանկարծ անձրեւ չգա՞ վաղը, կամ մյուս օրը: Երանի տաք լինի, որպեսզի ուսանողները հասցնեն ավարտել նկարահանումները», ասում էր Քյառոստամին: Այդպես էլ եղավ:

Դեկտեմբերի առաջին օրերին կինոփառատոնը դիմավորեց սամբուկցի այն 10 կինոբեմադրիչներին, որոնք «Անադոլու ֆյուլթուր» մշակութային միության հետ համագործակցելով ցանկանում են հայ կինոբեմադրիչների հետ համատեղ ֆիլմեր նկարահանել: Նրանց այցը շարունակությունն էր այս տարվա ապրիլի 11-14-ը Սամբուլում կայացած «Հայացք պատմական ֆիլմերին» թեմայով սեմինարի, որը ներառված էր Սամբուլի 27-րդ միջազգային կինոփառատոնի ծրագրում: Երեւանյան սեմինարը կրում էր «Կինոն որպես մշակութային երկխոսության միջոց» վերնագիրը:

Անցնող տարվա վերջին ամիսը նոր գործերի սկիզբ դրեց ոչ միայն փառատոնի, այլեւ նրա տնօրեն, կինոբեմադրիչ Հարությունի Խաչատրյանի ստեղծագործական կյանքում: Որպես «Արքայազն Քլաուսի» մրցանակակիր նա հրավիրվեց Ամստերդամ՝ ներկա լինելու այս տարվա մրցանակաբաշխությանը եւ Հոլանդիայի թագուհու ընդունելությանը, որ տեղի է ունենում ամեն տարվա դեկտեմբերին՝ ի պատիվ այդ մրցանակին արժանացած տարբեր մասնագիտությունների տեր ինքնատիպ մտածողություն ունեցող անհատականությունների: Թագուհու հետ ճաշելու առիթը ծնունդ տվեց նոր նախագծերի. «Արքայազն Քլաուս» հիմնադրամը ցանկություն հայտնեց համագործակցելու «Ոսկե ծիրան» կինոփառատոնի «Ռեժիսորներ առանց սահմանների» ծրագրի հետ եւ հաջորդ տարվանից մրցանակ հանձնելու տարածաշրջանային լավագույն նախագծին: Նաեւ առաջարկեց փառատոնի ժյուրիի կազմում ընդգրկել հոլանդացի կինոգետի: «Դա ուրախալի լուր է, որովհետեւ Հայաստանը տարածաշրջանում դառնում է այն երկիրը, որտեղից կարելի է տարբեր կինոֆոնդերից որոշակի օգնություն ստանալ կինոնախագծերի համար», ասում է Հարություն Խաչատրյանը:

Ամստերդամից նա մեկնեց Կոպենհագեն՝ մասնակցելու Եվրոպական կինոակադեմիայի նիստին եւ մրցանակաբաշխությանը: «Հրաշալի էր, որ մրցանակակիրների թվում էր նաեւ այս տարվա «Ոսկե ծիրանի» պատվավոր հյուր Վիմ Վենդերսը: Կարծում եմ, նրա նոր ֆիլմը եկող տարի կդառնա մեր փառատոնի բացման ֆիլմը, իսկ փակման ֆիլմ կընտրենք Աբբաս Քյառոստամիի ֆիլմերից: Այդ երկու մեծ վարպետների ֆիլմերով փառատոնը բացելն ու փակելը մեզ համար մեծ պատիվ է: Հայկական նոր ֆիլմով կբացենք «Հայկական համայնապատկեր» ծրագիրը: Դեռ ժամանակ ունենք մտածելու:

Ուրախալի էր նաեւ, որ ակադեմիայի նիստին մասնակցած ռեժիսորների մեծ մասը տեղյակ էր մեր փառատոնի մասին, անշուշտ, Վիմ Վենդերսի միջոցով: Նա այնքան գրավիչ էր ներկայացրել մեր փառատոնը, որ շատերի մեջ Հայաստան գալու ցանկություն էր առաջացրել: Այնտեղ էր նաեւ գերմանացի հայտնի կինոռեժիսոր Վոլկեր Շլյոնդորֆը, եկող տարի նա մեր փառատոնի հյուրն է լինելու, նաեւ խոստացել է վարպետության դասեր անցկացնել: Զրուցեցի «Դոգմա 95» շարժման հիմնադիրներից մեկի՝ Լարս ֆոն Թրիերի հետ: Նա նույնպես ցանկություն հայտնեց Հայաստան գալու, բայց վախենում է թռիչքից եւ առհասարակ ինքնաթիռ չի նստում: Եկող տարի փառատոնի ծրագրերից մեկն անդրադարձ կնվիրեն «Դոգմային»: Այն ուսուցանում է, թե ինչպես կարելի է արվեստի գործեր ստեղծել ֆինանսական նվազագույն միջոցներով:

Տարեմուտից առաջ ուզում եմ հավատալ, որ 5 տարի սպասելուց հետո եկող տարի ի վերջո «Ոսկե ծիրանը» կունենա իր գրասենյակն ու կինոդպրոցի համար անհրաժեշտ սենյակները: Կինոն մշակութային երկխոսության հզոր գենք է, բայց մեզանում շատերին թվում է, թե դա ընդամենը շոու է, ինքնացուցադրման միջոց: Պետք է մարդկանց մեկընդմիշտ հասկացնել, որ ֆիլմեր ստեղծողը պատասխանատու է իր երկիրը, ազգը, մշակույթը ճշմարիտ պատկերելու, աշխարհին ներկայացնելու եւ հետաքրքրություն առաջացնելու համար:

Հոլանդիայի թագուհու հետ զրույցի պահին

Էնրիկա Անտոնիոնիի հետ մեր ազգային պատկերասրահում

Հուլիսին մեր երկրի նախագահը խոստացավ ինձ հրավիրել իր մոտ եւ լուծել փառատոնի բոլոր ցավոտ հարցերը: Հուսով եմ, այդ հանդիպումը եկող տարի կկայանա:

Միջազգային ֆինանսական ճգնաժամը մեծ բարդություններ է ստեղծում կինոփառատոնների համար, դժվարանում է նաեւ անվճար ֆիլմեր ձեռք բերելը, այնպես որ, հաջորդ տարի մեզ դարձյալ ծանր աշխատանք է սպասում: Հույս ունենք, որ փառատոնի բարեւարները՝ «ՎիվաՍել» ընկերությունը, «Նուշիկյան ասոցիացիան», Երեւանի կոնյակի գործարանը, «Լաթար» համալիրն ու մյուսները մեր կողքին կլինեն եւ կօգնեն հասնելու ավելի մեծ հաջողությունների», ասում է Հարություն Խաչատրյանը:

Նրա ստեղծագործական կյանքում հուզումնառաս իրադարձություն տեղի կունենա նոր տարվա հենց առաջին ամսին՝ հունվարի 24-ին, Ռոտերդամի կինոփառատոնում, իր նոր «Սահման» ֆիլմի առաջին ցուցադրությամբ: Ֆիլմը նկարահանվել է Ռոտերդամի փառատոնի եւ Հյուբերտ Բալս հիմնադրամի աջակցությամբ:

Ֆիլմի մասին տպավորիչ խոսքեր են ասել Աբբաս Քյառոստամին եւ Ատոմ Էգոյանը: Մեր նախորդ կինոհավելվածում Քյառոստամին հիացական կարծիք էր հայտնել «Սահմանի» մասին.«Այդ ֆիլմն ինձ վրա այնքան ուժեղ տպավորություն թողեց, որ երբեք չեմ մոռանա»:

Ֆիլմը դիտելուց հետո ահա թե ինչ է ասել Ատոմ Էգոյանը. «Ցափազանց ուժեղ եւ բնական զգացմունքներով լի ֆիլմ է: Որոշ իմաստով դա հենց այն է, ինչ կինոն կարող է տալ հանդիսատեսին՝ կյանքի անմիջական փորձառությունը զուտ տեսողական միջոցով մատուցել զգացական աշխարհ ներթափանցելով: Ճանապարհին գոմեշ վազելու եւ ֆիլմի վերջում հրդեհի տեսարաններն ուղղակի անմոռանալի են: Արտակարգ ստեղծագործություն է»:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Աբբաս Քյառոստամին եւ մյուս հյուրերը Փարաջանովի բանգարանում

Հայ-թուրքական կինոնախագիծ՝ փշերը չանտեսելու պայմանով

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

«Հայ-թուրքական համատեղ կինոնախագիծ» ձեւակերպումն իսկ թերահավատություն կարող է առաջացնել հայերի զգալի մասի մեջ՝ Հայաստանում եւ սփյուռքում: Սփյուռքահայ մի բարեկամուհի դեկտեմբերին Երեւանում կայացած թուրքական մշակութային միջոցառումների առիթով մեզ ուղղած նամակում գրեց հետեւյալը. «Եթէ ինծի հարցնես՝ այսպիսի բարեկամական բաներու բնաւ պէտք չկայ, ամէնը խոշոր սուտեր են: Ամէն անգամուն, որ այս երկրին հետ մերինին բարեկամական կապերու մասին կը խօսուի, փորս գաւեր կը մտնէ: Միայն թէ Հրանտ Դինքն մաղթածը, «խենթ» երազը իրականանայ: Ասկէ զատ ասոնց իմ մարդոց, երկրիս հետ յարաբերութիւն ունենալը պղծութենէ զատ բան չ'ըլլար»: Ուրիշները, լինելով պակաս կտրուկ, ողջունում են ամեն կարգի համագործակցության ջանք՝ անցյալը չմոռանալու պայմանով: Մենք եւս նման դիրքորոշումը ճիշտ ենք համարում՝ հույս ունենալով, որ հայ-թուրքական հարաբերությունների վերջին զարգացումը եւ առողջ դաշտության տեր թուրք մտավորականների թվի մեծացումը տեղ կարող է բացել՝ համատեղ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Իսկ արվեստի եւ մշակույթի դերը նման հարցերում չպետք է թերագնահատել: Երկու երկրների նախագահները կարող են հանդիպել, համատեղ ֆուտբոլի մրցախաղն անցնի առանց որեւէ պատահարի, սակայն նման միջոցառումներից առավել կարեւոր կարող է լինել մշակութային համագործակցությունը: Եվ ի՞նչը կարող է լավագույն արտահայտությունը լինել՝ միմյանց փոխադարձ ճանաչելու եւ հաշտության եզրեր գտնելու համար, եթե ոչ պարզ եւ հասկանալի դիպաշար ունեցող խաղարկային կինոնկարը: Ընդգծում եմ խաղարկային կինոյի կարեւորությունը, քանի որ արդեն իսկ առկա են հայ-թուրքական հարաբերությունների խնդրին առնչվող թուրքական կարճամետրաժ փաստագրություններ (օրինակ, Ալի Բերքիլի ֆիլմը Հրանտ Դինքի մասին կամ Մեհմեթ Բինայի «Շշնջացող հիշողությունները» նախկին հայաբնակ թուրքական մի գյուղի մասին), որոնք թեեւ արդեն որոշակի փորձիկ արահետներ բացել են, սակայն մնում են շատ նեղ հանդիսատեսի սահմաններում:

Եվ ի՞նչ կշահեն երկու կողմերը հայ-թուրքական համատեղ կինոնախագծից: Արդյո՞ք պետք է ընտրել ինչ-որ չեզոք թեմա, որը կարծես չի ունենա անցյալի եւ քաղաքականության հետ եւ կիսատաղնդի լոկ գեղարվեստական նպատակներ: Սկզբի համար գուցե պետք է ֆիլմ՝ առանց որոշակի ազգության հերոսների եւ մեկ այլ մոլորակում կատարվող իրադարձություններով: Սակայն նման ձեւական եւ ինքնանպատակ նախագիծը ոչ մի դեր չի կարող կատարել:

Իսկ նման հարցում կարելի՞ է գտնել ոսկե միջին: Կարելի է հայ-թուրքական պատմական համատեղ հարուստ անցյալից գտնել ուրույն հետաքրքրություն ներկայացնող ուշագրավ մի պատմություն՝ առանց դիպչելու որեւէ կողմի ինքնասիրությանը: Սակայն ի՞նչ կտա այսօրվա հանդիսականին, դիցուք, 19-րդ դարի պոլսահայ դերասանուհի Մարի Նվարդի ողբերգական սիրո էկրանավորումը, այն զգայուն արվեստագիտուհու, որն անկարող օրինականացնելու իր սիրային կաղը թուրք գրողի հետ՝ ինքնասպան է լինում բեմի վրա, դերը կատարելիս, եւ նրա մահով թուրք հասարակությունն առաջին անգամ հանդարտեն սգում է մի հայուհու մահը: Նման պատմությունները, լինելով ինքնին հետաքրքրական, կարող են միայն պատկերացում տալ հայերի եւ թուրքերի համատեղ անցյալի մասին՝ մնալով սոսկ զգայացունց պատմության շրջանակներում, չխախտելով քաղաքականապես ճշտության սահմանները եւ խուսափելով խնդրահարույց նյութերից:

Ես մշտապես այն համոզմանն եմ եղել, որ կարիք չկա նպատակ դնել աշխարհին հրամցնելու համար Մեծ եղեռնի մասին կինոնկարներ, սակայն տվյալ պարագայում ավելի քան համոզված եմ, որ հայ-թուրքական կինոնախագիծը պետք է շոշափի հենց այս հարցը:

Ինչպես Շառլ Ազնավուրն է գրել իր «Նամակ թուրք բարեկամին» բանաստեղծության մեջ, «Դու ոսիդդ մեջ փուշ ունես, եղբայր, ես՝ սրտիս մեջ»:

Ցավոք, հայ-թուրքական մշակութային համագործակցություն չի կարող լինել՝ անտեսելով այս փոխաբերական փշերը:

Վերջին տասնամյակում ասպարեզ իջած մի քանի թուրք հեղինակներ (Քեմալ Յալչընը, Ֆեթհիյե Չեթին, էլիֆ Շաֆակ), ովքեր համարձակ հայացք ունեն հայ-թուրքական անցյալի վրա, իրենց հատորներում ձգտում են ցույց տալ Թուրքիայի հայերի անցյալն իր ողջ լուսաստվերով: Ահա նման կարգի գրությունները էլ կարող են գերազանց նյութ հանդիսանալ հայ-թուրքական կինոնախագծերի համար՝ արտահայտելով առաջադեմ թուրք մտավորականների դիրքորոշումը:

«Էական հարցն այն է, թե ինչպե՞ս մենք պետք է ի հայտ բերենք այդ փորձառությունը, - հարց է տալիս Էֆայլ պետք է օգտագործել: Ես հայ-թուրքական շփումների բազմաթիվ օրինակներ կարող եմ բերել:

Թուրք կինոբեմադրիչները երեւանյան սեմինարում

Հարցազրույց թուրքական «Անադոլու քյուլթուր» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Չիգդեմ Մաթեր Ուտկուի հետ

- Ինչպե՞ս սկիզբ դրվեց Հայաստանի հետ համագործակցությանը:

- Դա սկսվեց 2005թ Դիարբեքիրում «Իրավունքի սպառում» խորագրով կազմակերպված ցուցահանդեսի ժամանակ: Մասնակից արվեստագետներից մեկը Ռուբեն Արեւշատյանն էր, ում հետ հենց տեղում ծանոթացանք: Դրանից հետո Կարսի մշակույթի կենտրոնի բացման առիթով հայկական երաժշտախումբ հրավիրեցինք, շատ սիրելի բազմաթիվ բարեկամներ ձեռք բերեցինք, սկսեցինք աշխատել Հայաստանում «Կովկասյան լրատվամիջոցների ինստիտուտի» հետ: 2006-ին սկիզբ դրվեց «Ոսկե ծիրանի» հետ համագործակցությանը: Ստամբուլում եւ Դիարբեքիրում հյուրընկալեցինք կինոգետ Արծվի Բախչինյանին, որը հայկական ժամանակակից ֆիլմեր ներկայացրեց ու հանդես եկավ հայ կինոյի մասին դասախոսություններով: «Ոսկե ծիրանի» հետ հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ ընթացիկ տարվա ապրիլին՝ Ստամբուլի 27-րդ կինոփառատոնի շրջանակներում: Կազմակերպվեց «Կինոն եւ պատմությունը» թեմայով սեմինար, որին մասնակցեցին Հայաստանից ժամանած 12 կինոգործիչներ:

- Ձեր երկրում ինչպե՞ս են արձագանքում այս համագործակցությանը:

- Մինչ այսօր ոչ մի բացասական արձագանք չենք ունեցել, եւ հայկական ֆիլմերի ցուցադրությունները միշտ անցել են լեփ-լեցուն դահլիճներում:

- Ի՞նչ հեռանկարներ եք տեսնում այսպիսի համագործակցությունների առդյունքում: Արդյո՞ք դրանք կնպաստեն երկու ժողովուրդների միջեւ առողջ փոխհարաբերությունների ստեղծմանը, թե՞ հերթական բնույթ կկրեն:

-Կարծում եմ, վերջին տարիների շփումների արդյունքում մշակութային համագործակցության ճանապարհները բաց են մեր առջեւ՝ անսահմանափակ հնարավորություններով: Սա միայն մեր կազմակերպության կատարած աշխատանքի արդյունքը չէ: Ընդհանուր առմամբ, հայ- թուրքական հարաբերությունները նաեւ պետական առումով շատ դրական առաջընթացներ են գրանցել: Եթե Թուրքիայի տեսանկյունից խոսեմ, անպայման պետք է ընդգծեմ, որ դա մեր սիրելի Հրանտ Դինքի բացած եւ իր կյանքի գնով վճարած ճանապարհն է: Եվ ամենաքիչը, որ կարող ենք անել Դինքի հիշատակը հարաբերությունների բարելավմամբ պատվելն է: Իրականում մենք շփման կարիք շատ ունենք: Այդ պատճառով էլ մտածում եմ, որ հայ-թուրքական հարաբերությունների հստակեցմանը նպաստող ամեն մի

Հրանտ Դինքի բացած ճանապարհով

Հարցազրույց թուրքական «Անադոլու քյուլթուր» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Չիգդեմ Մաթեր Ուտկուի հետ

- Աբաքուրի մասին թուրքական արտադրության «Մուսաֆա» ֆիլմը ձեր երկրում վերջերս մեծ աղմուկ բարձրացրեց՝ առիթ տալով հակասական քննարկումների: Դիտե՞լ եք այդ ֆիլմը:

- (Ժպտում է) Ոչ թե հակասական, այլ միանշանակ կարծիք կար: Իհարկե, վատ կարծիք: Քեմալականներն անհանգիստ էին

- Այսօր պատմական ֆիլմերը պատմական վեպերի պես շատ հանրահայտ են դառնում, իսկ համաշխարհային կինեմատոգրաֆում Հայոց ցեղասպանության մասին պատմող մի շարք ֆիլմեր արդեն կան: Ծանո՞թ եք այդ ֆիլմերին եւ ի՞նչ կարծիք ունեք դրանց մասին:

- Այդ թեմայով նկարահանված երկու ֆիլմ եմ դիտել՝ Ատոմ Էգոյանի «Արարատը» եւ Տավիանի եղբայրների «Արտույտների ագարակը»: Որպես կինոկրթություն ստացած մարդ, պիտի ասեմ, որ Էգոյանը համաշխարհային կինոյի 90-ական թվականների ամենաականավոր անհատներից է, բայց պիտի խոստովանեմ նաեւ, որ «Արարատը» ոչ թե իրականությունը ներկայացնելու ձեւով, այլ որպես ֆիլմ չեմ ընդունում: Կարծում եմ, այս ֆիլմում Էգոյանը շատ է տրվել կլիշեներին: Վատ չեմ զգում այս բանն ասելու համար, որովհետեւ հայ եւ ամերիկացի շատ կինոքննադատներ նույնն են ասում: Իսկ ահա մեկ այլ տեսանկյունից նայելով ասում եմ, որ մեզ համար «Արարատը» ուսուցողական նշանակություն ունի: Ես կողմնակից եմ, որ Հայոց ցեղասպանության թեմայով տասնյակ ֆիլմեր նկարահանվեն: Բացի դրանից պետք է հետեւողականորեն կազմակերպել այդ ֆիլմերի ցուցադրումն ու տարածումը Թուրքիայում, բայց դա պետք է անցնի «խաղաղասեր» կինոյի ճանապարհով: Անցյալը երբեք չենք մոռանա, բայց ապագային պետք է միասին նայենք: Հայոց ցեղասպանությունն իմ ապրած հողի պատմական ամենամեծ ամոթն է:

- Իսկ իրատեսական համարո՞ւմ եք ցեղասպանության թեմայով հայ-թուրքական համատեղ արտադրության ֆիլմ նկարահանելու գաղափարը, եթե, իհարկե, նման գաղափար երբեւէ ծնվի:

- Չգիտեմ, նման նախաձեռնություն կարող է պատահել, բայց, կարծում եմ, այս թեմային թուրք ժողովուրդը պետք է միայնակ մոտենա եւ ինքնուրույն գլուխ հանի:

Հարցազրույցը՝
ՆՎԱՐԴ ՄՈՒՍՎԵԼՅԱՆԻ
Թարգմանեց՝
ՏԻԳՐԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՅԱՆ

Նոր ֆիլմեր

Կադր «Հայաստանի վերջին լարախաղացը» ֆիլմից

Հաջորդ տարի կներկայացվի երկու նոր ֆիլմ

Մեկը դրամատիկ, մյուսը՝ էկզոտիկ

ԱՐԵՎԻԿ ԲԱԳԱԼՅԱՆ

«Ոսկե ծիրան» եւ միջազգային այլ կինոփառատոնների մրցանակներին արժանացած «Մարդկային ողբերգություններ պատերազմի եւ խաղաղության օրերից» ֆիլմի ավարտից հետո ռեժիսոր Վարդան Հովհաննիսյանն իր հաջորդ ֆիլմի համար «թեթեւ եւ ոչ դրամատիկ» թեմա էր փնտրում: «Քենիայի Լամո կղզու բնակիչների առօրյան ճիշտ այդպիսին էր», ասաց նա: «Donkeymentary» (բառախաղը հայերեն կարելի է թարգմանել ավանակափաստագրություն) աշխատանքային վերնագիրն ունեցող ֆիլմի ռեժիսորներն են Վարդան Հովհաննիսյանը եւ Արման Երիցյանը: Ֆիլմի հերոսներն ավանակներն են, պատմությունն էլ հենց նրանց մասին է: Ֆիլմի հեղինակներն ավելի քան մեկ ամիս ապրել են կղզում, նկարահանումներ կատարել, ծանոթացել մարդկանց հետ ու գտել իրենց ֆիլմի հերոսներին:

Կադրեր "Donkeymentary" ֆիլմից



Լամո կղզում ապրում է 20.000 մարդ: Նրանք ունեն 6000 ավանակ եւ 2 մեքենա, որից մեկը քաղաքապետինն է, մյուսը՝ կղզու անասնաբույժինը: «Գլոբալացումից դուրս մնացած կղզում նահապետական կարգեր են, ապրում են աղքատ, բայց՝ երջանիկ: Ավանակներն այստեղ ապրում են մարդկանց հետ նույն տներում, ճանապարհներն այնքան նեղ են, որ միայն ավանակները կարող են անցնել: Բնակիչներից միայն մեկն էր լսել Հայաստանի անունը: Նրանք զարմացել էին, թե այդ ինչն է մեզ այդպես հետաքրքրել իրենց կղզում», պատմեց Արման Երիցյանը: «Կղզին իսկական դրախտ է: Բնակիչները հարստության մասին չեն երազում, նրանց միայն հարկավոր է, որ իրենց ավանակներն առողջ լինեն», ասաց Վարդան Հովհաննիսյանը:

Ֆիլմի հեղինակները նորից են գնալու Լամո՝ նկարահանումներն ավարտելու: «Այս փուլում նկարահանումներն ավարտված են 60-70 տոկոսով», ասաց Վարդան Հովհաննիսյանը: Ռեժիսորը նաեւ «Բարտ մեդիայի» հիմնադիրն է: Ստուդիան կազմավորվել է 1993 -ին՝ որակյալ վավերագրական ֆիլմեր ստեղծելու նպատակով: Ստուդիայի աշխատակազմը տուն է գնում ուշ երեկոյան: Առօրյա աշխատանքից բացի, այստեղ զբաղված են միանգամից 2 վավերագրական ֆիլմի արտադրությամբ: «Հայաստանի վերջին լարախաղացը» եւ «Donkeymentary» աշխատանքային վերնագրերն ունեցող ֆիլմերը հանդիսատեսին կներկայացվեն հաջորդ տարի:

«Հայաստանի վերջին լարախաղացը» վավերագրական ֆիլմի ռեժիսորներն են Արման Երիցյանը եւ Իննա Սահակյանը: Ֆիլմը մոնտաժային փուլում է, հեղինակները հույս ունեն այն ամբողջովին ավարտել մինչեւ հաջորդ ամառ: Նկարահանման աշխատանքները սկսվել էին մեկ տարի առաջ: «Ֆիլմը պատմում է լարախաղացության ավանդույթների մասին: Արվեստն անհետացման եզրին է կանգնած: Մեր նպատակն է՝ ներկայացնել ֆոլկ արվեստի այս տեսակի պատմությունը: Երբ սկսում էինք նկարահանումները, Հայաստանում լարախաղացների ընդամենը 3 խումբ էր գործում, այժմ միայն մեկն է մնացել», ասաց Իննա Սահակյանը:

«Ժողովրդի երբեմնի սերը վայելող փահլեւանների արվեստը մոռացության է տրվում, իսկ լարախաղացությամբ զբաղվողները համեմատվում են մուրացկանների հետ: Երիտասարդները հրաժարվում են զբաղվել լարախաղացությամբ՝ այն համարելով ոչ ժամանակակից: Գործին տիրապետող հատուկենտ վարպետները ողբերգություն են ապրում՝ ականատես լինելով սեփական արվեստի անհետացմանը: Ֆիլմի նպատակներից է ցույց տալ հասարակության արժեքային համակարգի փոփոխությունը», ասաց Արման Երիցյանը:

Ֆիլմի գլխավոր հերոսը՝ վերջին լարախաղացը, Հովսեփ Բեգլարյանն է: Նա 16 տարեկան է, այդ արվեստին տիրապետող միակ երիտասարդն է: Վերջին լարախաղացը դեռ որոշում չի կայացրել, արդյոք ապագայում կզբաղվի լարախաղացությամբ, թե՞ ոչ:

«Լարախաղացությունը Հայաստանում պահպանել է իր արխայիկ ձեւը: Ֆոլկ արվեստի այս տեսակը մեր ազգային բացառիկ հարստությունն է, որի պահպանման համար ոչինչ չի արվում», նշեց Իննա Սահակյանը:

«Հայաստանի վերջին լարախաղացը» վավերագրական ֆիլմը 52 րոպե տեւողությամբ է, նկարահանվել է «Ոսկե ծիրան» կինոփառատոնի աջակցությամբ:

Կադր «Հայաստանի վերջին լարախաղացը» ֆիլմից

Տպավորություններ մոսկովյան միջազգային կինոդպրոցից

Մերձմոսկովյան Բելիե Ստոլբի փոքրիկ քաղաքում վերջերս բացվել է միջազգային առաջին կինոդպրոցը, որի դասընթացին Հայաստանից մասնակցել է երեք ներկայացուցիչ: Կինոդպրոցն իր շուրջն է համախմբել նախկին ԽՍՀՄ եւ Բալթյան երկրների երիտասարդ կինոգործիչներին, նրանց համար ցուցադրել տասնյակ ֆիլմեր, կազմակերպել այց «Մոսֆիլմ» կինոստուդիա, քննարկել նոր գաղափարներ իրականացնելու բոլոր հնարավորությունները:

«Այս քաղաքում է գտնվում աշխարհի խոշորագույն կինոարխիվներից մեկը, ուր պահվում են խորհրդային Միությունում նկարահանված ֆիլմերի բնօրինակները, խորհրդային տարիներին ցուցադրված արտասահմանյան ֆիլմերը, ինչպես նաեւ «Հայֆիլմ» կինոստուդիայում արտադրված կինոնկարների բնօրինակները», պատմեց կինոդասընթացի մասնակից, ռեժիսոր Վարդան Հակոբյանը:

Նոր գիտելիքներ եւ հմտություններ հաղորդելուց բացի, կինոդպրոցի նպատակը երիտասարդ ստեղծագործողների միջեւ կապեր հաստատելն է: Նոր գաղափարների ծնունդն ու դրանց իրագործումն այստեղ առավել քան քաջալերվում է:

«Կինոդպրոցում միտք ծագեց համատեղ ֆիլմ նկարահանել «Սովետական միության երեխաները» պայմանական խորագրով, որը կպատմի խորհրդային տարիներին ծնված, սակայն իրենց մասնագիտական գործունեությունը նորանկախ պետություններում ծավալած մարդկանց հաջողությունների եւ դժվարությունների մասին: Դասընթացի բոլոր մասնակիցների հետ նամակագրական կապի մեջ եմ, մտածում ենք նոր ծրագրերի մասին», ասաց Վարդան Հակոբյանը:

Ռուսական կինոարտադրությունն ուսումնասիրելով նա նկատել է այն թերություններն ու առավելությունները, որ առկա են Հայաստանում եւ Ռուսաստանում: «Երկու երկրներում էլ կադրերի լուրջ պակաս կա, իհարկե պատճառները միանգամայն տարբեր են: Ռուսաստանում այսօր բազմաթիվ կինոծրագրեր են իրականացվում, ու կադրերն ուղղակի չեն բավականացնում: Հայաստանում պատկերը ճիշտ հակառակն է: Արդեն երկար տարիներ նոր ֆիլմեր գրեթե չեն նկարահանվում, արդյունքում՝ մի շարք կինոմասնագիտություններ չեն օգտագործվում: Նկատելի էր նաեւ, որ Ռուսաստանում մեծ ուշադրություն է հատկացվում սկսնակներին, աջակցություն ցուցաբերվում», ասաց Վարդանը:

Տպավորիչ է եղել նաեւ «Մոսֆիլմի» ռեժիսորների նկարահանումներին հետեւելը: «Կինոդասընթացն իսկապես շատ արդյունավետ էր թե՛ գիտելիքներ ձեռք բերելու, թե՛ նոր կապեր հաստատելու առումով», ասաց Վարդանը: Ի դեպ, նա մասնակցել է նաեւ նոյեմբերին «Ոսկե ծիրան» կինոփառատոնի բացած միջազգային կինոդպրոցի դասընթացին, որն անցկացնում էր իրանցի նշանավոր կինոբեմադրիչ Աբբաս Քյառոստամին:

Վարդանն ընդգրկված է «Ոսկե ծիրանի» կազմակերպչական աշխատանքներում, հատկապես Հայաստանի մարզերում, ինչպես նաեւ Շուշիում եւ Ախալքալաքում կազմակերպվող կինոփառատոների ժամանակ:

Նրա «Քաղաք» խաղարկային ֆիլմը 2004-ին արժանացել է «Ոսկե ծիրան» մրցանակին:

ԱՐԵՎԻԿ ԲԱԳԱԼՅԱՆ

ԻՄԱՍՏԱԿԱՆ



Կադր «Գրեն Տորինո» ֆիլմից

Իսթվուդը վերջապես կստանա՞ «Օսկար»

Քսան տարի է անցել այն օրվանից, երբ Քլինթ Իսթվուդը Կարմելի (Սոնտերեյ, Կալիֆոռնիա) կառավարիչն էր, բայց առ այսօր իրեն «թագավոր» է զգում այդ վայրում: Հակառակ իր լռակյաց ու սակավախոս հերոսների, իրական կյանքում նա բավական մարդամոտ է եւ զրուցասեր: Ունի հումորի սուր զգացողություն եւ այնքան աշխույժ ու խանդավառ է, որ իր տարիքից շատ ավելի երիտասարդ է երեւում:

Իսթվուդը ցարդ «Լավագույն դերասան» անվանակարգում «Օսկարի» չի արժանացել, չնայած արդեն 29 լիամետրաժ ֆիլմերի ռեժիսոր է (ավելի, քան Սկորսեզեն եւ Սփիլբերգը), հանդես է եկել նաեւ որպես դերասան: Նա վաղուց է հրաժարվել «վեստեռն» ժանրի կինոնկարներից, սակայն հանդիսատեսը դեռեւս նրան պատկերացնում է որպես այդ ֆիլմերից հայտնի խեթ հայացքով, իր վարժ ձին հեծած «ֆովբոյի»: 1980-ականներից սկսած նա փորձում է փոխել մարդկանց այդ պատկերացումը: «Օսկարի» առաջիկա մրցանակաբաշխությանը նա ներկայանալու է երկու նոր ֆիլմով: Առաջինը «Չեյնջլինգ» ֆիլմն է, պրոդյուսեր՝ Բրայա Գրեյզ, գլխավոր դերում՝ Անջելինա জոլի, երկրորդը՝ «Գրեն Տորինո», որը նա ավարտել է այս տարվա ամռանը: Ֆիլմն արդեն ցուցադրվում է ամերիկյան կինոթատրոններում, իսկ Իսթվուդը արժանացել է «Գրաֆինադաստերի ազգային վարչության» մրցանակին՝ դերակատարման համար: Նա մարմավորում է Ուոլտ Կովալսկուն՝ կորեական պատերազմի վետերանին, «Ֆորդ» գործարանի նախկին բանվորին եւ մեկուսացված կյանքով ապրող անձնավորությանը, որն իր շրջապատում չի հանդուրժում որեւէ ռասայական խմբավորման ներկայություն ու դանդաղ, բայց վճռականորեն բռնկվում է ու ներխուժում իր հարեւանների կյանքի մեջ, երբ մի երիտասարդ (որի դերը կատարում է Բի Վանգը) հրսակախմբի ճնշման ներքո փորձում է ոնձգություններ կատարել իր խաղողի այգու նկատմամբ:

Իսթվուդի նկարահանած «Միլիոն դոլարանոց աղջիկը» եւ «Խորհրդավոր գետը» ֆիլմերի նման «Գրան Տորինոն» արդիական պատմություն է, որը, սակայն, ժամանակավրեպ է թվում: Ուոլտի շրջապատը նոկնման սահմանափակ է, որքան «Հայ Պլեյնզ Դրիֆտ» ֆիլմում Լագո քաղաքի մթնոլորտը, եւ հակամարտությունները հրսակախմբի հետ սկսում են զարգանալ անկանխատեսելի շրջադարձերով:

«Իսթվուդը կարողանում է ազնվություն ու լրջություն ներդնել իր կինոնկարներում: Նա այնքան ինքնավստահ է եւ անկեղծ, որ չի վախենում իր ֆիլմերում կյանքի տիաճ երեւույթները պատկերելուց», ասում է պրոդյուսեր Բրայան Գրեյզերը, ռեժիսորին բնութագրելով որպես ազատամիտ ու լայնախոհ անձնավորության: Գրեյզերը հույս ունի, որ առաջիկա մրցանակաբաշխությանը Իսթվուդն ի վերջո «Օսկար» կստանա «լավագույն դերասան» անվանակարգում:

Թարգմ.
ՀԱՍՏԱՐ ՕՌԼԻԿՅԱՆԸ

Կարելի՞ է վաճառել «Օսկարի» արձանիկները, թե՞ ոչ

Համր կինոյի հայտնի դերասանուհիներից Մերի Պիկֆորդը, որը «Յունայթիդ արտիստս» կինոստուդիայի եւ «Կինոարվեստի եւ գիտությունների ակադեմիայի» հիմնադիրներից է եղել, ժամանակին ստացել է երկու «Օսկար», իսկ նրա երրորդ ամուսինը՝ Բադդի Ռոջերսը արժանացել է պատվո մրցանակի: Այդ մրցանակները հետագայում փոխանցվել են Ռոջերսի ժառանգներին, որոնք էլ վերջերս մտադրվել են վաճառել եւ գումարը փոխանցել բարեգործական մի ընկերության: Սակայն ակադեմիան նրանց հիշեցրել է, որ 1950-ականներին ընդունված օրենքի համաձայն, ակադեմիական մրցանակները ենթակա չեն վաճառքի: Ատենակալներից մեկը պատմել է այդ որոշումն ու պնդել, որ Ռոջերսի ժառանգները պարտավոր են ենթարկվել, բայց հարցը դրանով չի ավարտվել:

Այս երեւույթը սթիրել է վերանայել 50 տարվա վաղեմություն ունեցող օրենքն ու վերջնական որոշում կայացնել, թե կարելի՞ է արդյոք վաճառել այդ մրցանակները: Սպասում են դատավորների խորհրդի որոշմանը:

Հ. Ծ.

Ռասանողների գրած 11 երգ ներկայացված է «Օսկարի»

«Օսկարի» կազմակերպիչները հայտնել են, որ առաջիկա մրցանակաբաշխության (2009-ի փետրվարին) ժամանակ «լավագույն երգ» մրցանակին արժանանալու համար ներկայացված 49 երաժշտական համարներից 11-ը գրել են երաժշտական վարժարանի ավարտական կուրսի սաները: Այդ երգերից են՝ «Տղաները վերադարձել են», «Կարելի՞ ինձ հետ», «Հենց հիմա սկսում եմք» եւ այլն:

Ներկայացված 49 մեղեդիների եւ երգերի մեջ տեղ են գտել «Գթասրտության խնամք» ֆիլմում հնչող «Մեռնելու այլ տարբերակ» երգը եւ Քլինթ Իսթվուդի «Գրան Տորինո» ֆիլմի նույնանուն երգը, որը ներկայացված է նաեւ «Գոլդեն Գլոբ» մրցանակի:

Երգիչ-երգչուհիների թվում են Բիոնսե Նոուլզը՝ «Կադիլակ ռեկորդս» ֆիլմից եւ Բրյուս Սփրինգսթինը՝ «Ամբիշը» ֆիլմից, որի գլխավոր դերը կատարում է Միկի Ռուրքը: Հավանական է, որ জոն Տրավոլտան եւս հայտնվի ցուցակում «Մտածում էի, որ կորցրել եմ քեզ» երգի համար, որ նա կատարում է Մայլի Սայրուսի հետ՝ «Բոլտ» մուլտֆիլմում:

Վերջնական թեկնածուների անունները կհրապարակվեն հունվարի 22-ին՝ «Օսկարի» պատշգամբի առաջ: Նոր ընդունված կանոնադրության համաձայն, յուրաքանչյուր ֆիլմից մրցանակաբաշխությանը կարելի է ներկայացնել միայն 2 երգ: 2008-ի «Օսկար» մրցանակին էր արժանացել «Մի անգամ» իռլանդական ֆիլմում հնչած Գլեն Հենսոդի եւ Մարկետա Իրգլովայի «Դանդաղ անկում» երգը:

Հ. Ծ.

«Ժաննան եւ ձայները» կինոնախագիծը շարունակում է իր ճանապարհորդությունը

«Ժաննան եւ ձայները» լիամետրաժ խաղարկային կինոնախագծի ճանապարհորդությունը (ռեժ. Միխայել Վաթինյան, սցենարը՝ Արմինե Անդայի եւ Միխայել Վաթինյանի) սկսվեց 2007-ին՝ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի «Ռեժիսորներ առանց սահմանների» ծրագրից: Այնտեղից էլ հայկական կինոնախագիծն առաջին անգամ ընտրվեց մասնակցելու Պուսանի միջազգային կինոփառատոնի եւ Ասիական կինոուկայի շրջանակներում կազմակերպված համատեղ արտադրության պլատֆորմին՝ Հարավային Կորեայում տանալով Պուսանի եւ Գյոթեբորգի միջազգային կինոփառատոնների ու Ասիական կինոուկայի մրցանակը: Նույն տարվա նոյեմբերին Գյոթեբորգի միջազգային կինոփառատոնը, որի պատվավոր նախագահը մինչեւ իր մահվան օրը եղեռ անվանի կինոբեմադրիչ Ինգմար Բերգմանն էր, մրցանակից բացի նախագծին շնորհեց նաեւ սցենարի զարգացման դրամաշնորհ՝ ֆիլմի արտադրության մեջ արդեն իսկ ներգրավելով Շվեդիան:

Բացի ասիական կինոուկայից նախագիծը պատշգամբային հրավեր ստացավ եւ մասնակցեց նաեւ Վարշավայի միջազգային կինոփառատոնին, երկու անգամ՝ Եվրասիա կինոուկային, որը կազմակերպում է Եվրոպական պրոդյուսերների ակումբը Թուրքիայում: Նախագծի գլխավոր պրոդյուսեր Արմինե Անդան 2008-ին Պուսանի միջազգային կինոփառատոնից հրավեր ստացավ «Ժաննան եւ ձայները» ներկայացնելու նաեւ Կաննի միջազգային կինոփառատոնում: Այդ ճանապարհորդությանն աջակցեց նաեւ Հայաստանի ազգային կինոկենտրոնը: Կաննում, ինչպես եւ Պուսանում, Վարշավայում, Թուրքիայում ներկայացվում էր առաջին հայկական կինոնախագիծը:

«Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամը, շարունակելով նպաստել այս նախագծի իրականացմանը, տրամադրում է նկարահանման տեխնիկա՝ հանդես գալով որպես նախագծի համադրողներ: Գյոթեբորգի միջազգային կինոփառատոնի եւ «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի աջակցությունն այսօր արդեն հնարավորություն է ստեղծում նկարահանելու ֆիլմի որոշ հատվածները: Հույս ունեն նախագիծն ամբողջությամբ իրականացնել Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ եւ ազգային կինոկենտրոնի հետ համատեղ՝ 2009-ին: Իսկ ճանապարհորդությունը՝ սկսված Հայաստանից եւ Ասիայից, Եվրոպայում շարունակվում է:

Ա. Բ.

Նրա կյանքի դերը նախագահ դառնալն էր

Ռոնալդ Ռեյգանը Մերլին Մոնրոյի հետ

Նրա ֆիլմերը մոռացության են մատնված, բայց մարդիկ նրան հիշում են որպես ԱՄՆ-ի 40-րդ նախագահի: «Երեւի Հոլիվուդը նրան պատրաստեց քաղաքական թատերաբեմում դեր ստանձնելու համար», գրում է «Նյուզուիք» հայտնի հանդեսի թղթակից Դեյվիդ Անսենը, գրախոսելով վերջերս լույս տեսած Մարկ Էլիոտի «Ռեյգան: Հոլիվուդյան տարիները» կենսագրական գիրքը:

«Ռոնալդ Ռեյգան մարդուն լրիվ հասկանալու համար պետք է նախ եւ առաջ լավ ճանաչել Ռեյգան դերասանին: Նրա մարմնավորած դերերը ստեղծեցին այն անձնավորությանը, որ հետագայում դառնալու էր Մ. Նահանգների նախագահ» գրում է նա:

Ռոնալդ Ուիլսոն Ռեյգանը հանդես է եկել 54 ֆիլմում, որոնցից միայն երկուսն են հաջողված: Սկզբում եղել է էն Բի Սի ռադիոընկերության սպորտային մեկնաբանը, այնուհետեւ աշխատանքի է անցել Հոլիվուդում եւ սկսել նկարահանվել: Եղել է կինոդերասանների Գիլդիայի նախագահը, գործընկերներից ոմանց դեմ տխուր դեր է կատարել Մկարթիզմի օրերին, վարել է թատերական հեռուստածրագիր, ընտրվել է Կալիֆոռնիայի նահանգապետ, իսկ դրանից հետո՝ Մ.Նահանգների նախագահ: Ամուսնացել է նախ դերասանուհի জեյն Ուայմանի հետ (որը նրան դավաճանել է), ապա Նենսի Դեյվիսի հետ, որը բախտորոշեն նրա համար ընկերներ է ընտրել բարձր խավից:

«Ռեյգանը մեծ դերասան դարձավ միայն այն ժամանակ, երբ ավարտվեց նրա դերասանական կարիերան», եզրակացնում է կինոքննադատ Դեյվիդ Անսենը:

Քննադատել են Ալ Պաչինոյի եւ դե Նիրոյի ազդագիրը



«Արդարացի սպանություն» ֆիլմի ազդագիրը, որում պատկերված են Ալ Պաչինոն եւ Ռոբերտ դե Նիրոն դժգոհություն է առաջացրել գովազդի ստանդարտների վարչությունում, որովհետեւ տեղադրվել է «Սթոքվել Տյուբ» մետրոյի կայարանում, ճիշտ այնտեղ, որտեղ սխալմամբ սպանվել էր 27-ամյա Ժան Շառլ դե Մենեզեսը, որին շփոթել էին մահապարտ ահաբեկչի հետ: Ներկայումս հետաքննություն է ընթանում պարզելու սպանության հանգամանքները: Ազդագրի վրա գրված է՝ «Կրակելն արդարացվում է, եթե ուղղված է ճիշտ անձնավորության վրա»:

«Հասկանում ենք, որ ազդագիրը դիտավորյալ չի փակցվել այնտեղ, սակայն ֆիլմի հետ կապված այդ գրությունը խիստ վիրավորական է զոհվածի հարազատների համար», նշել են վարչության ներկայացուցիչները:

Մանկությունս մեկս մեկ

unicef

Ամանորը մեր դպրոցում

Երեւանի Դ. Դեմիրճյանի թիվ 27 դպրոցում Ամանորին սպասում են բոլորը: Այնտեղ, այսինքն, մեր դպրոցում կազմակերպվում է տոնածառերի մրցույթ: Այն դասարանը, որը պատրաստում է լավագույն այլընտրանքային տոնածառը, մասնակցում է դիմակահանդեսին: Դիմակահանդեսն իսկական է, ուղեկցվում է բոլոր ուսուցիչների ակտիվ մասնակցությամբ, պարով, երգով, մրցութային խաղերով, իսկ վերջում հյուր են գալիս Ձմեռ պապն ու Ձյունանուշը: Չնայած այս տարի ձյան բացակայության պատճառով չկայացավ Ձնեմարդկանց մրցույթը, այնուամենայնիվ, աշակերտները համոզված են, որ այս Ամանորը, ինչպես եւ նախորդ տարիներին, կընթանա տոնական տրամադրությամբ եւ ուրախ ժպիտներով:

Միրանույշ Կեսոյան, 16 տ.

Ոչ հայեցի, բայց հետաքրքրական

Չնայած՝ Նոր տարին դիմավորելու սովորությունները շատ տարբեր են, այն բոլոր ժողովուրդների համար ամենաուրախ եւ ամենասիրված տոնն է: Տեսնենք, թե ինչպես է Ամանորը նշվում աշխարհի տարբեր ծայրերում:

Վիետնամում Նոր տարին նաեւ բոլոր մարդկանց ծննդյան օրն է: Կապ չունի, թե մարդը որ ամսին է ծնվել, միեւնույն է, այդ օրը նա մեծանում է մեկ տարով: Մարդիկ միմյանց դեղձենու ճյուղեր են նվիրում, նստում են խաղույկի մոտ, զրուցում:

Իսկ Բիրմայում Նոր տարին հիշեցնում է մեր Վարդավառը: Մարդիկ այդ օրը ջրցի են խաղում, չէ՞ որ շոգ է:

Ճապոնիայում կեսգիշերին հնչում են տաճարների զանգերը, որոնք թվով 108-ն են: Վերջին հարվածից հետո բոլորը պետք է լեն, որպեսզի արեւածագին սկսեն տոնակատարությունները:

Իրանում Ամանորը տոնում են մարտի 22-ին: Այդ օրը բոլորը ձեռքերին արծաթե դրամ են պահում, նաեւ խաղույկ են վառում եւ վրայով թռչում, այնպես, ինչպես մենք Տերնընդեզին:

Իտալիայում Նոր տարին սկսվում է մարտի վերջին՝ թնդանոթների եւ հրացանների համազարկով, սեղաններին դրվում են ծլած հացահատիկ, ներկած ձվեր, սխտոր, բացախ:

Եվրոպական մի շարք երկրներում Ամանորին դեն են նետում բոլոր հին իրերը:

Ռումինիայում Նոր տարին դիմակահանդես է հիշեցնում:

Բրազիլիայում Ամանորը դիմավորում են ծովափին սպիտակ զգեստներով: Իսկ ողջ ափի երկայնքով ավազի մեջ դրված մոմեր են վառվում:

Անգլիայում բացի տոնածառից, տունը զարդարում են սպիտակ ծաղկեփնջով:

Ֆրանսիայում Նոր տարին իսկական «սպիտակ սիմֆոնիա» է: Սեղաններին սպիտակ մոմակալներ են դրվում, թաց մրգեր՝ շաղախված սպիտակ շաքարահյութով, սպիտակ գոգլի-մոգլի:

Մեքսիկայում հյուրասենյակի կենտրոնում կախում են խաղողավենիով լի աման: Հյուրերը փակ աչքերով, եթե կարողանան կոտրել ամանը, այդ տարին երջանկություն կբերի:

Շոտլանդիայում հյուր գնացողներն իրենց հետ տանում են ածխի կտոր, որով ներկում են վառարանը եւ տանտիրոջ հետ դառնում են բարեկամներ:

Գվինեայում փողոց են բերում փղեր, որոնք խորհրդանշում են հարստություն եւ հզորություն: Երբն ուղեկցվում է երգերով, պարերով, խաղերով:

Պորտուգալիայում սեղանին դնում են խաղող, ժ. 12-ին ոկում են 12 հատիկ; եւ գալիք ամիսների համար ցանկություններ մտածելով ուտում:

Ահա, թե միեւնույն տոնը նշելու որքան բազմազան տարբերակներ կան:

Մերի Դավթյան, 12 տ.
Սերինե Միսիսյան, 16 տ.

Հոբելիկներ

Երկու սահադաշտ երեւանցիների համար

Արդեն երրորդ տարին է, ինչ ձմռանը Երեւանում Կարաոկեի լիճը վերածվում է սահադաշտի: Այս տարի այն բացվեց դեկտեմբերի 12-ին: Բացման առաջին իսկ օրվանից մեծ ու փոքր մարզասերները մեծ հաճույքով գնում են այնտեղ եւ զվարճանում: Այդ հաճույքի գինը ժամավարձով է՝ 1000 դրամ՝ չմուշկների եւ մեկ ժամի համար, իսկ եթե չմուշկներ ունես, կվճարես 500 դրամ: Նույնքան դրամ պահանջվում է սեփական իրերը աղահով արկղի մեջ պահելու համար: Մի խոսքով, սահադաշտում նախատեսված են բոլոր պայմանները ուրախ ժամանակ անցկացնելու համար:

Իսկ ահա դեկտեմբերի 16-ին հայտարարվեց Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում բացված մեկ այլ սահադաշտի մասին, որն ի տարբերություն Կարաոկեի լճի սահադաշտի, գործելու է կլոր տարին: Այն կառուցվել է ԲԱՄՕ ընկերության ազգությամբ հայ բաժնետեր Հովիկ Մուրադյանի ֆինանսական ներդրման շնորհիվ (40 մլն. դոլար): Սահադաշտը համապատասխանում է միջազգային չափանիշներին, ունի 60x30 մ տարածություն եւ կարող է օգտագործվել հոկեյի մրցումների համար: Նախատեսվում է այստեղ բացել գեղասահքի մարզադպրոց, որը կրելու է օլիմպիական չեմպիոն Եվգենի Պլյուշենկոյի անունը: Ի դեպ, Եվգենի Պլյուշենկոն անձամբ է ժամանել Հայաստան, մասնակցելու սահադաշտի հանդիսավոր հիմնադրմանը: Այն տեղի կունենա դեկտ. 27-ին՝ «Ստրադիվարիուսի ոսկե սառույցը» շոուի ներկայացմամբ:

Կազմակերպիչները խոստացան, որ մարզադպրոցի սաների ուսման վարձը լինելու է մատչելի եւ հասանելի բոլոր ցանկացող երեխաների համար:

Արփինե Դերոյան, 15 տ.

Երեխաների իրավունքները՝ շորովի

«Հասարակության հետ կապերի հայաստանյան ասոցիացիա» ՀԿ-ն եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (UNICEF) 2008 թ. դեկտեմբերի 5-ին «Կոնգրես» հյուրանոցում անցկացրեցին «Երեխաների իրավունքները՝ նորովի» ծրագրի ամփոփիչ մրցանակաբաշխությունը: Միջոցառման ժամանակ հանձնվեցին պատվոգրեր եւ մրցանակներ մրցույթում հաղթած լրագրողներին եւ ուսուցիչներին, որոնք իրենց հոդվածներում եւ բաց դասերում անդրադարձել են երեխաների իրավունքներին:

Հաղթող ճանաչվեցին՝ « Ազատություն» ռադիոկայանի «Մամս Լիբերթի» երիտասարդական ծրագիրը, Էլեոնորա Ազատյանը (Ռադիո Վան, Fm 103), Լուսինե Բուդաղյանը («Առավոտ» օրաթերթ), Panorama.am ցանցային լրատվամիջոցը: Հաղթող լրագրողներին մրցանակներ հանձնեցին մենք՝ «Մանկապատանեկան ազգ»-ականներս: Որպես պատանի լրագրողներ, մենք մեր խոսքը ուղղեցինք հաղթող լրագրողներին:

Երեխաների իրավունքներին նվիրված «Լավագույն դասաժամի» սցենարի մրցույթում հաղթող ճանաչվեցին 5 ուսուցիչներ Հայաստանի տարբեր մարզերից:

Ռոզաննա Մովսիսյան, 15 տ.

Ձմեռային տոն մայրաքաղաքում

2008 թվականի դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ «Ձմեռային փառատոն Հայաստան 2008»-ի բացումը, որը սկսվեց ամենամյա ձմեռային շքերթից: Նման շքերթ մի անգամ էլ է անցկացվել Երեւանում: Շատերը հավաքվել էին Սայաթ-Նովա - Աբովյան խաչմերուկում, որտեղից սկսվեց շքերթը դեպի Սիրահարների այգի: Այն ուղեկցվեց նվագախմբերով, պարախմբերով, ծաղրածուներով ու հեքիաթային հերոսներով: Շքերթին մասնակցեց նաեւ Ձմեռ պապն իր օգնականների հետ:

Երկար քայլելուց հետո շքերթի մասնակիցները հասան Սիրահարների այգի, ուր նրանց սպասում էին մանկական երաժշտական ելույթներ, թատերական համարներ եւ այլ ժամանցային միջոցառումներ:

Դեկտեմբերի 22-ից հունվարի 5-ը Սիրահարների այգում ցուցադրվելու են տոնածառեր՝ զարդարված տարբեր ժողովուրդների սովորույթների համաձայն: Իսկ դեկտեմբերի 26-30-ը կրկին Սիրահարների այգում կանցկացվեն Ձմեռային խաղեր թե՛ փոքրերի, թե՛ մեծերի համար: Փառատոնի փակումը՝ «Ոսկե եւ արծաթե երեկույթը» տեղի կունենա 2009 թվականի հունվարի 5-ին Square One ռեստորանում:

Տաթեւ Մելիքյան, 11 տ.
Շուշան Մելիքյան, 15 տ.

Ընտանիք Ձեր ոլորտիկում

Մեր եւ օրենքները

Բարեւ ձեզ, սիրելի Ձմեռ պապիկ: Երեւի կզարմանաք, որ այս տարիի աղջիկը դեռ հավատում է Ձեր գոյությանը եւ նամակ է գրում Ձեզ: Բանն այն է, որ ես պապիկ չունեմ, իմ երկու պապիկները մահացել են: Ես շատ կցանկանայի Ձեզանից սանալ նրանց սերը: Այսօր որպես մեծ, իմ կողքին է իմ Ռոզա տատիկը, որը շատ թանկ ու սիրելի է ինձ համար: Այս Նոր տարվա համար ես չեմ ցանկանում ոչ մի առանձնահատուկ բան, պարզապես շատ եմ ուզում, որ Դուք պատասխանեք նամակիս, չնայած, որ դա երեւի թե անհնար է: Բայց ամեն դեպքում ես կփորձեմ: Սիրելի Ձմեռ պապիկ, ես խնդրում եմ, որ Դուք այս տարի իմ բարձի տակ դնեք մի փոքրիկ տոպրակ, որը լցված կլինի սիրով եւ մեծի օրհնությունով: Միգուցե այս նամակը շատ մանկամիտ թվա Ձեզ, բայց ամեն դեպքում իմացեք, որ ես հուզմունքով եւ ուրախությամբ եմ գրել:

Սիրով, Ձեր թոռնիկ՝ **Ռոզաննա Մովսիսյան, 15 տ.**

Կլինի՞ փոքր մնամ

Բարեւ, Ձմեռ պապիկ: Հիշում ես ինձ: Հիշում ես կախարդական ափսեն, կախարդական փայտիկը կամ գավազանը: Այո, այո, այդ ես եմ, որ երազկոտ ու միամիտ Վավագը: Ես արդեն մեծացել եմ: Սովորում եմ ութերորդ դասարանում: Շուտով կլրանա տասնչորսամյակս: Ճիշտն ասած, այս անգամ ես թեզանից ավելի դժվար բան եմ ուզելու, քան առաջ: Քեզ շատ եմ խնդրում այնպես արա, որ ես չմեծանամ: Ուզում եմ մնալ նույն փոքր տղան, որը հավատում էր կախարդանքին: Խնդրում եմ, գտիր այդ մեթոդը, լինի դա հմայադեղ, կախարդական խոսք, թե այլ բան: Գիտեմ, որ այն միանգամից չես կարող տալ: Ես կսպասեմ մինչեւ հաջորդ տարի: Ախր, մեծանալով ես կամաց-կամաց սկսում եմ չհավատալ քո գոյությանը: Իսկ դա շատ վատ է:

Ես քեզ կսպասեմ...

Քո՝ Վավագ-Վահագն

Ես հաղթեցի՛

Նոյեմբերի 15-ին Երեւանում՝ Մոսկվայի տանը, կայացավ ռուսաց լեզվի օլիմպիադա: Երեւանի տարբեր դպրոցների 120 աշակերտներ գրեցին շարադրություն "А я иду, шагаю по Москве" թեմայով: Թեման ինձ շատ հոգեհարազատ էր, քանի որ մի քանի անգամ եղել էի Մոսկվայում: Օլիմպիադայի փակումը տեղի ունեցավ նոյեմբերի 26-ին: Աշակերտներից երեքը պետք է արժանանային առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի մրցանակների, իսկ վեցը՝ պատվոգրերի: Գլխավոր երեք մրցանակակիրներին սպասում էին «արքայական» նվերներ՝ 3-րդ տեղի համար՝ լուսանկարչական ապարատ, 2-րդի համար՝ համակարգիչ, իսկ առաջին մրցանակակիրը պարգեւատրվելու էր 2 անձի համար նախատեսված ուղեգրով դեպի Մոսկվա:

Մրցանակաբաշխության արդյունքն ինձ ցնցեց: Ես ճանաչվեցի օլիմպիադայի հաղթող եւ պարգեւատրվեցի ուղեգրով: Շատ հուզվեցի: Ընդհանրապես հույս չունեի, որ կհաղթեմ, քանի որ քաղաքային, հանրապետական օլիմպիադաների ընթացքում բազմաթիվ հիասթափություններ էի ապրել եւ հավատս կորցրել: Փաստորեն, արդարություն դեռ գոյություն ունի, ինչի համար էլ շատ շնորհակալ եմ կազմակերպիչներին եւ ժյուրիի անդամներին:

Մենք՝ հաղթող մասնակիցներս, կարդացինք մեր շարադրությունները եւ պարգեւատրվեցինք: Այնուհետեւ իրենց համերգով մեզ ուրախացրին «Մալխաս» ջազ-ակումբի տաղանդավոր արտիստները:

Սերինե Միսիսյան, 16 տ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՏՍԱՍԵԿՍԱՆ

unicef

ԷՍ ԷԼ ՄԵՆՔ

Հայկական սովորական Նոր տարի

Աշխարհի ամենազվարճալի եւ ամենաախսաբաս օրն է դեկտեմբերի 31-ը: Բոլորը զբաղված են խառը գործերով: Մայրերը խոհանոցում, երեխաները տնաճառի շուրջը, իսկ հայրերը հեռուստացույցի առջեւ նստած դիմավորում են Նոր տարին:

Չգիտես ինչու, դեկտեմբերի 31-ին այդման ուտելիքների մեջ նորից սոված ենք մնում: 15 տոպեն մեկ խանութ ենք գնում: Դժբախտաբար, մոտակա մթերային խանութները փակ են, եւ ստիպված ենք լինում ամեն անգամ աշխարհի ծայրը գնալ շփոթությունից մոռացված գնումները կատարելու: Իսկ ժամը ուտիր 12:00-ին սեղանի շուրջը ոչ ոք չի լինում: Մեկը շարվում է, մյուսը բարձի տակից ամանորյա նվերն է վերցնում, հայրիկը գինու բացիչն է փնտրում, մայրիկն էլ խոհանոցից վերջին աղցանն է բերում: Իսկապես խառնաշփոթ է: Եվ ամենակարեւորը, Նոր տարվա գիշերը մայրիկը թույլ չի տալիս սեղանից օգտվել, քանի որ ամեն պահ կարող ենք հյուրեր ունենալ, մի՞թե այդման տանջվել ենք մեզ համար: Հետաքրքրական է չէ՞, որ գնում ենք «Նորություն ուտեստ» չկա, բոլորի տանը նույնն է, իսկ մենք անվերջ նույն բանն ուտում ու չենք կշտանում: Նոր տարին մեկ այլ առանձնահատկություն էլ ունի՝ ծանոթանում ենք մեզ անծանոթ բարեկամների հետ, որոնք մեզ հիշում են միայն առիթից առիթ: Էլ չեմ խոսում բոմբոներկանների մասին: Մեկ տուփը 15 ընտանիք մտնում ու դուրս է գալիս: Չնայած, երբ շոկոլադը լավն է լինում, ո՞վ կգժվի տա ուրիշին, միայն դրանք են մնում: Սա հայկական Նոր տարվա միայն ամփոփ վիճակն է, իսկ իրականում այն ավելի հետաքրքրական է:

Ժակլին Թադեւոսյան, 16 տ.

Նոր տարի-հին ու մաշված սովորություններ

Երբ բացվում է վարագույրը բոլոր դերասանները պետք է տեղում լինեն: Այդպես պետք է լինի նաեւ Ամանորի ժամը 12.00-ին, բայց ավաղ... Հանկարծ 12-ին 5 տոպե պակաս մայրիկը որոշում է, որ չի լվացել գլուխը, հայրիկը, որ չի հագել իր նոր վերնաշապիկը, դե իսկ հիրիկն էլ, որ չի շարվել: Եվ այսպես 12-ն անց հինգ տոպե մի կերպ ամեն մեկին մի տեղից հավաքելով, սկսում ենք չրխկացնել բաժակները, դրանից հետո մի 30 տոպե սոված նստում ենք մինչեւ տոլման եփի, եփելուց հետո էլ մի 15 տոպե փնտրում ենք այն ամանը, որի մեջ պիտի այն դնենք: Հանկարծ լսվում է դռան զանգը. հարեւաններն են: Դե, մինչեւ դես-դեն, մեկ անց հիսուն այդ հարեւանները գնում են: Մինչեւ տոլման թարմացնում ենք, գալիս են մյուսները: Իսկ նրանց գնալուց հետո հոգնած ընկնում ենք անկողին, որ հանգստանանք:

Ամեն ընտանիք ունի Նոր տարվա իր ավանդույթը: Մեր տանն արդեն ավանդույթ է դարձել, որ հենց բոլորը քնում են, ես ու հայրիկս արթնանում ենք իրարից անկախ, նստում մի շիշ ջերմուկ խմում ու առանց իրար որեւէ բան ասելու, գնում ենք քնելու:

Այսպիսի բաներ:

Ռոզաննա Մովսիսյան, 15 տ.

Չարը խափանվեց

Մեր ժողովրդի մեջ կան հնուց պահպանված ասույթներ, որոնցից է «չարը խափանվեց» արտահայտությունը: Այն հիմնականում օգտագործում են, երբ ինչ-որ աղակյա իր է կոտրվում:

Պատկերացնում եմ, թե ինչքան դժվար կլիներ մեր ընտանիքի համար, եթե չլինեի ես: Հանուն չարի խափանման ես կոտրել եմ մեր տան ամանեղենի կեսից ավելին: Չեմ պատկերացնի, թե ինչպիսի «գոհ-ջղային» աչքերով է նայում ինձ մայրիկս ափսեն կոտրելուց հետո: Նա շատ շնորհակալ է ինձնից, որ ես ազատում եմ մեր տունը չարից հատկապես տոնական օրերին, երբ ամեն ուզող-չուզող մտնում է տուն:

Բայց եթե այս ամենից առանձնացնենք կատակը, կստացվի, որ չարի խափանումը ոմանց հաճույք է պատճառում, ոմանց էլ հասցնում ծայրաստիճան բարկության: Ամեն դեպքում, եթե դուք հաջություն չունեք ձեր ամանեղենը կոտրելով խափանել ձեր տան չարը, ապա դիմեք ինձ կամ պարզապես սնահավաս մի եղեք:

Ռոզաննա Մովսիսյան, 15 տ.

Ի՞ՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ՈՒՏՈՒՄ ԱՄԱՆՈՐԻՆ ԵՎ ԻՆՉՈ՞Ւ

Նոր տարին զանազան մարդկանց համար տարբեր բաներ է խորհրդանշում, բայց նրանց բոլորին միավորում է ամանորյա սեղանը ավելի շքեղ եւ հարուստ դարձնելու ձգտումը: Տեսնենք, թե ինչ է սեղանին դրվում խոհանոցային երկարատեւ խառնաշփոթից հետո: Պարտադիր աղցաններից են՝ «Մայրախաղողայինը» եւ «Խեցգետնովը»: Կարեւոր է նաեւ խորտիկների տեսականին, պասուց եւ թփով տոլմաները, բլինչիկները: Իսկ սեղանի զարդը, որի բացակայությունը մեր օրերում ամոթ է համարվում, խոզի բուդն է: Տանտերերը միշտ ձգտում են ակնարկել բդի կշիռը եւ դրա համար վճարված գումարը:



Անցնենք խաղցր սեղանին: Դրվում է մի քանի տեսակի խմորեղեն, հիմնականում՝ «Միկադո», «Նապոլեոն» եւ գաթա: Պարտադիր են աղանձն ու չարազը, ինչպես նաեւ մրգեղենն եւ խմիչքները:

Իհարկե, այս ամենը շատ գեղեցիկ եւ համեղ է: Բայց արդյոք նման ճաշատեսակների օգտագործումը Ամանորին սազական է մեզ՝ 301 թվականին քրիստոնեությունը պետականորեն ընդունած ժողովրդին: Չէ՞ որ Նոր տարին համընկնում է 15 օր տեւողություն ունեցող պահքի հետ, որի ժամանակ մենք՝ քրիստոնյաներս չպետք է ուտենք կենդանական ծագում ունեցող ոչ մի ուտեստ: Երեւի թե բոլորս էլ դա գիտակցում ենք, բայց շարունակում ենք մեր ձեւամոլությունը:

Մերինե Միսիսյան, 16 տ.

ՊԱՅԹՈՒՅԻԿՆԵՐ՝ ՏՈՆԱԿԱ՞Ն ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

Շուտով Նոր տարի է: Մարդիկ մտածմունքներով եւ հոգսերով քայլում են փողոցով, եւ հանկարծ՝ «բում», մի ահռելի պայթյուն: Բոլոր երեխաներին էլ հաճելի է վախեցնել մարդկանց պայթուցիկներով, սակայն նրանք չեն հասկանում, որ փողոցով անցնում են տարբեր մարդիկ՝ տատիկներ, պապիկներ եւ փոքրիկներ: Վազգենը պատմեց, որ իր ընկերոջ մասը կտրվել է այդ պայթուցիկներով: Նա վառեց իր պայթուցիկը եւ չհասցրեց նետել իրենից հեռու: Արդյունքում մնաց առանց մատի: «Այն նաեւ վտանգավոր է լսողության համար», ավելացրեց Աննան: Այնուամենայնիվ, երեխաների 90 տոկոսը Նոր տարին չի պատկերացնում առանց «բոմբերի»: Մերին պատմում է. «Մեր դասարանի երեխաները պայթուցիկը նետել են դասղեկի ոտքերի տակ, եւ ուսուցչուհին պայթյունից հետո ուշաթափվել է»:



Լիդարիտ Բարսեղյան, 13 տ.

Մեր գաղտնիքը եւ ձեր թերությունը

Նոր տարվա համար մայրիկները միշտ էլ գնում են շատ կոնֆետներ: Եվ քանի որ շատ երեխաներ պարզապես պաշտում են կոնֆետները, խեղճ ու միամիտ ծնողները դրանք պահում են այս կամ այն դարակի մեջ կամ պահարաններից մեկի գլխին: Բայց մի՞թե մոռացել սիրելի ծնողներ, մենք երեխաներ ենք, խորամանկ ենք ու մեզնից ոչինչ թաքցնել չի լինի:

Մեր աչքից ոչինչ չի վրիպում, որովհետեւ կոնֆետները դնում եք անսովոր տոպրակի մեջ, որը եւ մեր մեջ հետաքրքրություն է առաջացնում:

Ինչո՞ւ եք մեզ հետ այդպես վարվում, չէ՞ որ դուք էլ եք անցել այս փորձություններով, երբ ձեր մայրիկները պահածոյացնում էին կոնֆետները:

Ահա թե որն է մեր գաղտնիքը եւ ձեր թերությունը:

Մերի Դավթյան, 12 տ.

Հայրիկները նախաատոնական խոհանոցում

Բոլորն էլ լավ գիտեն, որ Նոր Տարվա եփել-թափելով զբաղվում են մայրերն ու աղջիկները, բայց խոհանոցային գործից անմասն չեն լինում նաեւ հայրիկները: Բացի նրանից, որ առեւտրի ամբողջ ծանրությունն ընկած է նրանց վրա, նրանք նաեւ զբաղվում են երիկ կտրատելով, աղցանների վրա կանաչիներ զարդարելով եւ այլն: Շատ ընտանիքներում հայրիկներն իրենք են պատրաստում ավանդական ուտեստը՝ տոլման, բլինչիկի լոշիկները եւ երիկեղենը: Օրինակ, մեր տանը հայրիկս,



բացի այն բանից, որ ինքն է պահածոյացնում աշնան բարիքները, նաեւ Նոր տարվա կապակցությամբ իր ձեռքով պատրաստում է սուջուխն ու բաստուրման: Շատ համեղ է ստացվում: Ես ու հայրիկս միասին լավ թե վատ պատրաստում ենք մրգային աղցան, վատ չի, ուտվում է: Սակայն հայրիկիս մոտ ընդհանրապես չի ստացվում տոլմա պատրաստելը, բայց ինչ վերաբերում է տորթի կրեմը հարելուն, խոսք չունեմ, լավ էլ ստացվում է: Հա՜, մոռացա ասեմ, որ հայրիկս անպայման իր վրա է վերցնում ամեն ինչից մի-փիչ, մի-փիչ փորձելու գործը, այս նշանաբանով. «Ինչ լինում է, թող ինձ լինի...»:

Ռոզաննա Մովսիսյան, 15 տ.

Գիտե՞ք, որ ...

* Ամենաբարձրահասակ կինը աշխարհում եղել է գերմանուհի Մարիանա Վայդեն՝ 265 սմ:

* Ամենամեծ երեխան ծնվել է Կանադայում 1896 թվականին Նրա հասակը 76 սմ էր, քաշը՝ 10,7 կգ: Մայրը՝ Աննա Բաստը, ուներ 224 սմ հասակ:

* Ամենաթեթեւ կշիռ ունեցող մարդը մեքսիկուհի Լուսյա Ջառատեն է, որը 17 տարեկանում ունեցել է 2,13 կգ քաշ:

* Առաջին մարդասպանը Կայենն է:

* Երկիր մոլորակը սառցակալել է 4 անգամ:

* Փայտակեր որդերը 1946 թ. կերան Նյու-Ջերսի նահանգի Մանասկվան գետի վրա գցված կամուրջի հենասյունը, եւ կամուրջը փլվեց:

* Ամերիկացի գիտնականները հաշվել են, որ երկիր մոլորակը թեթեւանում է: Հիմա մոլորակը կշռում է 5972 տեսատոննա: Դա 5972 թիվն է, որին հաջորդում է 18 զրո:

Լենի Կոստանդյան, 11 տ.

2009 թվականը՝ ՑՈՒԼԻ ՏԱՐԻ

2009 թվականը ըստ չինական հորոսկոպի (հին հայերենով՝ ախթարի) ցուլի տարի է: Ինչպես բոլոր մարդիկ, ցուլի տարուն ծնվածները նույնպես ունեն իրենց հատկանիշները: Նրանք չեն սիրում ղեկավարել եւ փայլել շրջապատում: Համեստ են, բայց միշտ պնդում են իրենց կարծիքը եւ ունեն կյանքի կոնկրետ նպատակ: Չափից շատ լուրջ եւ կազմակերպված, դեպի հաջողությունը ձգտող, աշխատասեր անձնավորություններ են:

Մյուս կողմից նրանց հատուկ է համառությունը: Դժվարությամբ են համաձայնության գալիս ուրիշների հետ, անգամ ամենամտերիմների: Նրանց բնավորությունը անհնար է փոխել: Չնայած ընդհանրապես շատ հանգիստ ու նուրբ են, զայրացած ժամանակ սարսափելի անկառավարելի են:

Շնորհավորում ենք Ամանորի կապակցությամբ բոլորին եւ հատկապես՝ ցուլի տարում ծնվածներին:

Տաթեւիկ Մելիքյան, 11 տ.
Շուշան Մելիքյան, 15 տ.

ԻՆՉ ԿԱ ԱՌԱՆՑ ՊՈՎԼՔՈՎ

«Մի փոքր ազատ ժամանակ ունեմ, գնամ տեսնեմ, թե հեռուստացույցով ինչ կա», ասում ենք շատերս այն հույսով, որ ինչ-որ հետաքրքրական բան կգտնենք հեռուստացույցով: Գնացի, նստեցի, միացրի հեռուստացույցը: Ամանորյա հետաքրքրական եւ զվարճալի հաղորդում փնտրել եմ սկսում առաջին ալիքից: Առաջ եմ գնում՝ գովազդ, գովազդ, գովազդ, սերիալ, նորից սերիալ, եւ այդպես շարունակ: Ես նորից ու նորից առաջ եմ գնում, բայց ոչ մի փոփոխություն: Լավ, մտածեցի ես ու անջատեցի հեռուստացույցը: Բացեցի մեր տանը եղած պատահական մի ամսագիր: Շապիկը շատ գեղեցիկ էր, որոշեցի բացել ու նայել, թե ինչ կա: Ամսագրի մեջ լրիվ նույն բանն էր, ինչ հեռուստացույցի էկրանին: Ամսագրի կեսը գովազդ էր: Կրկնակի հուսահատությունից դրդված, բացեցի գիրքս, ու սկսեցի կարդալ: Փառք Աստծո, գոնե Բարոն Մյունհաուզենի արկածներում գովազդ չկար: Հիմա, ես ինչքան հասկացա, ազատ ժամանակ միայն մի հաճելի բանով կարող ես զբաղվել՝ գիրք կարդալով: Ափսոս, որ դա շուտ չէի հասկացել: Լավ, բայց խնդիրն այն է, որ Հայաստանի 88 տոկոսը չի դադարում ժամերով հեռուստացույց դիտել, չնկատելով թե ինչպես է ժամանակը թռնում-անցնում մեր կողքով:

Մարթա Միսկարյան, 11 տ.

Ներդիրի պատասխանատու-խմբագիր՝ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ներդիրի ձեւավորող՝ ԿԱՐԻՆԵ ԱՐՇՈՒՍՅԱՆ
Հեռ. (093) 369531 e-mail: susmark2002@yahoo.com azg_ik@yahoo.com

2008-ը նույնպես հուսադրող չէր մարդկության համար

Անաբեկչությունն ընթացիկ տարում նորից դարձավ միջազգային իրավիճակի գլխավոր առանձնահատկությունը

Աբխազիայի խաղաղության եւ կայունության, առավել եւ ժողովուրդների բարեկամության առումով հուսադրող չեղավ նաեւ 2008 թիվը: Ավարտվող տարվա ընթացքում ահաբեկչությունը նորից դարձավ միջազգային իրավիճակի գլխավոր առանձնահատկությունը: Ահաբեկչության ծավալման հետ ընդարձակվեց նաեւ ռազմաքաղաքական լարվածության աշխարհագրությունը տարբեր տարածաշրջաններում: Այս ամենը հանգեցրեց համաշխարհային տնտեսական ճգնաժամի վերածած ֆինանսական ճգնաժամի առաջացմանը:

Նախորդ տարիներին ահաբեկչությունը ներքաղաքական կյանքի մշտական գործոն էր Իրաքում եւ Աֆղանստանում: Էլ չենք խոսում Պաղեստինի տարածքում Իսրայելի իրականացրած պետական ահաբեկչության բնույթ կրող պատժիչ գործողությունների մասին: Այս տարի ահաբեկչական խոշոր գործողությունների ակնհայտը դարձավ նաեւ Հնդկաստանը: Քանի որ դրա ի-մաստը վերագրվում է Պակիստանին, ուստի եւ սրվեցին Հնդկաստան-Պակիստան հարաբերությունները, իսկ դա լարվածության հավելյալ օջախ ստեղծեց Մերձավոր եւ Միջին Արեւելքի անմիջական հարեւանությամբ:

Հատկանշական է, որ ընթացիկ տարում լարվածության սման առիթ դարձավ ոչ միայն ահաբեկչությունը, այլեւ որոշ երկրների անկախացումը: Դա հատկապես նկատելի դարձավ Կոսովոյի, ինչպես նաեւ Աբխազիայի, Հարավային Օսիայի անկախացման պարագայում: Տվյալ դեպքում ինչպես Կոսովոյի, այնպես էլ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախացումը միջազգային ուժերն օգտագործեցին բահադիրական նպատակներով: Այսպիսով, նշված երկրներն ակամա ներքաշվեցին վերջիններիս միջեւ ծավալվող անհաշտ մրցապայքարի մեջ, ինչի հետեւանքով Կովկասի հետ լարվածության նոր թատերաբեմ դարձավ նաեւ Սեւ ծովի ավազանը:

Առաջին հայացքից գուցե տարօրինակ թվա, սակայն համաշխարհային տնտեսականի վերածած ֆինանսական ճգնաժամի բռնկման պատճառները, այնուամենայնիվ, քաղաքական են: Դրա հիմքում աշխարհի տարբեր երկրներում սանձազերծված պատերազմներն են, ինչպես նաեւ անընդմեջ հրահրվող ահաբեկչությունը, որոնք միանգամայն տրամաբանական են դարձնում ճգնաժամը:

Միանգամայն տրամաբանական է նաեւ թե՛ ճգնաժամի, թե՛ միջազգային ուժերի անհաշտ մրցապայքարի անմիջական անդրադարձը լարվածության մեջ ներքաշված երկրների եւ ժողովուրդների վրա, որովհետեւ այդ ուժերի ինչպես մրցապայքարը, այնպես էլ հակասությունները ու նույնիսկ հակամարտությունը վերահսկելի է: Թերեւս դա է պատճառը, որ միջազգային ուժերը անհաշտ մրցապայքարի, սուր հակասությունների եւ անզիջում հակամարտության պայմաններում կարողանում են խուսափել միմյանց հետ զինված բախումներից:

Մնում է հուսալ, որ ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բարաք Օբաման հետամուտ կլինի նախընտրական խոստումներին: ԱՄՆ-ում նախատեսվող ձեւափոխումները կստեղծեն փոփոխության նախադրյալներ աշխարհում: Եթե Օբամային չհաջողվի հաղթահարել համաստաված ահաբեկչությունը կամ վերջ տալ Իրաքի, Աֆղանստանի պատերազմներին, գոնե կարող է հրաժարվել Ջորջ Բուշի վարչակարգի որդեգրած աշխարհին կամք թելադրելու եւ քաղաքական խնդիրները զենքի ուժով լուծելու դիրքորոշումներից: Այդ դեպքում արդեն ոչ թե կստեղծվեն ռազմաքաղաքական լարվածության նոր օջախներ կամ հետեւողականորեն կընդարձակվի դրա աշխարհագրությունը, այլ կթուլանան առկա լարվածությունները՝ հատկապես մեր տարածաշրջանում:

Հ. ՉԱՔԱՐՅԱՆ

Հայ պատգամավորների խիզախ քայլերը

Օնտարիոյից (Կանադա) դոկտ. Տիգրան Աբրահամյանը ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածում մեկնաբանում է վերջին ամիսների քաղաքական տրամաբանային իրադարձությունները:

Վրացական ճգնաժամից հետո, Թուրքիան՝ Կովկասում Ռուսաստանի շահերի հետաքրքրությունից օգտվելով, կարծես նախաձեռնությունն իր վրա վերցրեց եւ Հայաստանին սիրեց զիջումների գնալ ինչպես պատմաբանների համատեղ հանձնախումբ կազմելու, այնպես էլ դարաբաղյան հողերի ճակատագրի վերաբերյալ: Փոխարենը նա խոստացավ Հայաստանի հետ սահմանը բացել:

Երկար քննարկումներից հետո Հայաստանի բարձրաստիճան պատգամավորները խիզախ քայլերի դիմեցին եւ բացահայտ հայտարարեցին, թե ինչի շուրջ կարելի էր բանակցել, ինչի շուրջ՝ ոչ: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ու արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանը վստահեցրին ժողովրդին, որ հանձնախումբ չի ստեղծվելու:

Ոչ շատ ժամանակ առաջ թվում էր, թե հայկական իշխանությունները չափազանց մեղմացրել են Թուրքիայի հանդեպ իրենց դիրքորոշումը, սակայն Մ. Նահանգների նոր նախագահի ընտրությունից հետո, կարծես, իրադրությունը փոխվել է: Դժվար է [illegible] պնդել, որ Բարաք Օբամայի [illegible]թյունը նպաստավոր դեր խաղաց այդ գործում: Նոր նախագահի համար ցեղասպանությունը պատմական փաստ է, եւ ոչ թե քաղաքական շահարկումների գաղափար եւ Թուրքիան քաջ գիտակցում է այս իրողությունը:

Երկրորդ գործոնը, որ դեր խաղաց դիրքորոշման հստակեցմանը, Հայաստանի եւ սփյուռքի գործիչների քննադատական ելույթներն էին: Նրանք մեկընդմիշտ դեմ արտահայտվեցին պատմաբանների առաջարկած հանձնախմբին, եւ հասկացրին, որ հողային որեւէ զիջում, նախքան սահմանի բացումը հավասարազոր կլիներ կոմիտոպյացիայի:

Թուրքիան կարող է անշուշտ հակադարձել իր սովորական դարձած սպառնալիքներով: Իսրայելն, իր հերթին, որպես դաշնակից երկրի, կփորձի իր քարոզչական ընկերությունների միջոցով ազդել Ամերիկայի արտաքին քաղաքականության վրա: Կարելի է չկասկածել այս հարցերում, բայց կարեւորն այն է, որ իրադարձությունների դինամիկան փոխվել է եւ Հայաստանը պետք է կարողանա իր ներկա դիրքորոշումը պահպանել եւ օգտագործելով հնարավոր ռեսուրսները, միջազգային այյաններին հասկացնել, որ իր պնդումները արդարացի են ու ճշմարտացի:

Դեռեւս հստակ չէ, թե Մինսկի խմբի հետագա բանակցություններում, որ միջազգային սկզբունք է հաշվի առնվելու՝ տարածքային ամբողջականության, թե՞ ինքնորոշման իրավունքի: Առաջինի ընդունման պարագայում, ինչ մակարդակի ինքնորոշում է սպասվում Ղարաբաղին:

Հայաստանը չպետք է շտապի: Պետք է սպասի մինչեւ նոր վարչակազմը Մ. Նահանգներում սկսի իր գործունեությունը: Մինչ այդ, ըստ իր քմահաճույքի գործելու Թուրքիայի ժամանակը սպառվում է եւ, նույնիսկ, եթե որոշ անհատներ այդ վարչակազմում այնքան էլ կարեկից չլինեն Ղարաբաղին կամ Հայաստանին վերաբերող հարցերում, միեւնույն է, գլխավոր հրամանատարը ակնհայտորեն անկարեկից չէ: Եվ դա է կարեւորը:

Մինչեւ Մ. Նահանգների նոր նախագահի երդմնակալությունը եւ, հավանաբար, մինչեւ 2009 թվականի ապրիլը, Հայաստանն ու սփյուռքը իրենց ձեռքում եղած հնարավորությունները չպետք է բաց թողնեն: Առանց անտեսելու երկրի սոցիալ-տնտեսական դժվարությունները, բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները պետք է վերագնահատեն ներքին իրավիճակն ու հանգամանքները, համապատասխան եզրակացությունների հանգեն եւ նեցուկ կանգնեն իշխանություններին՝ Թուրքիայի եւ նրա մեթենայությունների դեմ նրանց պայքարում: Իսկ իշխանությունները էլ աչալուրջ պետք է լինեն իրենց որդեգրած ուղղուց չշեղվելու համար:

Թարգմ. Հ. Ծ.

ԹԲԻԼԻՍԻ

Հարվածե՞լ է արդյոք Սաակաշվիլին Վրաստանի վարչապետին

Վրացական ԶԼՄ-ները հաղորդել են, որ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու եւ վարչապետ Գրիգոլ Մղալոբլիշվիլու միջեւ միջադեպ է տեղի ունեցել: Ինչպես այսօր գրում է «Ալիա» թերթը, նախագահը անունները չնշված վկաների ներկայությամբ հարվածել է վարչապետի դեմքին, իսկ այնուհետեւ հեռախոսը նետել նրա վրա: Թերթը նման արարքի պատճառները չի հաղորդում, բայց գրում է, որ դրանից շաս չանցած վարչապետը հրաժարականի դիմում է գրել, սակայն Սաակաշվիլին այն չի բավարարել: Թերթի այս տեղեկատվության պաշտոնական հերքում չի եղել:

Այս շաբաթ Մղալոբլիշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Թուրքիայում, հաղորդում է «Արմենպրեսը»:

Իրանի նախագահը բրիտանացիներին շնորհավորել է Սբ. Ծննդի առթիվ



Մեծ Բրիտանիայի կենտրոնական հեռուստատեսության չորրորդ ալիքն ամեն տարի, արդեն տասնվեցերորդ անգամ այլընտրական շնորհավորանք է փոխանցում բրիտանացիներին: Այս անգամ հեռուստաալիքը դա առաջարկել է անել Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին: Իր խոսքում, որը չորեքշաբթի օրը հաղորդել է, մասնավորապես, բրիտանական «Սքայ Նյուզ» հեռուստաալիքը, Ահմադինեժադը բրիտանացիներին շնորհավորել է Սբ. Ծննդի առթիվ: Նա, մասնավորապես, նշել է, որ տարբեր հիմնախնդիրներ են ծագում այն ժամանակ, երբ մոռացվում են մարգարեների քարոզները, եւ «առանձին կառավարություններ անտարբերություն» են դրսեւորում նրանց ուսմունքի նկատմամբ:

Առողջ սիրտ ունենալու համար անհրաժեշտ է քնել առնվազն 7 ժամ

Դրանից ավելի կարճ քունը մեծացնում է սրտամկանի ինֆարկտի վտանգը: Այդ մասին հաղորդել է լոնդոնյան «Դեյլի թելեգրաֆ» թերթը՝ վկայակոչելով ԱՄՆ-ի Չիկագոյի համալսարանի գիտական կոլեկտիվի նորագույն հետազոտությունները: Աշխատանքների ընթացքում գիտնականները պարզել են, որ լիարժեք քունը նպաստում է մարդու օրգանիզմում բնական հավասարակշռության պահպանմանը: Իսկ քնի պակասը տանում է զարկերակներում վտանգավոր մակարդուկների առաջացման, որոնք չափից ավելի մեծ քանակությամբ կալցիում են պարունակում: Դրանք կարող են ինֆարկտի պատճառներից մեկը դառնալ: Ինչպես հայտարարել է աշխատանքների ղեկավար Քրիստոֆեր Ռայան Ցինգը, ուղղակի կախվածություն գոյություն ունի քնի տեւողության եւ մարդու սիրտ-անոթային համակարգի վիճակի միջեւ: Գիտնականները պարզել են նաեւ, որ յոթ ժամ տեւողությամբ քունը թույլ է տալիս օրգանիզմին ամբողջովին վերականգնվել հաջորդ ամբողջ օրվա ընթացքում ակտիվ գործունեության համար, հաղորդում է «Արմենպրեսը»:

Աբդուլլահ Գյուլի շնորհավորական ուղերձը Թուրքիայի քրիստոնյաներին

Հայկական ծագման պատվակով Մեջլիսի Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավոր տկն Զանան Արքմանի հարձակման թիրախը դարձած նախագահ Աբդուլլահ Գյուլը դեկտեմբերի 24-ին, կաթոլիկ եւ բողոքական աշխարհի Սբ. Ծննդյան տոների նախօրյակին, շնորհավորական ուղերձ է հղել Թուրքիայի քրիստոնյաներին:

Ուղերձում Գյուլը դատապարտել է էթնիկ եւ կրոնական խտրականության դրսեւորումները, ընդգծել է խտրականության հասցրած վնասները երկրի միասնականությանը, ապա եւ ավելացրել. «Յուրաքանչյուր ոք, անկախ ծագումից, դավանանքից, հայացքներից, մեր ազգի առաջնակարգ եւ պատվավոր ներկայացուցիչն է: Պատմական հարուստ կուտակումներով, համատեղ ապագայի նկատմամբ մարդկանց ընդհանուր հավատով Թուրքիան ինչպես առ այսօր, այնպես էլ հետայսու շարունակելու է կատարել հակամարտությունների կարգավորմանն ուղղված իր դերակատարությունը տարածաշրջանում եւ աշխարհում, նպաստելու՝ քաղաքակրթությունների ու կրոնների միջեւ երկխոսության եւ ներդաշնակության հաստատման ջանքերին»:

Հետեւելով նրա օրինակին, երկրի քրիստոնյա քաղաքացիներին ուղերձով շնորհավորել է նաեւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Քյոքսալ Թոփքանը:

Հ. Ծ.

Մշակույթ

Usամբուլի Թրաքիայ ուսուցչաց հիմնարկի հրատարակությամբ լույս է տեսել **Եղիա Տեմիրճիպաշյանի** ժողովածուն, 1899-ին «Մասիս» հանդեսում Տեմիրճիպաշյանի տպագրած բանաստեղծությունների «Տաղարան» երկրորդ շարքի համանուն՝ **«Հայրք մութին»** խորագրով: Գրքի կազմողխմբագիրներն են **Սիրանուշ Դվոյանը** եւ **Սեւան Տեյիրմենճյանը**: Հատորի հրատարակության մեկենասը **Մարուքի Հիսարլը**ն է: Գիրքը ձոնված է նրա հանգուցյալ ծնողների հիշատակին: Գրքի բարձրորակ տպագրությունը առաջարկված է թղթի ընտիր որակով, կազմի սեւաթույրին՝ արծաթավուն տառերով, չնայած ծավալին (325 էջ), գրքի թեթեւությամբ. տպագրությունը «Մարմարա» օրաթերթինն է:

Առ այսօր Եղիա Տեմիրճիպաշյանը՝ չնայած իր գրական մեծաքանակ ժառանգությանը, ուներ ընդամենը երկու հրատարակություն. առաջինը տպագրված Փարիզում՝ 1955-ին («Արձակ էջեր, նամակներ, թերթուածներ», մյուսը՝ Երեւանում, 1986-ին՝ բանաստեղծությունների, արձակ էջերի, նամակների ընտրանին («Երկեր», «Սովետական գրող» հրատ.):

Այս հատորը արեւմտահայ գրող, հրապարակախոս, քննադատ, փիլիսոփա Տեմիրճիպաշյանի ստեղծագործությունների ամբողջական հրատարակությունն իրականացնելու պոլսահայ մտավորականների անդրանիկ քայլն է: Հատորն ընդգրկող Եղիա Տեմիրճիպաշյանի չափածո գործերի մի մասը հրապարակվել է գրողի կենդանության օրոք, մի որոշ մաս՝ հետմահու:

Ժամանակի մամուլում սփռված գրողի գործերի հավաքությունը կատարվել է հնարավորությունների սահմաններում, իրենց հասանելի մամուլի ոչ ամբողջական հավաքածուներով, որոնք կազմում են հատորի առաջին մասը, երկրորդ բաժնում զետեղված է Տեմիրճիպաշյանի կազմած, այժմ Ցարենցի անվ. գրականության եւ արվեստի թանգարանում պահվող բանաստեղծությունների տետրը՝ աննշան սրբագրումներով, եւ ինչպես կարծում են գրքի հրատարակիչները, հիմնականում՝ անփոփոխ: Ժողովածուն գաղափարական կամ գեղագիտական համակարգված կառույցի չի ենթարկվել, ինչպես խմբագիրներն են գրում, Եղիայի պարագայում դա «հարկադրական ջանք է եւ ոչ ավելին», որովհետեւ «Եղիայի տարուբերող էութեան մէջ կայ շարժում մը, երբ ան տիեզերքը հասկնալու համար անվերջօրէն կը փորձէ ոչ այնքան մասերու բաժնելով տեսնել զայն, ինչպէս է գիտութեան պարագային, այլ այդ տիեզերքը է որպէս դէպի իրեն եկող ալիք մը, որ պահէ մը վերջ կը դառնայ այլեւս անընդգրկելի ու անսահմանելի իր ուժգնութեան մէջ՝ ցուցնելով, հեռանալով, խուսափելով հայեացքի մը տիրապետումէն»:

Իրապես անպարփակելի է Եղիա Տեմիրճիպաշյանի հոգեկան տարուբերումների, դեգերումների, ընդվզումների ստեղծագործական տարերքը: Տիեզերքի գաղտնարանների այս մեծ որոնողը երկրածին երեւոյթներին օտար հոգի էր, մտքի այլընթաց սեւեռումներով: Իր ներքին աշխարհի անհամակերպ բնակչին խորթ էին արտաքին միջավայրը, երկրային իրողությունները: Զգայուն էություն էր Տեմիրճիպաշյանը, բանաստեղծական խառնվածքով, որոնողի փիլիսոփայական աշխարհայացքով, բարձրագույն իդեալների ձգտումներով:

Այդպես էլ ապրեց իր կյանքը՝ դժվարին ընթացքով ու եղերական վախճանով:

Ծնվել եւ ուսում է առել Պոլսին մոտ Խասգյուղի Ներսեսյան վարժարանում, Մինաս Չերազի, Ռեթեոս Պերպերյանի հետ սովորել է նույն դասարանում: Ավելի ուշ մեկնել է Մարսել ուսանելու, սակայն զբաղվել է հրատարակչական գործով, լույս է ընծայել «Le Moniteur Litteraire et Financier de Marseille» շաբաթաթերթը: Այդ շրջանում խորապես ուսումնասիրել է ֆրանսիական գրականություն, ժամանակի փիլիսոփայական ուղղությունները, կարող է հաստատել ֆրանսիացի մտավորականների, Վիկտոր Հյուգոյի եւ ուրիշների հետ: Հայրենիք վերադառնալով՝ աշխատակցել է բազմաթիվ պարբերականների, ինքնուրույն հրապարակումներով, բանաստեղծություններով հանդես է եկել մամուլում, հրատարակել է գրքույկներ: Իր խմբագրությամբ տարբեր տարիների լույս են տեսել «Գրական եւ իմաստասիրական շարժում», «Երկրագունտ», «Մտքեր» եւ «Դար» հանդեսները, որտեղ նա եւ հրատարակիչ էր, եւ խմբագիր ու սրբագրիչ, բեռնակիր, գրիչ, մատակարար: Կազմել եւ հրատարակել է նաեւ ֆրանսերեն-հայերեն բառարան: Լուսավոր կերպար է եղել նաեւ մանկավարժության մեջ, դասավանդել է փիլիսոփայություն, հին ու նոր գրականություն, մանկավարժություն, էսթետիկա, հոգեբանություն: Ժամանակակիցները գրում են, որ հատկապես հին հնդկական գրականության դասախոսությունները անցել են փայլուն, ավարտվել ծափահարություններով:

Հետաքրքրական է նաեւ այն փաստը, որ անկախ իր կամքից, թաղի բնակիչները նրան ընտրել են թաղային եւ երեսփոխան: Այսպես բազմաբնորհ ու բազմագբաղ էր Եղիա Տեմիրճիպաշյանը, սակայն ապրեց զրկանքների ու հոգետար տվայտանքների մի ամբողջ կյանք: Երիտասարդ տարիքում սիրո հուսահատական մի պահի ինքնասպանության փորձ է արել՝ ծովը նետվելով: Հոր, եղբոր, ապա մոր կորուստը բանաստեղծական նրա զգայուն հոգեվիճակը առավել է սրել, մելամաղձոտ դարձրել՝ դատապարտելով մենակեցության: Նամակագրային ռոմանտիկ մի սիրավեպ է ունեցել Ներսեսյան վարժարանի տնօրենուհի Սրբուհի Սեղբոսյանի հետ: Այդ նամակները իր մահից երկու տարի անց հրատարակել է Հրանտ Նազարյանցը: Նրա կյանքի վերջին տարիներին միակ սփոփողը, նեցուկը, իր խոսքերով՝ «պահապան հրեշտակը», հունգարուհի մի կին էր՝ նրբազգաց ու հոգատար էլեն Նիսը, որին նա գտավ ճմռան մի օր, Բերա թաղամասում, երբ վարձու տուն էր փնտրում: Նրա բացակայությամբ, 1908 թվականի մի օր հիվանդությունից հյուծված բանաստեղծը ինքնասպան եղավ:

ՄԵԼՔՈՆ ԲԱՂՋԱՅԻ

Եղիա Տեմիրճիպաշյանի գրական ժառանգության ամբողջական հրատարակության անդրանիկ փորձը

«Հայրք մութին» ժողովածուն

Համերգ-մեծարում

Դեկտեմբերի 23-ին Արամ Խաչատրյան համերգասրահի լեփ-լեցուն դահլիճը եւս մեկ անգամ փաստեց, որ մեր ժողովուրդը սիրում ու գնահատում է արվեստն ու մեծություններին:

Ուզում եք կախարդական, թե մոգական անվանել մեծն Չեֆիջյանի փայտիկը, թող այդպես լինի: Կախարդական թե մոգական է նա իր կենսակերպով, իր մեծությամբ: Պրն Չեֆիջյանը մեծություն է իր մարդկային որակով, բանականությամբ: Չեֆիջյանն արարեց ակադեմիական երգչախումբը, ու օրեցօր նորանոր որակներով հարուստացրեց մեր երգչախմբային արվեստը:

Դեկտեմբերի 23-ին ակադեմիական երգչախումբը Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի փառահեղ կատարումով գերեց հանդիսատեսին: Ֆիլհարմոնիկ նվագախմբի, ակադեմիական երգչախմբի, մենակատարներ՝ Սուրեն Մանուկյանի, Լիլիթ Գրիգորյանի, Զեմֆիրա Դանիելյանի, Սարգիս Աղամալյանի ներդաշնակ, համահունչ կատարումները մեծն Չեֆիջյանի մոգական վարպետության առհավատյան էին: Այնքան սահուն, գեղեցիկ էին կատարվում երաժշտական վայրիվերումները, ու այնքան բնական էր փոխանցվում դերերը երգչախմբին ու հակառակը, որ կամա, թե ակամա աչքերիս առջեւ հառնել էր մեծն Այվազովսկու «9-րդ ալիքը»: Ու համոզվեցի. մեծությունները, իրոք, զուգորդում ու լրացնում են միմյանց: Երբ մեծությունները՝ Բեթհովեն, Այվազովսկի եւ Չեֆիջյան, ողջ երեկոյի ընթացքում լրացրեցին միմյանց:

Հրավառություն էր Արամ Խաչատրյան համերգասրահում: Հնչյուններ, գույներ, երազներ հրավառություն:

Ձկային խոսքեր: Կար սեր: Մեծ սեր ու ծաղիկներ: Ցմարող բուռն ու հոսնկայս ծափողջույններով խոնարհվեցինք Չեֆիջյանին.

- Մենք, սիրում ենք Քեզ:

ՀԱՍՄԻԿ ԸՈՒՐՈՅԱՆ

Նշվեց Կամո Ուղումյանի հոբելյանը

Պետական ու հասարակական նշանավոր գործիչ, Հայաստանի մշակույթի, կրթության ու գիտության ասպարեզում ակնառու վաստակ ունեցող Կամո Ուղումյանն այսօր ապրում է Մոսկվայում: Թե ինչը նրան ստիպեց լքել սիրելի Երեւանն ու բնակություն հաստատել Ռուսաստանում՝ հայտնի չէ: Սակայն ականավոր գործիչը վստահեցնում է, որ Հայաստանից հեռացավ ֆիզիկապես. հոգին ու մտքերը մնացել են Երեւանում:

Երեկ լրացավ Կամո Ուղումյանի ծննդյան 80-ամյակը: Այդ կապակցությամբ Երեւանի հյուսիսային համալսարանի էլեկտրոնային նոտաբաց գրադարանը անվանակոչվեց Կամո Ուղումյանի անվամբ: Միջոցառմանը մասնակցում էին նաեւ Լեզվի տեսչության պետ Լավրենտի Միրզոյանը, բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, Ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գետոգյանն ու բազմաթիվ այլ մտավորականներ, գիտնականներ: «Ուղումյանը հայրենասեր գործունեություն ծավալող անձնավորություն է, որ յուրաքանչյուր միջավայրում աչքի է ընկել վառ անհատականությամբ, նորամուծություններով: Զարմանալի անձնավորություն էր, մշակույթի ասպարեզում հսկայական գործ է կատարել, ինչը հաջորդ սերունդներն անպայման կգնահատեն», ասաց Աստղիկ Գետոգյանը:

Ռեկտոր Բորիս Մակիչյանն էլ առանձնացնելով Ուղումյանի վաստակը հատկապես սփյուռքահայության խնդիրները հոգալու վերաբերյալ, նշեց, որ այս տարվանից համալսարանի գերազանցիկ ուսանողները կարող են օգտվել Կամո Ուղումյանի անվան կրթաթոշակից:

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ուսումնասիրության նոր մեթոդը եգիպտագիտությունում նոր ձեռքբերումներ է խոստանում



Հնագիտական ավանդական մեթոդներով մինչ օրս եգիպտագետները կարողացել են հայտնաբերել հնագույն բնակավայրերի մեկ տոկոսը: Մնացյալ 99 տոկոսի հայտնաբերումը ապագայի գործ է, ըստ Ալաբամայի համալսարանի եգիպտագետ Սառա Պարկակի: Ինչպես տեղեկացնում է CNN-ը, հենց նրա ջանքերով է 2003-2004 թվականներին բացահայտվել մինչ այդ անհայտ 83 օբյեկտ:

Եգիպտագետը նախ՝ ուսումնասիրում է արբանյակային լուսանկարները, ապա իր ենթադրությունները ներկայացնում հնությունների եգիպտական բարձրագույն խորհրդին եւ մասնակցում տեղում կատարվող ուսումնասիրություններին: Պարկակի աշխատանքային մեթոդը թույլ է տալիս որոշել անգամ առանձին կառույցների գտնվելու վայրը:

82 միլիոն բնակչություն ունեցող Եգիպտոսում շինարարությունը մեծ տարածքներ է գրավում եւ երկրի կառավարությունն առավել կարեւորում է պեղումները հատկապես Նեղոսի դելտայի արեւելյան մասում:

Ն. Պ.

Թանգարանը կարունակի գործել

Լոս Անջելեսի ժամանակակից արվեստի թանգարանը ֆինանսական ճգնաժամը հաղթահարել է միլիոնատեր, հավաքորդ, բարեգործ էլի Բրոդի տրամադրած 30 միլիոն դոլարի շնորհիվ: Տրամադրված գումարը թանգարանը կստանա առաջիկա 5 տարիների ընթացքում եւ միաժամանակ կկազմակերպի դրամահավաք 75 միլիոն դոլար:

Ն. Պ.

Ռուսաստանում արդեն գոյություն չունեցող եկեղեցիների պահպանված տարրերը մեկ թանգարանում

Երկարամյա նորոգումից հետո բացվել է Կրեմլի «Իվան Մեծ» զանգակատունը որպես թանգարան, որտեղ տարբեր տարրերի միջոցով ցուցադրվում են արդեն գոյություն չունեցող եկեղեցիները: Կրեմլյան թանգարանների տնօրեն Անդրեյ Բատալովը ռուսական լրատվամիջոցներին տեղեկացրել է, որ թանգարան մուտքը թույլատրվելու է խմբերով, իսկ 30 մետր բարձրության վրա գտնվող դիտահարթակն աշխատելու է միայն ամռանը:

Այս տարի զանգակատունը 500 տարեկան է դարձել եւ լրացել է այն փակելու 90 տարին, իսկ հուշարձանի լիակատար վերականգնումն ավարտվել է նախորդ տարի:

Հայ լեգեոնականները վերադառնում են հայրենիք

2007-ի ֆուտբոլային մրցաշրջանի ավարտից հետո ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի մի խումբ առաջատար ֆուտբոլիստներ տեղափոխվեցին արտերկիր՝ ընդունելով տարբեր թիմերի հրավերները: Սակայն նրանցից ոչ բոլորին հաջողվեց ամրագրվել թիմերի կազմերում, ոմանք էլ թեեւ հանդես եկան արտերկրի ակումբներում, սակայն դժգոհ էին ստեղծված պայմաններից: Ուստի այդ ֆուտբոլիստներից մի քանիսն արդեն վերադարձել են հայրենիք եւ նոր մրցաշրջանը կդիմավորեն հայաստանյան նոր ակումբներում:

Նրանցից մեկն ազգային հավաքականի կիսապաշտպան, 32-ամյա Արթուր Ոսկանյանն է: 2007-ին նա հանդես էր գալիս «Արարատում», իսկ մրցաշրջանի ավարտից հետո մեկնեց Բելառուս՝ ընդունելով «Վիտեբսկի» հրավերը: Այստեղ մեկ տարի խաղալուց հետո Ոսկանյանը որոշեց վերադառնալ Հայաստան եւ հանդես գալ «Բանանցի» կազմում: Հետաքրքրական է, որ Ոսկանյանը 2001-ին խաղացել է «Բանանցում», երբ թիմը մարզում էր ներկայիս գլխավոր մարզիչ Արմեն Գյուլբուդաղյանցը: Ի դեմ, «Բանանցից» հեռացել են ոչ միայն լեգեոնականների մեծամասնությունը, այլեւ Եղիշե Մելիքյանն ու Ռոմիկ Խաչատրյանը: Վերջինս փորձում է կրկին հանդես գալ Կիպրոսում:

Բելառուսից Հայաստան է վերադարձել նաեւ «Փյունիկի» եւ ՀՀ հավաքականի կիսապաշտպան Աղվան Մկրտչյանը: Նա Ոսկանյանի նման չվերադարձավ հարազատ կոլեկտիվ, այլ պայմանագիր կնքեց «Միկայի» հետ: Նոր մրցաշրջանում «Միկայում» հանդես կգա նաեւ վերջին տարիներին լեգեոնականի կարգավիճակում հայտնված ՀՀ հավաքականի հարձակվող Արա Հակոբյանը: Ընդհանրապես նոր մրցաշրջանում «Միկայի» ղեկավարությունը թիմի կազմն ամրագրելու լուրջ քայլեր է ձեռնարկել: Արդեն շուրջ մեկ ամիս է, ինչ Հայաստանում է խորվաթ մասնագետ Իվո Շուշակը, որը կգլխավորի «Միկան»: Թիմում ներկայում փորձաշրջան են անցնում Մադրիդի «Ռեալի» մարզադպրոցն ավարտած 25-ամյա ֆուտբոլիստներ՝ Պեդրո Լոպեսն ու Ուլի Մոնտենեգրոն: Նրանք հանդես են եկել իսպանական ոչ հայտնի թիմերում:

«Փյունիկի» ղեկավարությունն էլ որոշել է նոր մրցաշրջանում ուժեղացնել թիմի կազմը: Ճիշտ է, առայժմ ակումբը նոր ձեռքբերումներ չունի: Փոխարենը «Փյունիկը» հրաժարվել է Վարդան Պետրոսյանի եւ Տիգրան Ղարաբաղցյանի ծառայություններից:

Մարզումներն է սկսել նաեւ Երեւանի «Արարատը», որը մեր թիմերից առաջինը մրցաստարեզ դուրս կգա: Արարատցիները հունվարի կեսերին Մոսկվայում մասնակցելու են «Համագործակցության գավաթի» մրցաշարին: Թիմի կազմում առայժմ փոփոխություններ չկան: Միայն բրազիլացի էմիլիոն է հեռացել «Արարատից», որի հետ պայմանագրի ժամկետը չի երկարաձգվել: Նախատեսվում է, որ մյուս լեգեոնականները թիմի մարզումներին պետք է միանան հունվարի 8-ից: «Կիլիկիայում» էլ գլխավոր մարզչի դերը ստանձնել է Աբրահամ Խաժմանյանը, որը փոխարինել է Էդուարդ Մարգարովին: Վերջինս կկատարի խորհրդատու մարզչի պարտականությունները:

Ֆեդերացիան անվանում է չեմպիոններին

Թենիսի միջազգային ֆեդերացիան թենիսիստների դասակարգման առաջատարներ, իսպանացի Ռաֆայել Նադալին ու սերբ Ելենա Յանկովիչին հռչակել է 2008-ի չեմպիոններ: Նադալը դարձավ իսպանացի առաջին թենիսիստը, որ նման տիտղոսի է արժանանում: Նախկինում նման նվաճման է հասել միայն նրա հայրենակցուհի Արանչա Սանչես Վիկարիոն 1994-ին:

Տղամարդկանց զուգախաղում չեմպիոններ են հռչակվել կանադացի Դանիել Նեստորն ու սերբ Նենադ Զիմոնջիչը: Կանանց զուգախաղում լավագույններ են ճանաչվել Կառա Բլեյկն ու Լիզել Հուբերը:



Նշենք, որ դասակարգման ցուցակի առաջատարները միշտ չէ, որ թենիսի միջազգային ֆեդերացիայի կողմից չեմպիոններ են հռչակվել: Օրինակ, 2004-ին չեմպիոն էր հռչակվել ռուսաստանցի Անաստասիա Միսկինան, որը դասակարգման ցուցակում 3-րդ տեղում էր: Ցուցակը գլխավորում էր ամերիկուհի Լինդսեյ Դեյենպորտը, 2-րդ տեղում ֆրանսուհի Ամելի Մորեսմոն էր: Ի տարբերություն նրանց, Միսկինան ընթացիկ մրցաշրջանում հաղթող է ճանաչվել «Մեծ սաղավարտի» մրցաշարերից մեկում՝ Ֆրանսիայի բաց առաջնությունում:

Ճիշտ է, Ելենա Յանկովիչն առայժմ հաջողության չի հասել «Մեծ սաղավարտի» մրցաշարերում: Սակայն միջազգային ֆեդերացիան հավի է առել սերբ թենիսիստուհու կայուն մրցելույթները եւ այն, որ նա դասակարգման ցուցակի լավագույն հնգյակից բոլորից շատ՝ 22 մրցաշարի է մասնակցել:

Իսպանիայի հավաքականը լավագույնն է Եվրոպայում

Մարզական լրագրողների միջազգային միության հարցման արդյունքներով որոշվել են տարբեր աշխարհամասերի լավագույն հավաքականները ու ակումբները: Բնական էր սպասել, որ Եվրոպայում լավագույնը կճանաչվի «հին աշխարհամասի» չեմպիոն Իսպանիայի հավաքականը: Իսպանացիների առավելությունը մրցակիցների նկատմամբ ակնհայտ է: Նրանք վաստակել են ձայների 82,65 տոկոսը: 2-րդ տեղը զբաղեցրած Ռուսաստանի հավաքականին ձայն են տվել ընդամենը 10,26 տոկոսը: Լավագույն եռյակը եզրափակել է Գերմանիայի ընտրանին (7,18 տոկոս):

Եվրոպայի լավագույն թիմի հարցում էլ ֆուտբոլասերների համակրանքը չեմպիոնների ներկայիս գավաթակիր «Մանչեսթր Յունայթեդի» կողմն էր: Նրանց 56,48 տոկոսը կողմն էր: Նրանց 56,48 տոկոսը կողմն էր տվել Անգլիայի չեմպիոնի օգտին: Երկրորդ տեղում ՈՒԵՖԱ-ի գավաթակիր եւ Եվրոպայի սուպերգավաթակիր «Զենիթն» է (30,57 տոկոս): 3-րդ տեղը գրավել է «Չելսին» (12,55):

«Սեւ մայրցամաքի» ուժեղագույն հավաքականը Եգիպտոսի ընտրանին է (50,8): 2-րդ եւ 3-րդ տեղերում Կամերունի (42,25) եւ Գանայի (6,95) հավաքականներն են: Իսկ լավագույն թիմ է ճանաչվել Եգիպտոսի «Ալ Ահլին» (63,93): 2-րդ տեղում Կամերունի «Կոտոն Սպորտն» է (26,78), 3-րդ հորիզոնականը զբաղեցրել է Նիգերիայի «Էնիմբան» (9,27):

Արգենտինայի հավաքականը գլխավորում է հարավամերիկյան գոտու հավաքականների ցանկը: Արգենտինացիների օգտին քվեարկել են մասնակիցների 58,95 տոկոսը: Բրազիլիայի հավաքականը (30,53) զգալիորեն հետ է մնացել իր գլխավոր հակառակորդից: Երրորդ տեղում Պարագվայի հավաքականն է (10,53): Լավագույն ակումբը եւս ներկայացնում է Արգենտինան՝ «Բոկա Խունիորսը» (44,92):

Ասիայում լավագույնը Ավստրալիայի հավաքականն է (40,96), որին հաջորդում են Ճապոնիայի (30,32) եւ Իրանի (28,72) հավաքականները: Իսկ ուժեղագույն ակումբը ճապոնական «Ուրավա Ռեդսն» է (64,57): 2-րդ տեղում Ուզբեկստանի չեմպիոն Տաշքենդի «Բունեդկորն» է (24), որը գլխավորում է բրազիլացի Զիկոն եւ որում հանդես է գալիս նրա հայրենակից Ռիվալդոն: Լավագույն եռյակը եզրափակում է Իրանի «Փիրուզին» (11,34):

ԿՈՆԿԱԿԱՖ-ի գոտու հավաքականների լավագույն եռյակը այսպիսի տեսք ունի. Մեքսիկա (47,76), ԱՄՆ (31,34), Կոստա Ռիկա (20,9): Ակումբները դասավորվել են հետեւյալ հերթականությամբ. «Պաչուկա» Մեքսիկա (64,64), «Հյուստոն-Դինամո» ԱՄՆ (24,86), «Սապրիսա» Կոստա Ռիկա (10,5): Օվկեանիայի գոտում հարցման արդյունքներն այսպիսին են. Նոր Զելանդիա (83,89), Ֆիջի (11,11), Նոր Կալեդոնիա (5): Ակումբների ցանկն այսպիսին է. «Վայտեկի Յունայթեդ» Նոր Զելանդիա (56,66), «Թիմ Վելինգտոն» Նոր Զելանդիա (22,73), «Կոստա» Սողոմոնյան կղզիներ (17,61):

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ

Բեքհեմի շուն սկսվեց

Իտալական «Միլանն» իր երկրպագուներին պատշաճաչափ ներկայացրել է «Լոս Անջելես Գալաքսիի» եւ Անգլիայի հավաքականի կիսապաշտպան Դեյվիդ Բեքհեմին: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, «Միլանը» վարձակալել է 33-ամյա Բեքհեմին, որը մարզավիճակը պահպանելու համար հունվարի 11-ից մարտի 8-ը պետք է մարզվի եւ հանդես գա իտալական ակումբում: «Միլանի» փոխնախագահ Ադրիանո Գալիանին տեղեկացրել է, որ թիմի կազմում նորամուտը Բեքհեմը կնճի հունվարի 11-ին «Ռոմայի» հետ խաղում, իսկ վերջին անգամ թիմի մարզաբաժիկը Դեյվիդը կկրի մարտի 8-ին «Ատալանտայի» հետ մրցավեճում:

2007-ին Դեյվիդ Բեքհեմը մոտ էր «Միլանի» հետ պայմանագիր կնքելուն, սակայն նախընտրեց մեկնել ԱՄՆ եւ հանդես գալ տեղի «Լոս Անջելես Գալաքսի» թիմում: Եվ ահա այժմ արդեն Բեքհեմն ինքն էր խնդրել ակումբի ղեկավարությանը հնարավորություն ընձեռել մարզվել «Միլանում»: Եվ «Միլանի» ղեկավարությունը սիրով ընդառաջ գնաց ֆուտբոլիստին:

«Ֆուտբոլային կարիերայիս ընթացքում հանդես եմ եկել այնպիսի անվանի ակումբներում, ինչպիսիք «Մանչեսթր Յունայթեդն» ու Մադրիդի «Ռեալն» են: Ցանկություն հայտնեցի հանդես գալ նաեւ Իտալիայի «Ա» սերիայի առաջնությունում: Եվ գտա, որ Իտալիայում ամենահեղինակավոր եւ տիտղոսակիր ակումբը «Միլանն» է: Երբ այդ մասին հայտնեցի Անգլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելոյին, որը ժամանակին մարզել է նաեւ «Միլանը», նա հավանություն տվեց իմ որոշմանը: Ես սիրում եմ Իտալիան, այստեղ ինձ երջանիկ եմ զգում: «Միլանում» ինձ քրտնաջան աշխատանք է սպասում եւ կձգտեմ օգնել նոր թիմակիցներիս հաջող ելույթներ ունենալ: Ակումբի ընտրության հարցում կարեւոր նշանակություն ուներ նաեւ այն, որ «Միլանում» հանդես է գալիս թիմի խորհրդանիշը դարձած 40-ամյա Պաոլո Մալդինին: Ինձ համար մեծ պատիվ կլինի նրա, Կակայի եւ Ռոնալդինյոյի կողքին խաղալը», հայտարարել է Դեյվիդ Բեքհեմը մամուլի ասուլիսին:

Դեյվիդ Բեքհեմի եւ նրա տիկնոջ՝ Վիկտորյայի ժամանումը Իտալիա մեծ աշխուժություն է առաջացրել ինչպես ֆուտբոլասերների, այնպես էլ լրատվամիջոցների ներկայացուցիչների շրջանում: «Աստղային զույգին» մեծ շուքով դիմավորեցին՝ հատկացնելով պատվո պահակախումբ: Հետաքրքրական է, որ Բեքհեմը Իտալիա էր ժամանել Իտալիայի վարչապետ Սիլվիո Բերլուսկոնիի տրամադրած ինքնաթիռով: Իսկ Բեքհեմին տրամադրած թիկնապահների քանակն էլ կարելի է համեմատել վարչապետի թիկնազորի հետ:

Հարկ է նշել, որ թե՛ Բեքհեմի, թե՛ «Միլանի» համար այս գործարքը շահավետ է: Ինչպես վերը նշեցինք, Բեքհեմը հնարավորություն կունենա պահպանելու իր մարզավիճակը, որպեսզի չկորցնի տեղն Անգլիայի ազգային հավաքականում, որի կազմում 107 խաղ է անցկացրել: Ճիշտ է, Ֆաբիո Կապելոն հայտարարել է, որ Բեքհեմին հավաքականում կընդգրկի միայն այն ժամանակ, եթե նա «Միլանում» ոչ միայն մարզվի, այլեւ խաղա: Բեքհեմը հույս ունի, որ Կառլո Անչելոտին կվստահի իրեն եւ կընդգրկի թիմի կազմում:

«Միլանի» համար Բեքհեմի վարձակալումը թե՛ կոմերցիոն, թե՛ գովազդային առումով շատ շահավետ քայլ է: «Միլանում» գտնվելու ժամանակահատվածում Բեքհեմն աշխատավարձը ստանալու է «Լոս Անջելես Գալաքսիից»: Իսկ «Միլանը» նույնիսկ վարձակալության համար ամերիկյան թիմին ոչ մի գումար չի վճարելու: Ակումբի ղեկավարությունը հույս ունի Բեքհեմի շնորհիվ խոշոր գումարներ վաստակել Դուբայում կայանալիք մրցաշրջագայության ընթացքում, ինչպես նաեւ Իտալիայում անցկացվելիք ընկերական մրցախաղերում: Սրանց պետք է ավելացնել նաեւ հունվարի կեսերին

Միլանում կայանալիք նորաձեւության շաբաթը, որին մասնակցելու է «աստղային զույգը»: Դա մեծ իրադարձություն կլինի ողջ Իտալիայի համար եւ կրկին խոշոր գումարներ կարող է աղահովել «Միլանին»: Այնպես որ կոմերցիոն առումով Բեքհեմի ընդգրկումը «Միլանում» ավելի շահավետ է, քան մարզական տեսանկյունից:

Իտալական լրատվամիջոցներն էլ ուշադրության կենտրոնում են պահում Դեյվիդ Բեքհեմին եւ նրա կնոջը՝ գուշակություններ կատարելով, թե ինչ արժեն Վիկտորյայի հագուստները, կամ ո՞ր հյուրանոցում են հանգրվանելու նրանք: Իսկ բոմժերները սկսել էին խաղադրույքներ ընդունել, թե ո՞ր համարի մարզաբաժիկով է հանդես գալու Բեքհեմը «Միլանում»: Ավելի մեծ մասնայականություն էին վայելում 75 եւ 99 համարները: Եվ որքան մեծ եղավ խաղադրույքներ կատարողների հիասթափությունը, երբ պարզ դարձավ, որ Բեքհեմը խաղալու է 32 համարի մարզաբաժիկով: Նրան առաջինն այդ համարի մարզաբաժիկ էին առաջարկել եւ նա անմիջապես համաձայնվել էր: Վերջին անգամ այդ մարզաբաժիկով թիմում հանդես է եկել Բոկի ազգանունով մի ֆուտբոլիստ, որը ոչնչով աչքի չի ընկել, բացի իր անսովոր ազգանունից: Իսկ շնորհիվ Բեքհեմի, այդ համարը հետագայում շատերի համար ցանկալի կդառնա:

Ռոնալդինյոյին կողոպտեցին

Օրերս անհայտ չարագործները կողոպտել են Բրազիլիայի հավաքականի եւ իտալական «Միլանի» կիսապաշտպան Ռոնալդինյոյին: Վերջինս որոշել էր կարճատեւ արձակուրդն անցկացնել հայրենիքում՝ ուստի մեկնել էր Բրազիլիա: Օգտվելով դրանից, գիշերը կողոպտիչները ներխուժել էին նրա բնակարան եւ մի քանի հազար ֆունտ ստեռլինգի թանկարժեք իրեր էին գողացել: Հետաքրքրականն այն է, որ կողոպտիչները չէին նկատել կամ էլ չէին ցանկացել իրենց հետ տանել «Ոսկե գնդակ» մրցանակը, որ Ռոնալդինյոյին շնորհվել էր 2005-ին Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ ճանաչվելու առիթով:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ինչո՞ւ է ձգձգվում հանցագործության բացահայտումը

2008-ի սեպտեմբերի 22-ին «Ազգի» խմբագրությանը հղած նամակ-բողոքում թեհրանաբնակ տկն Ժանեթ Լազարյանցը տեղեկացնում էր մի հետաքրքրական դեպքի մասին. օգոստոսի 18-ի գիշերը ինքը Թեհրանից ժամանում է Երեւան եւ օդանավակայանում վարձում է պատահական մի տախսի, որ իրեն հասցնի Երեւանյան իր բնակարանը: Մոտ կեսգիշերին, երբ արդեն հասնում են տկն Ժանեթի տան մոտ, վերջինս վարորդին խնդրում է մի քանի րոպե կանգնել մթերային խանութի առաջ՝ գնումներ կատարելու: Մարաքի ոստիկանության բաժանմունք: Տվյալ գործը հանձնարարվում է քննիչ, ավագ լեյտենանտ Ղուլիխանյանին... Բազմաթիվ հարցաքննություններից հետո, անիմաստ ձգձգում են գործը: Տկն Ժանեթը պատմում էր, որ օրեր անց, պատահմամբ, հեռուստատեսությամբ տեսել է, թե ինչպես հենց այդ նույն քննիչին ձերբակալել են կաշառք վերցնելու համար: Հաջորդ օրը կրկին տուժողը դիմել է ոստիկանություն ու այդ օրվանից անցել է երկու ամիս, քար լռություն: Փաստի առթիվ 21.08.2008 թ. ոստիկանության Կենտրոնականի բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (թիվ 13181208):

Չնայած որ տուժողը ներկայացրել է պահանջված բոլոր փաստաթղթերը, սակայն «սայլը տեղից չի շարժվել»: Սեպտեմբերի 1-ին կատարվածի մասին նամակով տկն Ժանեթը տեղեկացրել է ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանին, հոկտեմբերի 10-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին եւ վերահսկողության բաժնին ու կրկին «Ազգ» օրաթերթին եւ ՀՀ-ում ԻԻՀ դեսպան պրն Սեյեդ Ալի Սաղայանին, հույս ունենալով, որ վերջապես այս գործը իրավապահ մարմինների ուշադրությունից դուրս չի գա եւ արդարացի լուծում կստանա: Խմբագրությունը տկն Լազարյանցի երկրորդ նամակը գրությամբ հանձնել է ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, քննչական գլխ. վարչության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Գագիկ Համբարձումյանին սեպտեմբերի 22-ին: Հոկտեմբերի 28-ին պրն Համբարձումյանի կողմից «Ազգը» ստացել է պատասխան, որ գործը մանրակրկիտ ուսումնասիրվում է, հանցագործությունը բացահայտելու նպատակով ձեռնարկվել են մի շարք անհետաձգելի քննչական գործողություններ, հարցաքննվել է Անդրանիկ Գալստյանը, խուզարկվել է նրա բնակարանը, զննվել է անձնական օգտագործման «ՎԱԶ-21010» մակնիշի 77 ՍՍ757 պետհամարանիշի ավտոմեքենան (մի՞թե անիսներ անց որեւէ բան կմնար մեքենայում կամ տանը-Մ. Մ), հարցաքննվել են այն մթերային խանութի աշխատողները, որտեղից միջադեպի օրը գնումներ է կատարել տկն Ժանեթն ու վերջում ավելացրել. «Հանցագործությունը բացահայտելուն ուղղված քննչական եւ օպերատիվ հետախուզական միջոցառումները դեռեւս դրական արդյունք չեն տվել»:

Ահա այստեղ է, ուր պարզապես զարմանում ու զայրանում է տուժող կողմը, որ «հինգ ամսում բացահայտ դեպքը ձգձգում են, անհիմն ու անիմաստ փաստաթղթեր պահանջում (բոլորը ներկայացվում է) եւ վերջը չի երեւում: Մի՞թե Հայաստանում արդարություն չկա եւ այսպես մինչեւ ե՞րբ...»:

«Ազգին» ուղղված նույն տեքստով մի գրություն էլ ՀՀ ոստիկանության քննչական գլխ. վարչության պետ պրն Գ. Համբարձումյանը հղել է նաեւ ՀՀ-ում ԻԻՀ դեսպան պրն Ալի Սեյեդ Սաղայանին ու խնդրել է նաեւ պատասխանել, թե տկն Լազարյանցը ՀՀ սահմանը հատելուց իր մոտ եղած գումարի մասին համապատասխան գրանցում արել է, թե՞ ոչ: Բայց չէ՞ որ տկն Ժանեթը նաեւ ՀՀ քաղաքացիություն ունի եւ գումարի չափն էլ պարտադիր չէ նշել հայտարարագրում: Այս փաստը կրկին ապացուցում է, որ ինչպես ժողովուրդն է ասում, փորձում են ձվի մեջ մազ գտնել: Հույսը կտրած Հայաստանի իրավապահներից տկն Ժանեթը դեկտեմբերի 22-ին պատվիրված նամակ է հղել ՀՀ նախագահին, հույս ունենալով, որ այս մեկը նախորդի բախտին չի արժանանա ու համապատասխան հսկողություն կսահմանվի...

Հիշեցնենք, որ տկն Ժանեթ Լազարյանցը Հայաստան-Իրան մշակութային կապերի համակարգողն է, ցուցահանդեսներ կազմակերպելու գործում պրոֆեսիոնալ մասնագետ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Ուղղում

«Ազգ»-ի դեկտեմբերի 17-ի՝ «Նոր հետաքննություններ Ջավախքում» հոդվածի տեղեկությունն այն մասին, թե Ախալքալաքի ոստիկանապետ Սամվել Պետրոսյանը ոստիկանություն է հրավիրել Տիգրան Մանուկյանին եւ պարտադրել նրան բողոք գրել իր պարտադան Գ. Շիրինյանի հորաքրոջ տղայի՝ Արթուր Նահապետյանի դեմ, չի համապատասխանում իրականությանը: Երեկ այդ մասին «Ազգ»-ին հայտնեց նույն ինքը՝ պարտաստեր Տ. Մանուկյանը, հավելելով, որ դիմումն իր կամքով է գրել, քանի որ «չի կարողանում նրանից գումարը ստանալ»:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միությունը խորհուրդ է հայտնում է.

Համաձայն բնական գազի օգտագործման կանոնների պահանջների, այն շինություններում, որտեղ տեղադրված են կենցաղային գազասարքեր, այդ թվում ջրատաքացուցիչ, ջեռուցման սարք, օգտագործման ժամանակ՝ այրման արգասիքների հեռացման համար անհրաժեշտ է գազի սարքավորման ծխանցքին հավասար կամ մեծ տրամաչափ ունեցող ծխասար, օդի հեռացման համար արտաքին օդասար շենքի տանիքից վեր դուրս բերված՝ պահանջվող բարձրությամբ:

Մարդկանց անվտանգությունը ապահովելու նպատակով «Միությունը» խորհուրդ է տալիս գազի սարքավորումներից օգտվելուց առաջ օդափոխել շինությունը, որտեղ տեղադրված է գազի սարքավորումը: Նախքան օգտվելը ստուգել ծխնելույզի քարշ առկայությունը: Քարշի առկայության դեպքում միայն օգտվել գազի սարքավորումից:

Գազասարքի օգտագործման ժամանակ ծխնելույզի քարշի նվազեցման, անսարքության, թուլության ժամանակ գազի թերայրման հետեւանքով առաջանում է ածխածնի օքսիդ /շմոլ գազ/, որը ուժեղ թունավոր գազ է եւ դրա աննշան քանակության առկայությունը շինությունում կարող է թունավորման պատճառ հանդիսանալ:

Խորհուրդ է տրվում նման դեպքերում մարել ծխնելույզը եւ նոր միայն օգտագործել գազասարքը:

Ծխաօդասար ուղիների մաքրման, վերանորոգման աշխատանքներ կատարելու համար կարող եք զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 443432:

Հոդվածը ընթերցելիս այն ընկալել որպես նպատակահարմարության տեսանկյուն:

«Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ»
իրավաբանական անձանց միություն
Ոչ պաշտոնական հրապարակում

ՕՐՎԱՅԳԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՄԱՆԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա Ն 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, սպառագրված է տպագրության՝ 25.12.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2:

HIGH-LEVEL E.U. ADVISORY GROUP TO ARMENIA

UNDP

External Vacancy Announcement

The European Union will deploy a team of high-level EU Advisers (EU Advisory Group) in selected key Armenian administrations to support the implementation of the EU-Armenia European Neighbourhood Policy Action Plan.

The EU Advisory Group will work closely with the Armenian authorities to support their reforms agenda towards democracy, good governance, rule of law and market economy. Specifically, the EU Advisors will provide high-level political and technical advice to design, steer and implement reforms aiming at strengthening the capacity of the Presidency, the Legislative, and Executive and Judiciary powers of Armenia in line with the ENP AP.

The Programme is fully funded by EC and implemented by UNDP. The following positions are now open for qualified and experienced candidates.

1. Expert/Assistant to the International Adviser to the Ministry of Finance on Public Debt
VA 025-08-HR
2. Expert/Assistant to the International Adviser on Regional Networks
VA 026-08-HR
3. Expert/Assistant to the International Adviser to the Ministry of Finance and the Head of the State Revenues Committees of Armenia
VA 027-08-HR
4. Expert/Assistant to the International Adviser to the Minister of Economy
VA 028-08-HR
5. Expert/Assistant to the International Adviser to the Prime Minister on reforms of Public Administration including e-governance and other issues
VA 029-08-HR
6. Expert/Assistant to the International Adviser to the Human Rights Defender
VA 030-08-HR
7. Expert/Assistant to the International Adviser to the Chairman of the National Assembly of Armenia
VA 031-08-HR
8. Expert/Assistant to the International Adviser to the Ministry of Foreign Affaires
VA 032-08-HR

Please visit **http://www.undp.am/?page=Jobs** to obtain full Terms of Reference, application procedures and requirements.

Applications can be submitted through **http://oc.undp.am/?go=vacancies**, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan str.

Please clearly indicate in your application the title of the position and the VA Number.

A complete application form should consist of a letter of motivation, full CV, copies of diplomas. Incomplete applications will not be considered. Only short listed applicants will be contacted.

Date advertised: 26 December 2008
Application deadline: 7 January 2009, 18:00

Women candidates are encouraged to apply
UN House is a non-smoking environment

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

«Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունը դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություններ կարգավորող հանձնաժողովին՝ ընկերության ծառայություններից օգտվող բաժանորդներին մատուցվող ջրամատակարարման եւ ջրահեռացման սակագների վերանայման հայտով:

Խմելու ջրի մեկ խորանարդ մետրի մատակարարման համար գործող 115.65 (ներառյալ ԱԱՀ) ՀՀ դրամ սակագնի փոխարեն առաջարկվել է 168.98 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Ջրահեռացման ծառայության մատուցման մեկ խորանարդ մետրի համար գործող 24.35 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) սակագնի փոխարեն առաջարկվել է 28.35 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ
ք. Երեւան, Վարդանանց փակուղի 8ա
հեռ/ֆաքս. 54-56-17

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

2 կից բնակարաններ Սայաթ-Նովա 3 շենքի առաջին հարկում՝ օրերայի հարեւանությամբ:

Ընդհանուր մակերեսը 150մ. է, առաստաղի բարձրությունը 4.50մ է: Հարմար է օգտագործել որպես օֆիսային տարածք, ռեստորան կամ խանութ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել (094)36-69-89, 56-16-81, 54-89-36 հեռախոսահամարներով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը վարձակալությամբ տրամադրում է տարածք

Հասցե	ազատ տարածք	/մ.մ/
Գեղարքունիքի մարզ, ք Վարդենիս Ռոմանի փողոց 90	առաջին հարկ	32.4

Անհրաժեշտության դեպքում զանգահարել 58-35-40 հեռախոսահամարով, կամ դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ Երեւան, Տիգրան Մեծի 4, 4-րդ հարկ, 41սենյակ: